



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

F-13

172

92

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԵՆ ԲԱՅՐԻ
Գ Բ Ա Դ Ա Բ Ա Ն
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

891.99
P-13

500730
\$1.00

ՍՈՒՐԵ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ARMENIAN PRELACY



ՏԻԳՐԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՅԻ

ՏՈՒՍ

ՊՈԼՍԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՎՅՑ ԱՐԱՐՈՒՄԸ



1910

ՏԻԳՐԱՆ ՕՆՆԻԿ ԻՍՏԱՆԻՆԻՆ ԵՒ ՈՐԳԻ

ԿԱԼԱԹԱ - Կ. ՊՈԼԻՍ



NOV 2011 892.4
13 APR 2011 F 140.0

ՅԱՆՈՒ ԲԱՆՐԱՏՈՒՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՅԻ

ՏՈՒՍ

ՊՈԼՍԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՎՅՑ ԱՐԱՐՈՒՄԸ



1910

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՆԵՆԻԿ ԲԱՐՍԵՂՆՕՆԵՐ ԵՒ ՈՐԷՐ
ԿԱԼԱԹԱ, Կ. ՊՈԼԻՍ

ԱՆՁԻՆՔ

Ներկայ ժամանակի բարեկամ

ԱՒԻԿ .— Պոլսեցի , միջակ հարստութեան տէր վաճառական մը . 60 տարեկան , ատոյճ , հեռատեսու ու կենցաղագէտ մարդ մը : Գլխուն մազերը թափած են մեծ մասամբ . այս պատճառով փէսը բնաւ չի հեռացներ գլխէն : Ածիլուած է , ալէխասն պեխերը միշտ անխնամ կրտսեւած եւ սիկասի ծուխէն սպաստած են :

ՎԱՐՍՆԵՒԿ ,— Աւիլի կինը , 55 տարեկան , քայքայուած ատոյճութեամբ սղէտ եւ ինքնահաւան կին մը :

ԶԱՐՈՒՀԻ .— Անոնց աղջիկը . 18 տարեկան , գեղեցիկ , սխալուած բայց թերուս եւ թեթեւաօրիկ օրիորդ մը : Յուցամոյ , անհեռատեսու եւ կրտսերական հողի տէր էակ մը , համոզուող ամէն խօսքի :

ՏԻԳՐԱՆ .— Զարուհիին նշանածը յետոյ ամուսինը . 20-22 տարեկան , պատուախնդիր , պարկեշտ , ուսեայ , քիչ մօրուսով բարեձեւ , ձիուն ու ճարպիկ երիտասարդ մը , որ փոքր հասակէն գաւառէն դալով , Աւիլի վաճառատան մէջ աշխատած է :

ՕՆԵԻԿ .— Զարուհիի թեկնածուն , սիրահարը յետոյ ստեւանդոյր . 25 տարեկան , ամիլուած գէմքով , կիսահանց չարժու ձեւերով , հապանդող եւ խորամանկ չարագործի թխի մը : Ախա ճարպիկ ու դիւրամեք :

ՆՈՅՆՄԻ .— Օնեիկի քոյրը , 30 տարեկան . գէր ու գեղեցիկաղէմ , խորամանկ , յամաս , վրէժխնդիր եւ չահամոյ կին մը :

ՏՈՒԹՈՐ ՄԸ .— Նոյեմիին դաւտիկը . 30 տարեկան , յունական գլխարկով , նիհար ու սրածայր մօրուսով , սեւաս գէմքով , անխնամ հագուստներով , անցածոյ , անխանկ ու չանամոյիկ թխի մը :

Սպին բասերգուքեան ներկայացման իրաւունք
Հեղինակին վերադառնուած է :

Ներկայացման առփու բանակցութեան համար
Իրանի

Առեւտրական Դարձարան , Բակիսաքի
Բերս , Կ . Պոլիս :



1989-2011

ԲԺԻՇԿԸ .— Աւիկի տան բժիշկը, ծերուկ, մօրուսաւոր, լուրջ ու բարի մարդ մը :

ՀԵՂՆԱ .— Աւիկի տան սպասուհին . 30 տարեկան . սարդամիտ , հնազանդող ու համակերպող նիհար կին մը :

ՎԱՐԳԱՆ .— Աւիկի տան սպասուորը . գուսուայի , 50 տարեկան , չաճիլուած (այսինքն 8 օրն անգամ մը կ'աճիլուէ , հետեւաբար մօրուքն երկնցած) սրտուտխնդիր , բայց հնազանդող , համակերպող մարդ մը :

ԾԱՌԱՅ ՄԸ .— Պանդսկի սպասուոր 20-22 տարեկան . անմօրուս :

ՊԱՆԴՈԿԱՊԵՏՈՒՀԻ .— Փարիզի մէջ կիսաշխարհիկ կին մը . գէր , 40 տարեկան , լիզուանի եւ յարմարող ու յարմարցնող կին մը :

ԲՂԱՐԱ .— Դերձակուհի , 30 տարեկան , նիհար , գալիահար կին մը :

ԾԱՌԱՅ ՄԸ .— Փարիզ . հարուստ տան սպասուոր մը , 20 տարեկան :

ՈՒՐԻՇ ՄԸ .— Փարիզ , հարուստ տան սպասուոր մը , 40 տարեկան :

ՄԱՐԴ ՄԸ .— Փարիզ , պանդսկին մէջ մօրուսաւոր սրիկայ մը , 30 տարեկան :

ՍՊԱՍԱՒՈՐ .— Զարուհիի տան ծառան . 20 տարեկան , աճիլուած գէմքով , գունտ գլուխ չիկահեր մէկը :

ԿԱՌԱՊԱՆ .— 50 տարեկան , խիստ գէր մարդ մը , աճիլուած գէմքով , փայլուն կոճակներով :

ԹՂԹՅԵՆԵՐ .— Մարտիլիտ , համակի ցրուիչ մը , գլխարկ կրող ու մօրուսաւոր 50 տարեկան : Բովէն կասած է համակի պաշուտակը :

ՄՈՒՐԱՅԻԿ ՄԸ .— Ալէխան մօրուքով , աղտոտ գլխարկով , սրտատատուն , գորշ հագուստներով , ձեռքը բռնած հասարակ հաստ գուազան , քովէն կախած խոշոր լիցուն սարկ մը , խիստ սղտատ թիփ մը :

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ

ՊՈՒՍԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ՛ ՏՌԱՄ ՎԵՅ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ԱՐՄՐՈՒԱԾ

Զարուհիին ու Տիգրանին հարսանեկան հանդէսը տեղի կ'ունենայ Պոլիս , Աւիկի տան մէջ : Հանդիսականները չեն երևիր , բայց անոնց ուրախութեան արտայայտութիւններն ու խրախճանութիւնները կը լսուին : Հարսընցուն՝ Զարուհին , սպիտակափայլ հալաւովը զարդարուած՝ բայց սրտամ մ ու տխուր վիճակով թիկնաթոսի մը մէջ ինկած է թուրթին :

Անեմակը կանաւորուած է ճօխ աթոռներով . մէկ կողմը կայ սեզան մը , վրան չիշով ջուր եւ գաւաթ մը :

Ա . ՏԵՍԱՐԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՆՋԻՆ

(Երկու վայրկեանի չափ իր մտածկոտ երեւոյթը անշարժ կերպով ցուցադրելէ յետոյ՝ կը սկսի՝ վիստ կերպով մեկնախօսիլ) .

Ա՛խ մայրիկ . . . ամենեւին չ'ըսիր հայրիկիս

թէ սա մեր գրագիրը, աղքատ ըլլալուն համար, պէտք չէ որ իմ ամուսինս ըլլայ. չե՞ս ալ թողոր որ բերան բանամ ու երկու խօսք ընեմ: Անպատճառ պէտք է որ հօրս հրամանին հնազանդիմ, ի՞նչ օգուտ: Հիմա, հայրս՝ հարուստ, մայրս՝ ունեւոր, ես՝ 1000 ոսկիէն աւելի ստակ ունեցայ սնտուկիս մէջ, մինչդեռ Տիգրանը բան մը չունի. այս ամուսնութեանս առթիւ, երբ հայրս ու մայրս 500 աղան ոսկի տուին ինձի՝ ան ալ ամչնալուն՝ հանեց ունեցածը չունեցածը յանձնեց ինձի, ելաւ մէջէն: (Պահ մը յուռ կեննալէն վերջ) Շիտակը տգեղ տղայ չէ, կրնայ սիրուիլ... բայց Օննիկին հետ բազդատելով ոչինչ է ան: Հայրս, մայրս ինչո՞ւ համար Օննիկին առաւելութիւնները չեն տեսներ, չեմ գիտեր: Կ'երեւի թէ՛ ալ չպիտի կրնամ տեսնել Օննիկը... ա՛խ Օննիկս... արդեօք կը սիրե՞ս զիս տակաւին. ա՛խ, Օննի՛կ, Օննիկ... (Պահ մը յուռ կեցած այտերը կը սրբե) Ա՛լ կ'երեւի թէ բոլոր յոյսս պիտի կորսնցնեմ ու ճակատագրիս առջեւ խոնարհիմ: Սակայն անտանելի բան է չի սիրուած մէկու մը կիսն ըլլալ, երբ անդին կայ մէկը՝ որուն համար հոգի կուտամ: Նոյեմի կը գրէ ինձի «մի՛ վհատիր, մի՛ յուսահատիր», բայց ի՞նչպէս. ահա՛ ամէն բան ըմբար, երկու ժամ վերջը Տիգրանի կիսն եմ այլեւս. դեռ ի՞նչ յոյս կրնամ ունենալ: (Ծռնկիկն զարնելով) Ի՞նչ յոյս... (Նոյեմի եւ Վարսենիկ կը մտնեն):

Բ. ՏԵՍԱՐՈՆ

ՆՈՅՆ, ՆՈՅԵՄԻ, ՎԱՐՍԵՆԻԿ յետոյ ՕՆՆԻԿ և ԱԻԿ

ՆՈՅԵՄԻ. Բարեւ՝ օրիորդ, կը շնորհաւորեմ: (Չերխ սեղմելով) Ի՞նչ ալ աղւոր յարմարեր է հարսի հագուստդ, բարո՛վ վայլես, անո՛ւշիկս, բայց սա ի՞նչ պաղ է ձեռքդ: Տխո՛ւր կ'երեւիս, ինչո՞ւ, կը վայլե՞ մի...
 ՎԱՐՍ. Քիչ մը անհանգիստ է... ուշանալուդ համար ալ սիրտ հատցուց...

ՆՈՅ. Այո՛, քիչ մը ուշացայ, ներողութիւն կը խնդրեմ: (Կը նսի) Չե՛ք գիտեր՝ ի՞նչ դժուար բան է այսպէս նախանձոտ ամուսին ունենալը, ինչպէ՞ս ըսեմ, ինքք չի կրցաւ գալ, զիս ալ մինակս չուղեց զրկել, ասոր վրայ քիչ մը էվէլ պակաս խօսքեր ըրինք իրարու, վերջէն նայեցաւ որ չըլլար, ելբօրս պատուիրեց որ հետս գայ. և միշտ մօտս գտնուի: Քովս անպատճառ պահապան մը դեմէ՛լ. այս բանը մանաւանդ շիտակը ջիզերուս կը դպչի:

ՎԱՐՍ. Ամուսինդ պատուաւոր մարդ է: Ասոր հետ մէկտեղ ադ խստութիւնը փրատ բերող բան մը չէ. ինձի նայէ՛, իմ ամուսինս, Աւիկ աղան ալ շատ խիստ էր. բայց հետզհետէ քանի՛ տարիքնիս առինք, իրար հասկցանք...

ՕՆՆԻԿ. (Անկիտարօրէն կ'երեւայ դրան մէջ):
 ՆՈՅ. Հո՛ս եմ, Օննի՛կ, հո՛ս եմ, դի՞ս կը փնտռես եզրայրս:

ՉԱՐ. (Վեր ցատկելով) Ա՛հ, Օննիկը...

ԱԻԻԿ. (ՄՏնէրոյ) Ի՞նչ հաւաքուեր էք հոս, ներսը հիւրերուն մէջ պէտք է գտնուիք: (Նոյնեմէն տեսնէրոյ) Ա՛հ տիկին, ներեցէ՛ք: (Ձեռքը կը սեղմէ): Բարի էք եկեր, ներս հրամեցէ՛ք, ներս հրամեցէ՛ք: (Կը մեկնի լակնակն ալ):

ԱԻԻԿ. (Ձարուհիին քեր մսած շրջագայերոյ): Քաջութիւն աղջիկս, քաջութիւն. սրաիդ յուզմունքը ուրախութենէդ ըլլալու է. բան մը չի կայ, մի՛ վախար, հիւանդ չես, փառք Աստուծոյ. վայրկեանական նուազում մ'էր ան, եկաւ, անցաւ, գնաց: Կարելի է տաքէն է, կարելի է պաղէն է, ի՞նչ գիտնամ, ի՞նչ ըսեմ: Վազը Փարիզ պիտի մեկնիս՝ Պ. Տիգրանին՝ սիրելի ամուսինիդ հետ: Հոն ի՞նչ աղուոր բաներ պիտի տեսնե՞ս... Խնդա՛ նայիմ, սիրտդ բացուի, զաւակս, ուրախացիր քիչ մը. (Կը ժպտի). հա՛հ, ապրի՛ս գաւակս, ապրի՛ս աղջիկս, ասանկ թող խնդայ երեսդ: Տիգրա՞նն ուր է: (Քիչ մը քարձր ձայնով) Տիգրա՛ն, Տիգրա՛ն: (Բոյրոսիքը նայերոյ) Պարոն Տիգրան: Եկո՛ւր ներս երթանք աղջիկս, հիւրերուն մէջ գտնուինք:

Գ. ՏԵՍԱԲԱՆ

ՏԻԳՐԱՆ, ԱԻԻԿ և ՉԱՐՈՒՀԻ յետոյ ՆՈՅՆՄԻ և ՕՆՆԻԿ

ՏԻԳ. (Ներս կը մտնէ ժպտալիւ եւ հասցնէ պոյ) Հայրիկ, քահանաներն եկան. ներսը, սրահը հրամցուցի:

ԱԻԻԿ. Շատ աղէկ, աղաս, ես կ'երթամ ներսը

կը նստիմ. դուք ալ Չարուհիին հետ սրահ եկէք քիչ մը ետքը:

ՏԻԳ. Շատ աղէկ, հայրիկ, շատ աղէկ: (Աիկ կը մեկնի) Ինչպէ՞ս եղար սիրունս, անցա՞ւ յուզմունքդ. (Ձեռքով սևոր գրուիւր գգուերով) արիացիր հրեշտակս, աս յոգնութիւնը մինակ այսօր է, վաղուընէ սկսեալ միշտ հանգիստ ու երջանիկ պիտի ըլլաս Աստուծով:

ՉԱՐ. Կը կարծե՞ս միթէ...

ՏԻԳ. Ա՛, տարակո՞յս ունիս, կեանքիս մինչև վերջը բան չպիտի խնայեմ քու երջանկութեանդ համար: Ապահով եղիր:

ՉԱՐ. Այդ ըսածդ դրամով կ'ըլլայ կարծեմ:

ՏԻԳ. Ո՛չ միշտ, Չարուհի: Մեր երկուքին համեմալս սէրը երջանկութեան մայրը պիտի ըլլայ մեզի համար. դրամը շատ գործ չունի անոր հետ. թշուառ հարուստներ շատ կան, ինչպէս աղքատ՝ բայց իրապէս երջանիկ էակներ միշտ կը գտնուին. բաւական է որ անկարելիին տեսչը չունենայ մարդ. ու իր վիճակէն գո՛հ ըլլայ: Միւս կողմէ, մենք աղքատ չենք կարծեմ, Չարուհի... սակայն մեր այս նուիրական պահուն երբ հաշիւներով զբաղինք ու աղքատի և հարուստի մէջտեղ դանազանութիւններ փնտռենք, Աստուծոյ կամքին դէմ գործած չե՞նք ըլլար Չարուհիս: (Ձեռքէն յունեւորով) Օ՛ն, ձեռք ձեռքի տանք, միացեալ սրտով ու հոգւով նուիրենք ինքզինքնիս ընկերական պատուաւոր խմբին, յանձնուինք Աստուծոյ, Անոր

միայն ապահինինք, ո՛չ երբէք նիւթականիւ
Մտնե՛նք այս նոր կեանքի ասպարէզին մէջ,
հոն արիաբար տեղ բռնենք, եւ խնդրենք որ
Աստուած մեզ երջանիկ ընէ. փառք ու պատիւ
ըլլանք մեր ծնողքին, վայլե՛նք ու վայլեցը-
նենք, ինչպէս որ պէտք է:

ՁԱԲ. (Թերերը բաւարարով) Տիգրա՛ն...

ՏԻԳ. (Փոքրապոլ շուտ գիրկընդիստնումից)
Զարուհի՛...

ՆՈՅ. (Մտնելով) Էյ ապրիք ապրիք, շիտակը
կը վայլէ՛ ալ, հիւրերը ներսը թողուք ու դուք
հոս զուարճանաք:

(Տիգրան եւ Զարուհի կը մեկնին առանց
կարեւորուրիսն սալու նոյեմիսն՝ որ սկսւաւ
հուն կը մնայ առանձին):

ՆՈՅ. (Ինքնիշխան) Ահա՛ այսպէս են կիներէն
չատերը. երկու խօսքով կը համոզուին և իրենց
սրտին ու խղճին հակառակը կը գործեն շատ
անգամ, թէպէտ ուշ կամ կանուխ իրենց գէշ
ընթացքին համար կը զղջան ետքէն. բայց...

(Անոք երեսին դնելով վիստ ու սրահ մը շուտ
դիտք մը կ'առնեն) Աստուած իմ, մէջտեղը մնա-
ցի... Զարուհին ելաւ ձեռքէս: (Թերեր զայ-
րոյրով մը սկսանելու սեղմելով) Բայց չի՛ պիտի
վհատիմ, այո՛, առանձին պիտի գործեմ, պիտի
յետաձգեմ այս պսակի արարողութիւնը եւ յե-
տոյ երկար ժամանակ պիտի ունենամ Զարու-
հին նորէն եզբօրս վրայ տաքցնելու:

ՕՆՆԻԿ. (Մտնելով) Բո՛յր իմ, կարծեմ ալ

յոյս չմնաց մեզի, կորսնցուցինք այս պատուական
գանձը. մե՛ղք... որ այս ահագին բաղդը ձեռքէ
փախցուցինք: Ախ՛ այս հարստութիւնը...

ՆՈՅ. (Միջակ բարկութեամբ) Լուէ՛ դուն Օն-
նիկ, քու ապագագ խորտակող այն ծերուկը,
անոր տգէտ պառաւը... եւ ասոնց թափթփած
գրադիր-փեսացուն իմ վրէժխնդրութեանս դէմ
չպիտի կրնան դիմանալ. դուն՝ ասոնց փեսան ու
տան-տէրը պիտի ըլլայիր, սակայն այս չար և
իրար չի հասկցող անպիտանները պատճառ եղան
որ դուն դժուարութեան հանդիպիս ու ան հրեշ-
տակի պէս ազլիկն ալ դժբաղդ ըլլայ. այո՛,
մեղք, հազար մեղք:

ՕՆՆԻԿ. (Հեծկոյսապով) Գի՛նով հայրը, օղիէն
ու գինիէն ուրիշ բան չի հասկնար...

ՆՈՅ. (Ասիճակաբար բարկութեամբ շեշտերը
բարձրացնելով) Գինի մը ե՛ս իրեն պիտի խըմ-
ցունեմ, այն ծերուկ աղուէսին՝ որ լաւ իմանայ
թէ՛ ինչե՛ր կրնայ ընել կին մը...: Կանացի
ատելութեան եւ վրէժխնդրութեան փառաւոր
բաժակը այդ հէգ մահկանացուներուն վրայ պիտի
սրսկեմ, եւ... անխնայ կերպով պիտի խան-
գարեմ այս ամէնուն հանգիստը: Իրա՛ւ է որ
կիները պատերազմի դաշտին վրայ չեն երևիր,
սակայն սիրոյ ասպարէզին մէջ՝ յաղթանակը
միշտ կնոջ կողմը եղած է: Ամենեւին պատճառ
չի կայ, որ ես այս սիրային խնդիրին մէջ ան-
ճրկիմ: (Չեղով փոքր կասկելու նշան սալով)
Եկո՛ւր հոս, Օննի՛կ, Զարուհին քու նշանածդ էր

ու ձեռքէդ առին: (Օննիկ կը փղձկի, Նոյեմի առնակաւ խոռոխոքեամբ) Բայց մի՛ լար, հո՛ս մտի՛կ ըրէ, Չարուհին քու կինդ պիտի ըլլայ պահովապէս, լա՛ւ գիտցիր թէ՛ քոյրդ, եթէ առիժ մը չէ, վագրէ մը վար չի մնար՝ երբ անոր ջիղերուն դպչին այսպէս: Քեզի տուած պատուէրներս միտքդ ե՞ն ալ:

Օննիկ. Այո՛, ուղածիդ պէս:

ՆՈՅ. Բժիշկը պատրաստ է:

Օննիկ. Այո՛, առնը ինձի կ'սպասէ:

ՆՈՅ. Լաւ ուրեմն, միշտ մօտս գտնուէ, քեզի պէտք ունիմ: (Նոյեմի կը փորայ սրահ. Օննիկ ետեւէն):

Գ. ՏԵՍՍԸ ԱՅԻՆ

ՏԻԳՐԱՆ, ՉԱՐՈՒՀԻ, ԵՄՄԱՅ ՆՈՅԵՄԻ, ԱԻԻԿ,

ՕՆՆԻԿ, ՏՈՔԹՈՐ ՄԸ և ԲԺԻՇԿԸ

ՏԻԳ. (Ոսփի փրայ եւ խիստ ուրախ) Իբրաւ, բաւական բաղմութիւն կայ Չարուհի:

ՉԱՐ. (Նոյնպէս) Բայց անոնցմէ շատերը ինձի անծանօթ են. ո՞վ են արդեօք, դու կը ճանչնա՞ս Տիգրան:

ՏԻԳ. Այո՛, ամէնքն ալ մեր բարեկամներն ու բարեկամուհիներն են, ես զանոնք գրեթէ ամէնն ալ կը ճանչնամ, վաճառական, սեղանաւոր, խանութպան, վերջապէս ամէնն ալ շնորհքով մարդիկ են. կիներն ալ բնականաբար իրենց ընտանիքէն են:

ՆՈՅ. (Ներս կը մտնէ եւ ֆրիւնկները արքեշով) Օ՛Ֆ, ներսը ո՛րքան տաք է, քրտինքներու մէջ ինկայ. եկէք սա տեղ քիչ մը շունչ առնենք Պ. Տիգրան, Օր. Չարուհի: (Նոյեմի քիկնարողի մը փրայ կ'իջնայ):

ՏԻԳ. Կ'ուզե՞ս, Չարուհի, նստի՞նք:

ՉԱՐ. Դուն գիտես Տիգրան, նստի՛նք: (Կը նստի):

ԱԻԻԿ. (Երկու հեռագիր ձեռքը բռնած անպարսկֆով ներս կը մտնէ) Տիգրան, սըտնք նայէ՛ ուրկէ՞ են, կարդա՛, թարգմանէ նայինք:

ՏԻԳ. (Կ'առնէ ու կը կարդայ), «Պ. Տիգրանի եւ Օր. Չարուհիի բարեբասիկ ամուսնութեան առթիւ մեր արագին ճնորհատրոփիւնները կը յայտնենք. ՆԱԹ. ՇԷՔԻՍ.-ԼՕՆՏՕՆ»

Աս ալ «Մօռիս սը Ժօրժ» Փարիզէն շնորհաւորութիւններ:

ԱԻԻԿ. Ատոնց պատասխանը շուտ մը գրէ տղաս, «Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք» ըսէ, բեր որ ստորագրեմ. կամ թէ իմ կողմէս ստորագրէ՛: (Տիգրան կը մեկնի հրամանը կատարելու) (Առիկ մեկնելու փրայ, փորկոս) Դուք հանգիստ ըրէք, հիմա կուգայ Տիգրանը. ես ալ կուգամ: (Կը մեկնի):

ՆՈՅ. (Ծանր եւ մեղադրական շեշտով) Չարուհի, միտքդ փոխեցիր կարծեմ, հաստատա՛միտ չե՞ս եղեր:

ՉԱՐ. Չե՛մ գիտեր...

ՆՈՅ. (Դադանի ըսելու պէս, խորհրդաւոր) Տիգրանը կը սիրե՞ս...

ԶԱՐ. (Յաժ մայնով եւ գլխի նշանով) Այո՛ւ
 ՆՈՅ. Օննիկը... Օննիկը չե՞ս սիրեր. Եզ-
 բայրս կը մեռնի կոր քեզի համար. Ի՞նչպէս
 կրնաս անկէ զատուիլ :

ԶԱՐ. Տիկին նոյեմի, քանի մը անգամ ձեր
 խորհուրդով սուտ մարիլ ձեւացայ. (Սաօրահար
 առջեւը նայելով) Բայց հիմա կարծես իբաւ,
 իբաւ պիտի նուազիմ. սիրտս բան մը կ'ըլլայ
 կոր, շփոթած եմ ինքզինքս, ներեցէք :

ՕՆՆԻԿ. (Կ'երեւի դրան մէջ)

ՆՈՅ. Այո՛ Զարուհի, իրաւունք ունիս, գոյնդ
 գեղի-գեղին եղեր է, քիչ մը լիմօնաա խմէիր
 որ կ'ազդուբուիս, (Նոյեմիին նշանիկն փրայ
 Օննիկի գաւաթին մէջ ջուր կը շեցնէ, յետոյ
 գրպանէն դեղ մը հանելով շուտ մը կը շեցնէ
 մէջը եւ ոսքին մասնէրուն փրայ կոխելով.
 առանց Զարուհիէն նշանաւորելու, նոյեմիին
 կոտայ) Առ նայիմ, աղջիկս, քիչ մը լիմօնաա
 խմէ որ ոյժ առնես, ես միշտ հետդ եմ, հոգդ
 մի՛ ընէր. (Զարուհիին կը խոցնէ գաւաթին
 կէսը, սա մեքենաբար կը հպասակի ու ահա
 կ'իյնայ. կը նուաղի քիկնաթոռին գիրկը :

ՕՆՆԻԿ. (Ահ ու դուրսի մէջ հեծկոտակ եւ ցած
 մայնով) Մեռա՛ւ...

ՆՈՅ. (Յուցամասը բերնին սանելով) Սու՛ս...
 մի՛ վախնար : (Ոսքի եղելով ու Զարուհիին դէմ-
 քը շոյելով) Զա՛րուհի, Զա՛րուհի... մարած է.
 (Չեոքով հեռանալու նշան կոտայ եղբորը որ
 մեկնի, նոյեմի խկոյնի գաւաթին մէջ մեացած

հեղուկը կը քափէ, իիչ մը պարզ ջուր կը շեց-
 նէ ու Զարուհիին քով գալով սքափեցնելու
 մտեր կ'ընէ, կեղծ ջանկերով) Զա՛րուհի, աղ-
 ջիկս, ինձի նայէ՛, քիչ մը ջուր ա՛ն բերանդ՝
 անմիջապէս խելքդ գլուխդ կուզայ :

ԱԼԻԿ. (Ներս մ'սնելով) Ի՞նչ է, ի՞նչ եղաւ...

ՆՈՅ. Բան չի կայ, հոգ մի ընէք Աւիկ աղա,
 բժիշկ մը, ներսը բժիշկ կա՞յ արդեօք...

ԱԼԻԿ. (Թախսանմանով) Մի՛, ինձի նայէ
 վախնալու բան չկայ, աղմուկ մի՛ հանէք. մէկ-
 երկու անգամ ալ ասանկ եղաւ, բայց բժիշ-
 կը չեկած արթնցաւ, անշուշտ յուզմունքէն է,
 (Կը մօտենայ աղջկան) Զարու՛հի, Զա՛րուհի, վա՛խ
 աղջիկս, քրտինքներու մէջ ինկաւ այս անգամ :

ՔԱՆԻ ՄԻ ՀԻԻՐԵՐ. (Ներս մ'սնելով) Օ՞Ֆ,
 ներսը որքա՛ն տաք է :

ԱԼԻԿ. (Ներս մ'սնողները դիմաւորելով) Ներ-
 սը, միւս սրահը աւելի զով է, հոն հրամեցէք,
 անդին հրամեցէք (Կը մեկնի) :

ՆՈՅ. (Առիկի խօսած միջոցին՝ եղբայրը սեւ-
 նելով ներս մ'սնողներուն մէջ. կրսէ ակոռ ֆո-
 վրնէի) Բժի՛շկը, Օննի՛կ, (Օննիկ կը մեկնի) :

ՎԱՐՍ. (Ներս մ'սնելով կը փութայ գրկեղ
 աղջիկը) Ա՛յո, աղջիկս... աղջիկս... կը մեռնի
 կոր... մեռա՛ւ աղջիկս... բժիշկ մը, բժիշկ մը
 հասցուցէք...

ԱԼԻԿ. Ինձի նայէ, վարսենիկ, բան չի կայ,
 մի՛ վախնար, հիմա կ'անցնի :

ՏԻԳ. (Ներս մ'սնելով խելոյն) Ի՞նչ կայ...

ի՞նչ եղաւ, ինչպէս կ'ըլլայ... մարած է... բան մը չունէր. աղէկ էր, ուրախ, զուարթ... ո՛հ, հոս բան մը ըլլալու է: Տոքթոր մը, բժիշկ մը վարդան, բժիշկը, բժիշկը, (Իտուս կը փազէ այրայրած) (Տոքթոր մը եւ Օննիկ կը մտնեն):

ՆՈՅ. Բժիշկը եկաւ, հոգ մի՛ ընէք. հիմա կ'անցնի: Տոքթոր, Օրիորդին հետ նստած էինք հոս, հանդարտիկ կը խօսակցէինք. միայն ժամանակ, ժամանակ «Սիրաս բան մը կ'ըլլայ կոր, անհանդիստ եմ» կ'ըսէր. եւ յանկարծ մարեցաւ. քիչ մը ջուր խմեց, ո՛չ, պիտի խմէր...

ՏՈՒՔ. ՄԸՆ. (Նոյեմիին խօսքը ընդմիջելով եւ միւս կողմէ հիւանդը լնկելով) Պարզապէս կը քնանայ, դուք ավենեւին հոգ մի ընէք, միայն թոյէք որ 2-3 օր անկողինի մէջ հանդիստ պառկի: (Կրկին լնկելով երակը) Դեզ անգամ, չուզեր ինքնիրեն պիտի արթննայ օրիորդը եւ ձեզի երազի պէս բաներ պիտի պատմէ. ա՛յս բան: Ներեցէք որ մեկնիմ: (Գլխարկը գլուխը դնելու պէս մտեր մ'ընկելով):

ԱԻԿ. Տոքթոր, վտանգ կա՞յ, շիտակն ըսէք, կ'աղաչեմ:

ՏՈՒՔ. ՄԸՆ. Պատուո՞յ խօսք, բնաւ վտանգ չի կայ, միայն թէ պսակը 2-3 օր վերջը կ'ընայ կատարուիլ:

ԱԻԿ. Բայց անկարելի է ատիկա, քանի որ վերջին պսակն է աս. եկող շաբթու Մեծ-Պահք է, եւ յետոյ հարսնիք բռնած ենք. հանդիսա-

կանները, քահանաները, հոն, սրահը պսակին կը սպասեն...

ՏՈՒՔ. ՄԸՆ. (Անկող կերպով մը) Ուրեմն նոր պսակին. քանի մը շաբաթ վերջը թող ըլլայ. ի՞նչ ընենք, համբերութիւնը կեանք է: (Կը մտնեն Տիգրան եւ Բժիշկը)

ԲՅԻՇԿ. (Կը փոքրայ հիւանդին մօտ. կը ինկնէ երակը, շունջը տեսնելու, շունջը եղանակով) Վախ չկայ, հանդիստ եղէք: Դուք ամէնքդ ալ հանդիսականներուն մէջ դացէք, եւ ուրախութիւննիդ շարունակեցէք անվրդով, միայն Պ. Տիգրանը թող կենայ քովս օգնելու համար ինծի: (Գտնուելով Տոքթոր մը ինկնելու) Օ՛, դո՞ւք ալ հոս. (Կը մեկնին, բայց Արիկ եւ Վարսենիկ դրան մէջ կը կենան եւ շփոթ կերպարանով բժիշկին կը նային սկնդէս)

(Բժիշկը «ամօնեալ» շիշը գրպանէն հանելով կամաց մը հիւանդին փրփի կը մօտեցնէ. Չարմիկ կը շարժի, հայրն ու մայրը սողիակ փարեղա պահուստ են. Տիգրան կէս-ժպիտով անկող կը նայի, մտնելով կ'արգիղէ շարժումնին. գլխով նշան կուտայ թէ՛ կ'արքննայ:)

ՉԱՐ. (Վերջապէս կ'արքննայ ու կը նստի, քերտըրը բանալով) Տիգրան... .

ՏԻԳ. Չարմիկ... (Գիրկընդիսանում)

ՉԱՐ. Մայրիկ...

ՎԱՐՍ. Աղջիկ... (Գիրկընդ. երեքի):

ԱԻԿ. (Բժիշկը գրկելով) Ա՛հ Տոքթոր, շնորհակալ եմ, երախտապարտ թողիք մեզ...

1102-6861

Բժիճկ. Չարժեր, մենք մեր պարաքը կը կատարենք ամէն տեղ եւ ամէն ատեն :

ԱԻԻԿ. Պսակը կընայ կատարուիլ այնպէս չէ՞ :

Բժիճկ. Ինչո՞ւ չէ, բնաւ արգելք մը չկայ, միայն թէ սա դեղը (Իեղագիր կը գրէ) («Տոբ-րոր մը»-ն կամաց մը կը մեկնի), այս դեղը 1-2 օր թող դորժածէ օրիորդը, բոլոր պատահականութեանց դիմագրաւելու համար: Թէպէտ պէտք անգամ չունի:

ԶԱՐ. (Բժիշկին ձեռքը սեղմելով) Շնորհակալ եմ, Տօքթօր:

Բժիճկ. Կը շնորհաւորեմ Օրիորդ:

ՆԵՐԿԱՅՔ. Շնորհակալ ենք, Տօքթօր:

Բժիճկ. Մնաք բարով:

ՆԵՐԿԱՅՔ. Յետու թիւն Տօքթօր էֆէնտի:

(Բժիշկը կը մեկնի փոքրով)

ԱԻԻԿ. (Չարմհիին քեր մեկնելով) Անգամ մը հանդիսականներուն երեւանք, այնպէս չէ՞ աղջիկս:

ԶԱՐ. Այո՛ հայրիկ: (Միւս քերն ալ Տիգրանին երկնցնելով) Տիգրան... (Սա եւս քեր կը մեկնէ եւ երեքը միասին սրահ կ'երրանէ):

ՎԱՐՍ. (Ասկնց ետեւէն դիտելով եւ ձեռքերը պարզելով) Փա՞ռք քեզ Աստուած: (Վարսէնիկ ալ կը հետեւի անկնց) (Պահ մը վերջ)

ՏԻԳ. (Իմրսէն) Է շատ աղէկ, նամակի մը համար մարդ կը կանչե՞ն հիւրերուն մէջէն: (Ձեռքը նամակ մը բռնած ներս մեկնելով անապարսնօֆ եւ նամակը բանալով ու գտնաւորելով)

իննիստեմ) Այսօր ընաւ հանգիստ չկայ. հեռագիր կարգաւ, այցեատման կարգաւ, նամակ կարգաւ: (Նամակը այլեւս անցնելէ վերջ) Վա՛յ ապուշ վայ: Ի՛նչ ըսել կ'ուզէ չեմ հասկնար: (Նամակը բարձրաձայն կը կարդայ սպառնալով)

«Պ. Տիգրան,

Ամուսնական կեանքիդ հորիզօնը անպոս կը տեսնեմ. այս վաշտեանն սկսեալ զգուցացիր եւ զգուցացուր: Բարեկամ մը»

Ապուշ բարեկամ մը, որ, փոխանակ շնորհաւորութեան պարաքը կատարելու, փոխանակ ամուսնութեանս առթիւ, գոնէ հարսին բարեմաղթութիւններ ընելու՝ գուշակի դերը կ'ըստանձնէ եւ ամէնուն ծանօթ սկզբունք մը յիշեցնելու կ'երլայ, այն ալ առանց ինքզինքը յայտնելու: Գիտնալու էի այս վհուկ բարեկամիս հասցէն որ, հասկցնէի իրեն թէ՛ իրաւ է որ ես իմ ճակատագիրս չեմ կրնար սրբագրել, բայց բաւական ոյժ ու կորով ունիմ անոր գլխուսը զգուցանելու մաքառելու. ապացոյց ահա այս թշնամական նամակը: (Ոսկին սակը ձգելով եւ վրան կոխելով) Ահա այսպէս ոտնակոխ կ'ընեմ, անոր թագուն նպատակն ալ հեռը փշթելով:

ԱԻԻԿ. (Ներս կը մեկնէ անապարսնօֆ) Ի՞նչ կ'ընես, Տիգրան, ներս չի գա՞ս:

ՏԻԳ. (Գեւորէն նամակն առնելով) Սա նամակը կարգացի հայրիկ, (Բողոքով ձայնով) Նայէ ի՛նչ գրած են:

ԱԻԻԿ. Ի՞նչ կըսէ : (Ակնոցը ֆրիև դնելով)
Ո՞վ է գրողը :


ՏԻԻ. Ստորագրութիւն չկայ. «Բարեկամ մը»
կ'ըսէ ինքնիրեն :

ԱԻԻԿ. (Գլուխը ծռելով նախակն այժե անցը-
նելէ յետոյ, առանց դիրք փոխելու, ակնոցիև
փրայեև Տիգրանիև սելետելով այժերը եւ շուրջ
եղանակով ու ծակն շեշտով) Զարուհիին նուազ-
ման հետ կապ չունենա՞յ այս գիրը...

ՏԻԻ. (Այժերը խոշոր խոշոր բացած, ուտելը
վեր ցցած ու անտէրը հորիզոնական դիրքով—
երկու բայը անդին—դիմացը արձանացած) Ը՞... .



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Փարիզ, պանդոկի մը լաւ կահաւորուած սենեակին
մէջ նստած են այր և կին :



Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ, ԶԱՐՈՒՀԻ, յետոյ ԵՍՈՍՅ ՄԸ և ՈՒՐԻՇ ՄԸ

ՏԻԻ. Է՛ սիրելիս, Մարտիլիայէն շատ ախոր-
ժեցար, այնպէս չէ՞ :

ԶԱՐ. Այո՛ Տիգրանս, հիանալի քաղաք մ'է
Մարտիլիա, ան ծովեզերքի գեղակերտ տունե-
րը, անհամար նաւերու եւ նաւակներու երթե-
ւեկութիւնը. ժողովուրդին համարձակ ու աչ-
խոյժ երեւոյթը, կիներու բարեձեւութիւնն ու
ինքնազատ շրջագայութիւնը, մէկ խօսքով զիս
այնպէս մը հրապուրեցին, որ թէեւ ամբողջ
ամիս մը կեցանք հոն, կարծես մէկ ժամու ազ-
դեցութիւնը կ'ընէ վրաս. 30 օրն ինչպէ՞ս ան-
ցաւ՝ չեմ գիտեր :

ՏԻԻ. Միւսիւ կամպէրին երեկոյթը կը յի-
շե՞ս Զարուհիս :

ԶԱՐ. Ինչպէ՞ս չէ, պարզապէս սրանչելի էր.
Մատամ Պլանչին տան շքեղութիւնը անոր սպա-

սաւորներուն վայելուչ ու գեղեցիկ շարժումները . մինչեւ անգամ խօսակցութեան եղանակը , յարգելու եւ յարգուելու գիւրաթեք ու փափկանկատ վարմունքը , երեկոյթին գիշերը բաց ու մերկ ուսերով ու կուրծքով , քնքոյշ կիներուն կենցաղավարութիւնը . ա՛հ , գիւթակա՛ն , ակնապարար տեսարաններ են ասոնք , հրապուրիչ ու զգլխիչ : (Խնդարոյ) Ա՛հ , ինչ անո՛ւշ է կեանքը . . .

ՅԻԳ. Պիտի տեսնես որ փարիզ շատ աւելի գերազանց է Մարսիլիանէն ամէն տեսակէտով : Վազն առտու կանուխ եկեղեցի պիտի երթանք . յետոյ կ'այցելենք մայրաքաղաքիս նշանաւոր վայրերը , թանգարանները , հասարակաց պարտէզները , զբօսատեղիներ , ուր՝ միշտ զբօսուցիչ միլենոյն ատեն հրահանգիչ ու հաճելի բաներ պիտի տեսնենք : Ահա այս ամէն հաճոյքով , մեր վայելած համակրանքով երջանիկ չե՞ս Ձառուհիս , ըսէ՛ . անկեղծապէս յայտնէ սիրելիս :

ՁԱՐ. Ա՛հ , կատարելապէս . . .
(Կուռք կը զարնուի) :

ՏԻԳ. (Տիրաբար) Մտէ՛ք :
ԾԱՌ. (Ներս կը մ'սնէ եւ գլխով կը բարեւե) Պարոն Տիգրան եւ տիկին Ձարուհի . . .
ՏԻԳ. (Երկուքն ալ ոսփի կ'եղլեն յարգանքով) Այո՛ , հրամեցէ՛ք , արդեօք սրո՞ւն հետ պատիւունինք տեսնուելու :
ԾԱՌ. (Խոնարհելոյ) Ձեր Մեծութեանց յարգանք մատուցանող սեղանաւոր Պ. Վէնսանի տան

սպասաւորն եմ : (Այցաքարդ մը կուսայ Տիգրանին եւ խոնարհելոյ էս էս կ'երբայ)

ՏԻԳ. (Կը կարդայ բարձրաձայն . նստելոյ)

«Մարսիլիանէն հեռագիր մը կը ծանուցանէ ինձ Ձեր Մեծութեանց Փարիզ ժամանումը : Մեր ընտանեաց մեծարանքը յայտնելով՝ պատիւ ունիմ հրաւիրելու զՁեզ եւ Ձեր ազնիւ Տիկինը՝ վաղեմի բարեկամիս դուստր եւ փեսան , պատուել վաղը գիշեր ժամը Տ ին , մեր բնակարանը , ուր տղի պիտի ունենայ երեկոյթ մը՝ ի յիշատակ Ձեր ազնուութեանց Փարիզ այցելութեան : Այս խնջոյքին ներկայ պիտի գտնուին սեղանաւոր եւ վանառական 30 ի չափ պատուաւոր անձինք՝ ընտանեօք հանդերձ : Տէր եւ Տիկին Վէնսան կը խնդրեն յարգանքով որ հանիք ընդունիլ սոյն հրաւերը » :

Վ.Ն.ՍԱՆ

ՏԻԳ. Պարո՛ն . . .

ԾԱՌ. (Քայլ մը առաջ գալոյ) Տէ՛ր . . .

ՏԻԳ. Ի՞նչ կ'ըսես Ձարուհի , երթա՞նք :

ՁԱՐ. Ա՛ , մերժել կ'ըլլա՞յ , ինչո՞ւ եկանք փարիզ , զուարճանալու համար , այնպէս չէ՞ :

ՏԻԳ. Պարո՛ն իմ եւ տիկինին շնորհակալութիւնները հաճեցէք յայտնել Մ. Վէնսանին եւ Տիկինին , ըսէք որ հաճութեամբ կ'ընդունինք իրենց հրաւերը :

ԾԱՌ. Շատ շնորհակալ եմ Տիկինն : (Խոնարհելոյ) Ծառայ եմ Տէ՛ր , վաղը իրիկուան դէմ պիտի գամ Ձեր մեծութիւնները առաջնորդելու Տիրոջս անձնական կառքով :

ՏԻՎ. Շատ աղէկ. (Ծառակն ետ ետ խաշուելով
եւ բարեւելով կը մեկնի). Ի՞նչ քաղաքավար ու
չնորհչքով մարդ մըն է ու ծառայ եղած է:
(Իռուր կը զարնուի) Մտէ՛ք.

(Ուրիշ ծառայ մը կը մտնէ):

ԾԱՌ. (Խոնարհելով) Տիկին վէնսանէն իմա-
ցանք Ձեր Մեծութեանց Փարիզ գալը: Տէրս՝
վաճառական Մ. Բասթալ կը խնդրէ որ՝ այս ե-
րեկոյ մեզի հիւր ըլլաք. Նորին Ազնուութեան՝
Աւիկ աղայի շատ մտերիմ ըլլալուն համար
անպատշաժ չի սեպեց հրաւէր ուղղել Ձեզ այս-
պէս, ծառայականիս միջոցաւ: (Այցեւորն մը
երկարելով) Ահաւասիկ տիրոջս այցեատմը:

ՏԻՎ. (Այցեւորնը զննելէ ետ) Ա՛հ, Միւսիւ
Բասթալ. կը յիշե՞ս Չարուհի. Միւսիւ Բասթալ,
Պոլիս եկած միջոցին, քանի մը անգամ տաւն ալ
եկաւ:

ՉԱՌ. (Վեր ցատկելով եւ այցեւորնը առնե-
լով) Հա՛, ան Միւսիւ Բասթալն է:

ՏԻՎ. Հապա՞, ան մեր ազնիւ բարեկամը...
Ինծի նայէ՛ պարոն, հի՛մա միասին պիտի գամ
քեզի հետ: (Ոսփի փրայ՝ փրակ գլուխը շփելով)
Ես հի՛մա, հի՛մա կը վերադառնամ Չարուհիս:
Տունը մօտէ, այնպէս չէ՞ պարոն:

ԾԱՌԱՅ. Այո՛ Տէր իմ, հոս մօտ է:

ՏԻՎ. (Ինչպի Չարուհին յառաջանալով) Է,
հի՛մակ, հի՛մակ անմիջապէս կուգամ Չարուհիս,
անհանգիստ չ'ըլլաս: Դուն հոս...

ՉԱՌ. (Ոսփի ելլելով) Շատ աղէկ Տիգրանս,
շատ աղէկ. (Նազակեփով) բայց մի՛ ուշանար:
(Ծառակն կը բարեւէ Չարուհին եւ կը մեկնի:)

ՉԱՌ. (Ինքնիշխան) Իրա՛ւ ամուսնական կեանքը
քաղցր է եղեր. երանի թէ բոլոր ընկերուհի-
ներս մասնակից ըլլային այս երջանկութեանս,
այսինքն հոս ըլլային ու տեսնէին զիս այս հի-
անալի դիրքիս մէջ: Նոյեմին, Վերժինը, Վար-
դուհին, Արաքսին, Էօթէնին, աս ընկերուհի-
ներուս նամակ պիտի գրեմ՝ պիտի նկարագրեմ
այս բոլոր վայելքներս. ինծի եղած պատիւ-
ները, ամէնքը, ամէնն ալ: Բայց Մարտիլիայի
խնջոյքներուն մէջ տեսայ թէ՛ կիները ի՛նչ-
պէս յարգելի կ'ըլլան ամէնուն: Կը հասկնամ
թէ՛ էրիկ մարդիկ կը պաշտեն այն կիները,
որոնք փայլուն ու բաց հազուստ կը կրեն ու...
չողչողուն ակնարկներ կը սիրենն ալ ու ձախ:
(Իրակն մօտ ելեփսրակակն զակզակը զարնելուն
փրայ՝ ծառայ մը ներս կը մտնէ) Խնդրեմ, տի-
կին պանդոկապետուհին ինծի հաճեցէք՝ զրկել
քիչ մը:

ԾԱՌԱՅ. Շատ աղէկ Տիկին, հի՛մա՛, անմիջա-
պէս: (Կը մեկնի)

(Չարուհի, հայելիին նայելով, քերտուն,
կործիկն եւ միւնչեր փորիկն փրայ յափշփելու
ձեւեր կ'ընէ:)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԶԱՐՈՒՀԻ, ՊԱՆԴՈԿԱՊԵՏՈՒՀԻ, յետոյ ԾԱՌԱՆ,
ՔԼԱՐԱ և ՏԻԳՐԱՆ

ՊԱՆԴՈԿ. Տիկինը արդեօք հրամա՞ն մ'ունի
ինձի. պատրաստ եմ:

ԶԱՐ. Այո՛, Տիկին Պանդոկապետուհի. կուրծ-
քը եւ թեւերը բաց, տէգօլթէ գօթիւմ մը
չինել տալ կը փափաքիմ:

ՊԱՆԴՈԿ. (Ընդմիջելով) Շատ աղէկ Տիկին,
(Մասը եղեֆտական կոճակին վրայ կը դնէ)

ԶԱՐ. Արդեօք կրնայի՞ք ինձի ներկայացը-
նել վտահելի դերձակ մը. ես հոս օտար եմ,
մարդ չեմ ճանչնար:

ՊԱՆԴՈԿ. Հա՛րկաւ, հարկաւ, ապահով եղիք,
հիմա կը կատարեմ Ձեր հրամանը: (Ծառան
կը մտնէ ներս) (Ծառայիկ) Դ. յարկը, թիւ 21,
Օրբորդ Քլարան ինձի կանչէ: (Ծառան կը
մեկնի) Շատ աղէկ մտածեր էք Տիկին, ար-
դէն հոս պանդոկիս մէջ վարձակալ մ'ունիմ,
որ լաւ կար կարող է, ինձի ալ պարտք ունի,
անոր կարել կուտաք, ես ալ առնելիքս գանձե-
լու աւիթ կ'ունենամ ու քեզի համար աղօթք
կ'ընեմ:

ԶԱՐ. (Հեզմելով) Ըսել է թէ աւիթէն օգուտ
պիտի քաղէք, տիկին պանդոկապետուհի:

ՊԱՆԴՈԿ. Է՛հ, ինչո՞ւ չէ. Ձեր շնորհիւ, Աղ-
նիւ տիկինս:

ԶԱՐ. Ատիկա հոգ չէ, բայց գոնէ վարպե՞տ
դերձակուհի մ'է:

ՊԱՆԴՈԿ. Ա՛, ատոր բնաւ մի՛ կասկածիք,
կրնամ ըսել թէ Փարիզի առաջին մօտիսթն է:
ՔԼԱՐ. (Ներս մտնելով կը բարեւէ գլխով)
Օրբորդ,

ՊԱՆԴՈԿ. Օրբորդ Քլարա, աղնիւ տիկինը կը
փափաքի փաքրիկ յանձնարարութիւն մ'ընել
Ձեզ, օտարուհի մ'է, աղուորիկ Հայուհի մը.
տես ի՛նչ անուշիկ է նայուածքը: Պուսեցի է...:

ՔԼԱՐ. Տիկինը, (Գլխով բարեւելով) Գըլ-
խա՞րկ կ'ուզէք թէ...

ԶԱՐ. (Ընդմիջելով) Շրջադգեստ մը կուզեմ,
Օրբորդ: Երեկոյթի մէջ հագնելու համար փա-
րիզեան ճաշակով շրջադգեստ մը: Պարահանդէսի
յատուկ սիրուն գօսքիւմ մը...

ՔԼԱՐ. Ա՛, շատ աղէկ տիկին, ուրեմն չտիդ
առնեմ. (Մեքրայափր մետրը Զարուհիին կը
մօտենայ)

ԶԱՐ. Վաղը իրիկուան պէտք է հասցնել:

ՔԼԱՐ. (Ետ ետ երթալով) Օ՛, անկարելի է
այդ, հիմա արդէն իրիկուն եղաւ. վաղը տօն
ունինք եւ դուք կ'ուզէք անպատճառ տօնի օրն
ալ աշխատցնել զիս, առանց պատարագ տեսնե-
լու: (Նեղասուտով) Քանի մը օր առաջ կրնայիք
յանձնարարել, եթէ կարելի չէ 2-3 օր յետա-
ձգել:

ՊԱՆԴՈԿ. Օրբորդ Քլարա, իրաւունք չունիք
նեղանալու, նկատեցէք որ Տիկինը դեռ այսօր

եկաւ Փարիզ և թէ առիթը պէտք չէ փախցնէք անոր հագուստ մը շինելու, մանաւանդ թէ առատածեռն է Տիկինը. պիտի վճարէ ինչ որ ուզէք :

Ք.Ա.Ր. Ա՛, առ ուրիշ խնդիր, ուրեմն այս գիշեր և վաղը մինչեւ կէսօր աշխատելով կը հասցնեմ :

ՊԱՆԴՈՎ. Հապա տեսա՞ր մի. գիշեր մը և ցերեկ մը միայն աշխատելով 3 ամսուան վարձքըդ վճարած պիտի ըլլաս ինձի, Պոլսեցի այս Ազնուափայլ տիկինին շնորհիւ :

Ք.Ա.Ր. (Չափը առնել կ'սկսի) Գոյնեքէն ո՞րը կը սերէք Տիկին :

ՉԱ.Ր. Կարծիրը կամ մորթի գոյնը :

ՊԱՆԴՈՎ. Օ՛... էրիկ մարդոց աչքերը պիտի շլացնէք Տիկին :

ՉԱ.Ր. (Կը խնդայ թարմութեամբ) Հա՛, հա՛, հա՛... Գէշ չէ ատ :

Ք.Ա.Ր. (Ուսէն կործին կը չափէ)

ՉԱ.Ր. Քիչ մը բաց, աւելի վար : (Թերը կը չափէ) Ո՛յ, թեւերս մերկ պիտի ըլլան :

Ք.Ա.Ր. Շատ աղէկ, շատ աղէկ : (Ուսին չափը կ'առնէ)

ՉԱ.Ր. Ուսիս վրայ կապ չեմ ուղեր :

Ք.Ա.Ր. Ի՞նչպէս. ուսերուդ վրայ վարդա-գոյն ծաղիկ մը կը յարմարցնեմ կապը ցոյց չի տալու համար :

ՉԱ.Ր. Ուրի՛շ տեղ գիր ծաղիկը, ուսերս, թեւերս ու կուրծքս ըլլորովին բաց կ'ուզեմ :

Ք.Ա.Ր. (Թերը զայրոյրով) Բայց Աստուած իմ, առանց թեւի, առանց ուսկապի... ուրեմն (Փորը ցոյց տալով) կիսազգե՞ստ մը պիտի ըլլայ ասիկա...

ՊԱՆԴՈՎ. Քլարա՛, տիկինն հակառակ մի՛ խօսիր :

Ք.Ա.Ր. Շատ աղէկ, շատ աղէկ, կարողչէքը տիկին պանդոկապետուհիին կը թողում, բայց կերպասին համար 50 Ֆրանքի պէտք ունիմ :

ՉԱ.Ր. Ուզածդ դրամ ըլլայ սիրելիս, ահա-ւասիկ : (Գրաս կուտայ) Վաղը իրիկուն այնպէս չէ՞, օրիս՛րդ :

Ք.Ա.Ր. (Ուրախ) Նայնիսկ իրիկունէն առաջ, գրեթէ կէս օրին պատրաստ է : Առ այժմ մնաք բարով :

ՉԱ.Ր. Շատ աղէկ շնորհակալ եմ, օրիս՛րդ, ցտեսութիւն : (Քարս կը մեկնի)

ՊԱՆԴՈՎ. (Ոտի տըրտմամբ) Չի ձանձրանա՞ք, տիկին, պանդոկին սրահը վարձակալներու տրամադրութեան տակ է : Երբ որ ուզէք, կրնաք հոն իջնել ու դաւաթ մը դարեջուր կամ ո՛ր և է ըմպելի խմել : Հարուստ էք կարծեմ, Աստուած աւելցնէ՛ : Ես աղքատ եմ : Գեղեցիկ էի, երբ ամուսնացայ հարուստ երիտասարդի մը հետ, որ, կ'երեւի թէ զիս չէր սիրեր, թողուց զիս. հիմա ուրիշ մը ընտրած եմ, որուն հետ կը կենակցիմ առ այժմ, բայց դժգոհ եմ, այն ալ պիտի թողում, պանդոկս զիս կ'ապրեցնէ, փա՛ռք Աստուծոյ : (Չարտնի, հայտնիին դեմ)

անգամ մըն աղ կործիր եւ ուսերը յափելոռ պէս կ'ընէ) Այո՛, գեղեցիկ էք, տիկի՛ն, կը խոստովանիմ, սրահիս զարդը պիտի ըլլաք այս գիշեր: Պարոնը՝... Ա.Ռուսինդ պիտի վերագառնա՞յ արդեօք այս գիշեր:

ՁԱՐ. Այո՛, հիմա՛:

ՊԱՆԴՈՎ. Ուրեմն վար իջնենք, սրահը, հիւրերուս ներկայացնեմ Ձեզ: Ձեր Պ. Աճուսինն ալ կարծեմ հոն է, կամ հոն պիտի գայ արդէն: Հետեւէ ինծի աղուորս, ապրինք կեանքը, վայլենք Փարիզը, հաւատա՛ խօսքիս, երկու անգամ չպիտի դանք աշխարհ: (Ձեռքէն փաշտելով) Եկուր Փարիզի կեանքը տեսնես սրահին մէջ:

ՁԱՐ. Ա՛հ, շատ կը փափաքիմ ատար, բայց եթէ ամուսինս վրայ գայ ու զիս հոն տեսնէ՞...

ՊԱՆԴՈՎ. Մի՛ վախնար, քեզ անոր չենք ցուցներ: Եկու՛ր, հետս եկուր դուն:

ՁԱՐ. (Հայելիին առջեւ երրայտով) Կեցի՛ր, մազերս շտկեմ, գամ:

ՊԱՆԴՈՎ. Ծուռ ըրէ, ես կ'երթամ, դուն ալ ետեւէս հասիր: (Դուրը կը բանայ)

ՁԱՐ. (Ձեռքերը մազերուն վրայ դեպի դուրը փաշտելով) Կեցի՛ր մէկտեղ երթանք, ահա կուգամ կոր: (Կը մտնէ Տիգրան, պանդոկապետուին կը մնայ դրան ետեւ ապշած, Չարուհի սրահին մէջտեղ կը կենայ յանկարծակիի եկած:)


ՏԻԳ. Սա մեր բազմը նայէ, սրո՞ւ, մտքէն կ'անցնէր, Միւսիւ Բասթալին դրացի եղեր ենք:

ՁԱՐ. Իրա՞ւ:

ՏԻԳ. Հապա, սա կարգը երրորդ տունը կը նստի: Անպատճառ միասին պիտի ճաշենք ըսաւ, Եկայ սը քեզ տանիմ: (Պանդոկապետուին, Տիգրանին ետեւը կեցած, ձեռքով, գլխով տեսնուողին կը յայտնէ ձեռքով, եւ կամաց մը դունէն դուրս կը սպրդի, առանց Տիգրանէն նշմարուելու:)



ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Փարիզ նոյն սենեակին մէջ՝ այր և կին մէքմէկ կողմ՝
քաշուած ու նստած :



Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ և ԶԱՐՈՒՀԻ

ՏԻԳ. (Տխուր եւ ծանր) Երեկոյթին գիշերը ,
կիներէն ոմանք սաստիկ բարկութիւն ցոյց
կուտային իրենց երկան , յաճախակի ուղղուած
գաղտագողի նայուածքներէն գուշակեցի թէ
մեզի համար էր ան , բայց չի կրցայ հասկնալ
թէ՛ արդեօք պատճառն ին՞չ էր : Իրաւ է որ , նոր
կարել տուած հագուստիդ գոյնը շատ սուր էր ,
մանաւանդ շատ բայ շինուած էր , անճոռնի
դերձակուհին ո՞րքան անճարակ է եղեր որ , չէ
յաջողած պարկեշտ ու վայելուչ հագուստ մը
պատրաստել քեզի :

ԶԱՐ. Ընդհակառակն , երեկոյթին գիշերը
մեր ներկայութենէն ամէնն ալ ախորժեցան ,
չի տեսա՞ր , այրերը , իրենց կիներով միասին ,
միշտ ինձի ու քեզի հետ խօսակցելու առիթ

կը փնտռէին , պատճառներ կ'ստեղծէին , ա՛յն-
քան քաղաքավար եղանակներով :

ՏԻԳ. Շատ անգամ այրեր իրենց տհաճու-
թիւնն սքողելու կեղծաւորութիւնն ունին , դոր
«կենցաղագիտութիւն» կը կոչեն . մինչ կիներ ,
աւելի իրենց սրտին անձնատուր , չէին կրնար
իրենց նայուածքին ու դէմքին վրայէն անհե-
տայնել զժգոհութեան երանգը լողորովին :
Նախանձի . . . ատելութեան գրգիռ մը մտած էր
մէջերնին . կարծես կիներ պատրաստ էին ապ-
տակելու իրենց ամուսինը : Միւսիւ էթիէնի
նշանածն ալ «Հայուհին , օտարուհին» քսելով ,
մարդուն թեւէն քաշելով , քաշքշելով առաւ
քայեց . . . (Իռոդը կը զարճուի եւ Զարուհի դէպի
դուռը կ'երթայ) :

ՏԻԳ. Մտէ՛ք :

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆՔ և ՄԱՐԴ ՄԸ ԵՄՈՅ ՊԱՆԴՈՎԱՊԵՏՈՒՀԻ

ՄԱՐԴ ՄԸ. (Ներս մտնելով) Ա՛ , ներեցէ՛ք ,
սխալ եկայ կարծեմ . թիւ 5 ը ա՞յս է :

ՏԻԳ. Թիւ 5 ը քովի սենեակն է :

ՄԱՐԴԸ. Ներեցէ՛ք ուրեմն , սխալ եկած եմ :

ՏԻԳ. (Գլուխը կախելով) Հոգ չէ :

(Մարդը ձեռնովը հաւերոյր մը կ'ուղղէ Զա-
րուհիին . սա սենիջապէս ամուսնոյն կը դառ-
նայ , մարդը կը մեկնի)

ՊԱՆԴՈՎ. (Ներս մտնելով) Ներեցէ՛ք տիկին ,
վարը , սրահը պատուաւոր հիւր մը . . . (Զա-

րուհի զայն լուցնելու նշան մը կ'ընէ) Զեր
Պարոն ամուսինը հո՞ն է:

ՏԻԳ. Այո՛ տիկին, հոս եմ. վաղը կէս օրէն
ետքը պիտի մեկնինք, ուստի հաճեցէք մեզ
այցելողներուն հաղորդել...

ՊԱՆԴՈՎ. Ա՛, կը մեկնի՞ք կոր, դո՞ւք:

ՏԻԳ. Այո՛:

ՊԱՆԴՈՎ. Տիկինն ալ (Զարուհիին կը նայի
որ զիտով կը հաստատէ Տյուր)

ՏԻԳ. Տարակո՛յս չիկայ:

ՊԱՆԴՈՎ. Ո՛հ, շատ պիտի ցաւիմ, եթէ տի-
կինն ալ մէկտեղ տանիք. թէ որ պղտիկ ճամ-
բորդութիւն մը պիտի ընէք, Տիկինը կընայ
հոս հանգիստ ընել:

ՏԻԳ. Ո՛չ, ատիկա անկարելի է. ամիս մը
կեցանք հոս, մեր հաշիւը հաճեցէք տալ որ
մաքրենք: Ամիս մըն ալ շրջակայ գիւղերն ու
քաղաքները կը շրջագայենք, մեր երեք ամ-
սուան արձակուրդը կը լրանայ ու կը գառ-
նանք մեր երկէջը, մեր տունը, մեր գործին
գլուխը:

ՊԱՆԴՈՎ. Բայց արդէն հարուստ էք, երի-
տասարդ և գեղեցիկ. պէտք է վայելել այս
ամէնքը:

ՏԻԳ. Այդ ամէնը կուտ մը չարժեր ազնիւ
Տիկին, մարդ աշխատելով երջանիկ կ'ըլլայ.
ուստի մեր հաշիւը...

ՊԱՆԴՈՎ. Օ՛հ երիկ մարդիկ, միշտ շահուն
ետելէն կը վաղէք, (Զարուհիին դառնայով)
ի՞նչպէս պիտի թողուս Փարիզը, Տիկինն:

ԶԱՐ. (Տյուր) Ի՞նչ օգուտ:

ՊԱՆԴՈՎ. Պարոն, Զեր հաշիւը կը զրկեմ
սպասաւորին հետ: (Կը մեկնի)

ՏԻԳ. (Զարուհի կը նայի). Փարատէ տխրու-
թիւնդ, Զարուհի՛ս, իրա՛ւ, Փարիզի կեանքը
հաճոյալի կը գտնես. բայց անիկա տեւական
կերպով շարունակել չըլլար, տեսնել անցնելու
է սիրելի՛ս: Եթէ Պանդոկապետուհին բաներ մը
կ'ըսէ, իր շահը փնտռելուն համար է, պէտք չէ
որ դուն ասիկա չի հասկնալու չափ պարզամիտ
ըլլաս: (Զարուհի, քաշկիւնակովը աջերը կը
սրի) Արդարեւ միամտութիւնը, կնո՞յ մը
պարզուկ վիճակը, ամուսնոյն երջանկութիւն
ընծայելու երեւոյթն ունի, սակայն անոր
չափազանցութիւնը կատարեալ փորձանք մ'է
իր սիրած ամուսնին գլխուն, և սպառնալիք՝ իր
ընտանեկան պատուին: (Պահ մը մտախոհ կը
մնակ լռիկ. Զարուհի քաշկիւնակը երեսին դրած.
Տիգրան սիկար մը կը վառէ) Ըստ իս, կին մը,
ի՛նչ գասակարգէ ալ ըլլայ, իրեններուն դէմ
պարզ ու յստակ, թափանցիկ սիրտ մը պէտք է
կրէ, իսկ օտարներուն դէմ մտացի ու խորա-
մանկ ըլլալու է: Այցելուի մը, հիւրի մը,
բարեկամի մը, (Արագ արագ հասցնելով քա-
ռերը) չարակամի մը, թշնամիի մը, չեմ
գիտեր ինչի մը (Մսնր) միտքը, նպատակը
մէ՛կ նայուածքով իմանալու եւ անոր դէմ ի՛նչ
ընթացք ընենլը որոշել ու գործադրութեան

անցնելու է. ահա այսպիսի պարագաներու մէջ է որ, կնոջ մը անձնուիրութիւնը, քաջութիւնը, արիութիւնը պսակ կը հիւսեն ամուսնոյն գլխուն եւ անոր զարգը կ'ըլլան անթառամ: Ասոնք, այս կենցաղագիտական պայմանները, դպրոցէն, վարժուհիներէդ սորված կամ ծնողքէդ ժառանգած պիտի ըլլայիր. բայց... կ'երեւի թէ՛ ֆրանսերէն լեզուով միայն խօսիլ վարժեցնող սէօուերդ «գաթէշիզմ» գոց ընել տալով Աստուծմէ վախնալ պատուիրեցին, այլ Անոր եւ քուկիներուդ սիրելի ըլլալու միջոցներն անտես ըրին... Փարիզէն կը մեկնինք վաղը, եւ (Շեշտերով) պէ՛տք է որ մեկնինք: Վաղը, կէս օրէ առաջ շուկայ կ'իջնենք, մայրիկիդ եւ ընկերուհիներուդ ի՛նչ որ կ'ուզես կը գնենք միասին: Մաթէին այցեատուրը, քիչ մը առաջ իբր թէ սխալելով ներս մտնող Անտրէին, այն սրիկային լուսանկարը հանէ՛ գրպանէդ, պատռէ՛, ջնջէ՛, նետէ՛: Թո՛ղ, հո՛ս թող, (Չարոհի կը յուզուի, ձեռքը արհիւ կը քսուի) Փարիզն իր տեղը մնայ: (Ոսֆի ելլելով կնոջը ձեռքէն կը բռնէ) Եկո՛ւր Սիրելիս, եկուր իմ հոգիս. գոցենք այս էջը, մէյ մ'ալ չի բանալու պայմանաւ. վասնզի հոն, (կը հեծկցայ) որովհետեւ հոն երջանկութեանս եւ սիրոյս սպառնացող սլաքներ կը տեսնեմ եւ կը սոսկամ Չարուհի՛ (Պարսկոցը կ'իջնայ եւ կոշտայ)

ՉԱՐ. (Լայով ու գայլ շփելով) Բայց ի՛նչ կ'ըլլաս կոր Տիգրանս, իմ կեանքս ու հոգիս,

ամենեւին չէի կարծեր որ քաղաքավարութեան համար տրուած այցեատուր մը, կամ այսպէս թեթեւամտութեամբ ինծի զրկուած անծանօթի մը լուսանկարը, այսքան ծանր վիշտ պատճառեր քեզի ու այսպէս նախատինք ըլլար ինծի. (Ռեպի ետ ֆաշուերով) Չ գիտեմ, լայց չեմ կարծեր թէ այնքան անքաղաքավար ըլլալուս բաղձայիր որ, համակրողի մը բարեւը կամ նուէրը մերժելու չափ անկիրթ ըլլայի:

ՏԻԳ. Ա՛հ, ահաւասիկ սխալը զոր չեմ կրնար հասկցնել. (Մեկուսի) դատողութեան տկարութիւն, որով բարին ու չարը չի կրնար զանազանել եւ... քաղաքավարութիւնը կը շիթէ տմարդութեան հետ ու այսպէս իր պարտականութեան մէջ կը թերանայ: Ուրեմն չարերէն պէտք է հեռի պահել այս անմեղ հրեշտակս, բայց մարդոց բարիներն ինչպէ՛ս դանազանել, Տէ՛ր Աստուած, օգնէ ինծի (Ռեպի վեր նայելով) Երթա՛նք Չարուհի, մեկնինք այս տունէն, հոս, տեղը, պա՛տը, իբր, առարկան, ամէն ինչ նենգաւոր կ'երեւի ինծի, երթա՛նք, հեռանա՛նք այս տեղէն:

ՉԱՐ. Բայց ո՞ւր՝ գիշեր ատեն:

ՏԻԳ. Ո՞ւր, ո՞ւր (Շուտուած) Բարեկամի մը տունը հիւր կ'ըլլանք այս գիշերը, և վաղը կը բռնենք մեր ճամբան: Այս անգամ աւելի գիւղերը քան թէ քաղաքները. տգէտ, գեղձուկ գիւղացիներուն մօտ տարբեր տեսակ հաճոյք

մը պիտի գտնենք ապահով: Աճապարէ՛, մարդու չ'երեւցած՝ մեկնինք սա տեղէն:

ՁԱՐ. Միթէ Պանդոկապեդուհինն «Մնաս բարով» չըսե՞նք:

ՏԻԳ. Հիմա, անոր հաշիւը տեսած միջոցիս, մնաս բարովդ կ'ըսես ուզածիդ պէս, երթա՛նք, երթա՛նք:

ՁԱՐ. Մէկ այս գիշեր ալ հոս մնանք, Տիգրան. մէկ այս գիշեր...

ՏԻԳ. Ձէ՛, չէ՛, չէ՛, չ'ըլլար, մի՛ ըսեր այդ, երթա՛նք, երթա՛նք, հեռանանք այս տեղէն: Անտանելի հոտ մը կը լուրէ հոս... երթա՛նք, թողունք այս աղտոտ միջավայրը, որ քեզ թունաւորեց ու իմ կեանքս խանգարեց:

ՁԱՐ. (Իր գոյները կը հաւաքէ եւ ճամբորդի արկղին մէջ կը գետնէ: Տիգրան ալ իրենները հաւաքել կ'սկսի) Շատ աղէկ, շատ աղէկ, սիրելի ամուսինս, ես քու կամքիդ չեմ հակառակիր. հիմա, ահաասիկ կը պատրաստուիմ. հիմա ա՛նտիջապէս կը մեկնինք մենք առ տեղէն, քանի որ դուն այնպէս կ'ուզես և թերեւս իրաւունք ալ ունիս: (Մարդ զգեստին գրպանէն լուսակար մը հանելով) Լա՛ւ գիտեմ թէ՛ սա լուսակարը պատճառ եղաւ, որ դուն ինձի դէմ այսչան բարկանաս. առ տե՛ս այս պատկերը, կ'ուզես պատռէ, ջնջէ, կ'ուզես հոս պանդոկը թող, վերջապէս ասոր գոյութիւնը իմ աչքիս բնաւ արժէք չունի և ոչ իսկ ասոր տէրը տեսած եմ: Իայց նստէ, Տիգրանս, վարկեան մը նստէ սի-

րելի ամուսինս, արդէն ամէն պատրաստութիւն տեսանք եւ երկու վայրկեանէն կը մեկնինք՝ առ տեղէն, ասիկա քու կամքդ է և պէտք է որ յարգեմ: (Չեղփեկ բռնելով ու նստեցնելով, ինքն ալ դեմը նստելով) Նստէ. վայրկեան մը, քեզի ըսելիք մ'ունիմ որ կարելոր է այս կէտիս: Այդ լուսակարը պանդոկապետուհին տուաւ ինձի նուէր, իբրեւ իր ամուսնայն պատկերը. փոխարէն առնելով իմ եւ քու միասին հանած լուսակարը զը յարգանքը զեանդեց սիրուն ալպոմի մը մէջ, ուր ըստ երեւոյթին պատուաւոր մարդոց եւ կիներու պատկերները կային, գիտցի՛ր թէ՛ այդ լուսակարը հետք ու հետեւանք չունեցող առարկայ մ'է՛. այս պատմութեան ճշմարտութիւնը կրնաս ստուգել ուզածիդ պէս. բայց թէ՛ ասիկա քիչ մը առաջ իբր թէ սխալմամբ ներս մանող սրիկային կը նմանի եզեր թէ ոչ, ատ ալ փոյթս չէ եւ զիս չի հետաքրքրեր անգամ: Մտթէին այցետմար իր յատուկ պատմութիւնն ունի, կեցիք որ ա՛տ ալ ըսեմ: Անիկա ինձի զրկուած է պանդոկին սպասաւորին միջոցաւ: Այո՛ անիկա ուղղակի իմ անուանա գրուած է. պարունակող պահարանն ալ անձնակալն բառը կը կրէր ստորագծուած. այցետմարին վրայ գրուած էր թէ առաջին առթիւ պիտի փութայ զիս տեսնել եւ շատ ու շատ ըսելիքներ ունի: (Տիգրան երկու ձեռները դեպի Չարմահիկն երկնցնելով յուզման կ'ենթարկուի) Այո՛ պէտք է խոստովանիմ

Թէ՛ հետաքրքրութեամբ կ'սպասեմ անոր դա-
լուն, գիտնալու համար թէ՛ ան հօրս բարե-
կամներէն մի՞ն է արդեօք, թէ քու ընկերնե-
րէդ մէկը, թէ ոչ... սրիկայ մը որ աննպա-
տակ խաղ մը ընելով կը զուարճանայ ինքնիրեն։
Գալով երեկոյթի ատեն պատահածներուն...

ՏԻԳ. (Արսատոյոր կերպով յուզուած) Ա՛լ
բաւական է, Չարուհի, ալ բաւական է...

ՉԱՐ. Ո՛չ, քու յուզուած եւ բարկացած պա-
հուդ համբերեցի եւ հանդուրժեցի որ, ըսես
ամէն ինչ որ ուզես։ Դուն զիս նախատեցիր,
դուն դիս ատել սկսար հիմակու ընէ...

ՏԻԳ. (Ընդմիջելով) Ո՛չ, ես քեզ կը սիրեմ։
Ես քեզ չափազանց կը սիրեմ։

ՉԱՐ. Դուն գիտես թէ ես ո՞րչափ պարզա-
միտ ազնիւ մըն եմ, Պօզ-Վիրդինէին պէս
միասին մեծցանք մեր տան մէջ, ինչպէս յա-
ճախ կը յեղյեղէ հայրիկս, եւ ասոր համար էր
որ անպատճառ քեզի հետ ամուսնացուց աչքին
լուսին պէս սիրած մէկ հատիկ ազնիւկը, որ այս-
պէս ոտնակոխ ընես օտար երկրի մէջ...

ՏԻԳ. Ո՛չ, ես քեզ կը պաշտեմ Չարուհիս .
(Ոսֆի եղբորով ձիւսք փաքսուիլ կը փորձէ, բայց
Չարուհի խոյս կուսայ յուշիկ, ոսֆի եղբորով)

ՉԱՐ. Ի՛նչ կ'ըսէի, այո՛, ես պարզամիտ ազ-
նիւ մըն եմ. հոս, Փարիզի բարքերուն բոլոր-
վին անծանօթ, անոր համար հետեւող ընթացք
մը ունենալու պարտաւորուած, անգիտակ կեր-

պով նմանելու ստիպուած կեանք մը ունեցայ
հոս եւ ուրիշ կերպ չէի կրնար ընել։

ՏԻԳ. (Զարուհիին մօտեւալով փաղափշաւով)
Ա՛լ բաւական է Չարուհիս, մի տանջեր զիս,
ալ բաւական է...

ՉԱՐ. Մէ՛կ ըսելիք մ'ալ ունիմ. կեցիր, հի՛մա
ճա՛բայ կ'ելլանք, կ'երթանք աստեղէն, քանի
որ դուն այնպէս կ'ուզես։

ՏԻԳ. (Գալարուելով) Ո՛չ, ո՛չ...

ՉԱՐ. Կրնայ ըլլալ որ հագուստի, կապուս-
տի, վարուելակերպի մէջ՝ Փարիզցուհիներէն
տարբերած եւ ատով իսկ անոնց ատելութեան,
նախանձին եւ չեմ գիտեր ինչին տեղի տուած
ըլլամ ակամայ։ Այս վիճակը պատիժ մ'եղաւ
ինծի արդէն եւ պէտք չէր որ դուն այս եղա-
նակով վիրաւորելիր իմ անլիծ սիրտս որ քեզի
եւ ծնողքիս համար միայն կը բարբախէր...
մինչեւ այսօր։

ՏԻԳ. (Շուարած եւ ծանր) Ո՛չ, ո՛չ, յաւիտ-
եա՛ն այդպէս պիտի ըլլայ... ես շատ յուզուե-
ցայ եւ ըսածներս մոռցած եմ արդէն... Ես
չգիտեմ թէ՛ ինչ ըսի քեզի. թէ՛ ինչ կերպով
վիրաւորեցի սիրտդ, ան իմ տաճա՛րս է, ես կը
պաշտեմ զայն...

ՉԱՐ. (Լորջ ու հանդիսարու եղանակով)
Հիմա կրնանք մեկնել աս տեղէն սիրելի ամու-
սինս, մեր գոյքերը, ահա հոս պատրաստ,
մեր մեկնումին կ'սպասեն։ Ծառան կանչեմ որ
մեկնինք (Մասը եղեկսրակաւ կոճակի կը դնէ)։


ՏԻԳ. (Կը փորայ փոյը, կը հաւքուրէ կիներ) Ո՛չ, ոչ, չենք երթար. հոս աղէկ է. ի՛նչ գեղեցիկ է այս սենեակը. հոս կը մնա՛նք դեռ քանի մը օր: (Ծառան կը մտնէ) Պարոն, (Բնկձուած ձայնով) Մէկ-երկու շիշ գարեջուր կամ շամբանիա կրնա՞ք բերել մեզի:

ԾԱՌ. Շամբանիա՞ բերեմ թէ գարեջուր, ո՞րը կ'ուզէք:


ՏԻԳ. (Զարմեհիկն ողղելով շա՛ս փաղափուշ եղանակով) Ո՞րը կ'ուզես, հոգի՛ս, պիրա՞ թէ շամբանիա:

ԶԱՐ. (Զուարթ եւ ժպտուն) Շամբանիա՛:

ՏԻԳ. (Խիստ ուրախ եւ բարձր) Շամբա՛նիա, շամբանիա՛ բեր, շամբանիա՛:



ԶՈՐՐՈՐԳ ԱՐԱՐՈՒԱԾ



Պոլիս, Աւիլի տան մէջ ճոխ ու ճաշակաւոր զարդարուած սենեակ մը:



Ա. ՏԵՍԱՐՕՆ

ԱԻԻԿ և ՎԱՐՄԱՆՆԻԿ, յետոյ ՏԻԳՐԱՆ և ԶԱՐՈՒՂԻ
ՎԱՐԳԱՆ և ՀԵՂՆԱ

ՎԱՐՄ. (Անկիւն մը խշուած) Սա գիրը մէյ մըն ալ կարգայիք Աւիլ աղա, ճամբայ ելած են ըսիր, մինչեւ հիմակ երեսան չելան, թէ ոչ հեռագիր մը տայիր, ո՛ւր են, ուր չեն տեղեկութիւն մ'առնէինք: Սիրտս շատ կը հատնի կոր աս ասանկ չըլլար:

ԱԻԻԿ. (Ոտի վրայ) Համբերութիւն վարսենիկ, հանգիստ ըլլալինն գրած են արգէն նամակով, փա՛ռք Աստուծոյ, հոգ ընելու բան չունինք, եւ թէ՛ քանի որ ճամբայ ելած են, ալ հեռագիր որո՞ւ տանք եւ ո՛ւր գրենք: Տեղեկութիւն առի որ շոգեկաւորը այսօր կուգայ փարիզէն, լայց որոշ կերպով գրած չեն թէ շոգենաւո՞վ կուգան թէ երկաթուղիով, ասոր հետ մէկտեղ, ես այս

օր երկաթուղիի կայարանը մարդ պիտի զրկեմ
որ, հասնելնուն պէս մեզի լուր տան որ դիմա-
ւորել երթանք : Բայց դուն տկար ես, թէ որ
կ'ուզես...

ՎՍՐՍ. (Բնորմիջերով) Չէ', չէ', չէ', ե'ս ալ պիտի
գամ, պիտի դիմաւորեմ զաւակս. աչքիս լոյսը,
վայրկեան մը առաջ տեսնալ կ'ուզեմ. ա'խ.
Չարուհիս, կարօտէս կը մեռնիմ կոր : (Կ'սկսի
հեծկցալ)

Ա.Ի.Կ. Իրաւունք ունիս, մայրական սէրը
ամէնէն զօրաւորն է, իրաւունք ունիս :

ՎՍՐԴ.) (Իռուսէն) Օ', բարի' եկաք, Տիկին
ՀեղնՍ.) Չարուհի, բարի' եկաք, Պարօն
Տիգրան :

ՎՍՐՍ.) Եկան, եկան : (Կը վազեն դրան
Ա.Ի.Կ.) մէջ. գիրկնընդիստունմ', «Մամա»,
«Չաւակս» բառերը կը շտախն)

(Վարդան եւ Հեղնս դրան մէջ կը կեկուսն
խկ միւսները արան կը մտնեն)

Ա.Ի.Կ. (Ներս մտնելով) է, բարի' եկաք զա-
ւակներս, բարի' եկաք, նստէք նայինք : (Արտու
կ'առնեն նստելու) Աստուծով աղէկ զուարճացաք.
Չարուհի', մայրիկդ քեզ շատ կարօտցեր է :

ՉՍՐ. (Վեր ցատկելով) Ա'խ, մայրիկս : (Կը
փոքրայ մօտը գիրկը. յետոյ փոքր կը նստի ու
անձայն խօսիլ կ'սկսի)

Ա.Ի.Կ. Պատէ' նայինք, Տիգրան, զաւակս,
ի'նչպէս եղաւ Չեր ճամբորդութիւնը, ո'ւր

տեղեր պտտեցաք. գոհ եղա՞ք մի սիրելիս :
(Կը նստի)

ՏԻԳ. Հայրի'կ, Մարսիլիա հասնելնիս հեռա-
գրքով, վերջէն ալ նամակով իմացուցինք Չե-
ղի, հոն ամիսի մը չափ մնացինք. թէ ես եւ
թէ Չարուհին շատ ուրախ եղանք. Չեր կարօ-
տէն միայն կը նեղուէինք. հոն վաճառական-
ներ, սեղանաւորներ, գործի առթիւ Չեր անու-
նը ճանչցող, մեր վաճառատան վրայ համա-
րում ունեցող բարեկամներ, մեզի պատիւ ընե-
լու համար, երեկոյթներ, հրաւերներ տուին.
Չարուհիս (Անոր նայելով) յարգանք ու պատիւ
կը վայելէր ամէն կողմէ. հոն, ինչպէս կ'ինքեր,
նոյնպէս եւ այրեր, տեսակ մը գուրգուրանք
ու համակրանք կ'զգային մեր մասին. ես ալ
այս վիճակը տեսնելով ինքզինքս երջանկու-
թեան գագաթը հասած կը նկատէի, ցաւելով
միշտ որ դուք ներկայ չէիք ա'յն պատուին՝
զոր վայելեցինք մենք՝ Չեր շնորհիւ :

Ա.Ի.Կ. Չաւակս, Չեր երջանկութիւնը տես-
նել և լսել նոյն բանն է ինծի համար, ինչո՞ւ
սիրտ կը հատցնէք :

ՏԻԳ. Յետոյ Մարսիլիայէն մեկնելու օրերնիս,
բանի մը օր իրարու վրայ կոչունք տուինք մեր
բարեկամներուն :

Ա.Ի.Կ. Եկա՞ն մի, պատուեցի՞ն Չեզ, զա-
ւակս :

(Մայր եւ դուստր միշտ կը խօսակցին անձայն)
ՏԻԳ. Այո', շատ մեծ ոգեւորութեամբ եւ

միշտ յարաճուն յարգանք ու պատիւ ընծայելով մեզի: Անյագ կերպով կը խօսակցէին հետեւինս եւ գիշերը կը լուսնար, առանց մէկուն վրայ ձանձրոյթ նշմարուելու: Անկէ մեկնեցանք Փարիզ, հետեւինս տանելով բազմաթիւ ծաղկեփունջեր, սրոնց վրայ Տ. և Չ. տառերը նկարուած էին շնորհալի ճաշակով. սակայն բան մը զարմանքս գրաւեց. այդ ծաղկեփունջերուն մէջ դրուած այցեատմութէն շատերը կնոջական անուններ կը կրէին...

Աիիկ. (Աւելի ուրախանալով) Ա՛, ատիկա ալ ուրիշ անասկ յարգանք մըն է Ձեր մասին. բնական է որ մեր բարեկամները այրեր են, բայց անոնք իրենց կնոջ կամ քոյրերուն միջոցով զրկած են իրենց յարգանաց նշանը, որ կրկնապատիկ յարգական է, նկատելով որ կնոջ ձեռքով (Չարուհին ցոյց տալով) հրեշտակի մը փունջ մատուցանելը, անոր ընկերին, քու երջանկութիւնդ... (Այրաչրած) Վարդան գինի մը բե՛ր ինծի, դուք ալ բան մը խմեցէք, լիմօնատ, օշարակ, ինչ որ կ'ուզէք: Է՛, շարունակէ՛ նայինք, Փարիզ, Մ. վէնսանը Ձեզ չի գիմաւորե՛ց:

Տիֆ. Փարիզ հասած օրերնիս խի Միւսիւ վէնսանի եւ կնոջ կողմէն հրաւէր ստացանք:

Աիիկ. Օ՛խ, կեցցե՛ս վէնսան, կեցցե՛ս:

Տիֆ. Կիրակի գիշեր մը մեզի երեկոյթ մը տուաւ. գործով մեզի ծանօթ շատ բարեկամներ իրենց տիկիններով ներկայ էին հոն... (Կը լոն)

Աիիկ. Է՛...

Տիֆ. (Խնդալով) Է, պէտքէ որ ամէ՞ն բան ըսեմ: Աիիկ. Տարակոյս չկայ. ի՞նչ բան կը պահուի ծնողքէ մը:

Տիֆ. Մասնաւոր կառք մը զրկած էին մեզի:

Աիիկ. Ո՞վ, վէնսա՞ն, էյ պուպօ՛, պուպօ Միւսիւ վէնսան, պուպօ:

Տիֆ. Ես ու Չարուհին բազմեցանք կառքին մէջ, այնպէս չէ՞, Չարուհի, աս ալ դո՛ւն պատմէ:

ՉԱՐ. (Վարսիտուն ալիւրով ու շարժումներով)

Այո՛, Հայրիկ, տեսնայի՛ր, Տիգրանին հետ նստանք բաց կառքին մէջ, խոշոր գլխարկով կառապանը, մեզ բարեւելէ ու մեր հրամանն ստանալէ յետոյ, սկսաւ ձիերուն փակցնել շառաչուն մտրակը, շա՛խ, շա՛խ, շա՛խ: Մաքուր հագուած սպասաւոր մ՛ալ կառապանին քով նըստած, սանկ կէս մը մեզի դարձած ու ակնածալից կերպով, կարծես ամէն վայրկեան հրաման կ'սպասէր մեզմէ: Փողոցին անցորդները մէկ կողմ կը կենային գլխարկ հանելով. ալ անանկ երջանիկ կեա՛նք...

ՎԱՐՍ. Ա՛խ լեզուդ սիրեմ, հոգիս, (Մայրը կը գրկէ աղջիկը, հաւերոյրներովն արգելի կ'ըլլայ խօսելուն: Վարդան գիւնիկ կը բերէ)

Աիիկ. (Գիւնիկ առնելով) Էյ աֆէրիմ Միւսիւ վէնսան. կ'արժէ որ այս գինին անոր կենացը խմեմ. (Կը խմէ) Է՛, ե՞տքը, պատմէ նայինք, Տիգրան:

Տիֆ. Միւսիւ վէնսանի տունէն ներս մտանք,

հոն, սպասաւորներուն մէջ իրարանցում մը երեւան եկաւ, որով յայտնի էր թէ մեզի կըսպասէին արդէն: Մ. Վէնսան, Տիկինը և անոնց ազլիկը՝ Օր. Մատըլէն՝ շնորհալի և շատ պատուաբեր ընդունելութիւն մ'ըրին մեզի: Մտանք սրահը, ուր կային Փարիզի ընտիր դասակարգէն այրերը, կիներ և օրիորդներ. ամէն կողմէ յարգանք ու պատիւ կը շուայուէր մեզի, սեղանին վրայ ամէն ոք մեր կենաց բաժակ կ'առաջարկէր. և ահա սկսաւ պարը (Մաւր ծաւր) երբ... Տիկինս... (Դժգոն նայուածքով մը Զարուհիին նայելով) կրկնօցը մէկ կողմ թողուց ու վախ մը դարձաւ. նկատեցի որ կամաց կամաց կիներն սկսան մեզ ատել, այրերուն յարգանքը սկսաւ հետզհետէ նուազիլ. և կամ... (Գոյնս) ուրիշ բանի մը փոխտիլ:

Աիիկ. Հապա ի՞նչ կարծեցին, իմ ազլիկս Փարիզի պըրտտ, լպիրշ կիներուն պիտի նմանէր:

Տիգ. Հազիւ քանի մը ժամ մնացինք հոն. յետոյ մեկնեցանք. քանի մը օր վերջը, յատուկ հրաւիրագիր ղրկելով՝ երեկոյթ մը տալ փորձեցի, բայց քանի մը աննշան մարդիկ եկան միայն:

Աիիկ. Միտիւ վէնսանը չի հրաւիրեցիր:

Տիգ. Ես անձամբ գացի այդ պարտականութիւնը կատարել, բայց ոտքը ցաւելուն պատճառաւ, չի կրնալ ներկայանալուն համար ներողութիւն խնդրեց. սմանք ալ իրենց այցե-

տամբ միայն զրկած էին, ինչ որ ինծի սրտնեղութիւն պատճառեց: Վերջապէս Փարիզի ընկերական-ընտանեկան կեանքը չիրեցի, աւելի ճիշտ կ'ըլլայ թէ որ ըսեմ թէ՛ արգելք ունեցայ տեսնելու և ճանչնալու:

ԶԱՐ. Ինչպէս, Փարիզի կեանքը գէ՞շ էր, ամբողջ քաղաքին մէջ մշտապէս ոգևորութիւն մը կար. ես շատ ախորժեցայ շիտակը: Կը յիշե՞ս Տիգրան, ան պանդոկապետուհին որ չա՛փ կը սիրէր զիս, «Ա՛խ մի՛ մեկնիր» ըսաւ ինծի, հազար անգամ:

Աիիկ. (Մտախոն) կարծեմ բաւական ատեն կեցաք Փարիզ:

Տիգ. Այո՛, գրեթէ ամիս մը մնացինք հոն (յովընճի) չարչարուելու համար: (Բարձր) Յետոյ գացինք շրջակայ գիւղերը: Տեսնելու բան էր շինական բնակիչներու նիստ ու կացը, անոնց հանգիստ, անվրդով ու գոհունակ վիճակը: Հոն ազլիկը երգ մ'ունի, կիներ՝ օրօր մը, հայրը ժպիտ, մանուկը խայտանք, երիտասարդն աշխատանք, ծերը օրհներգ. գիտողն ալ հիացում: Այս աֆէնքը ինծի շատ ախորժելի երեցան, վասնզի... որովհետեւ անոնք թոյն չեն տար և չեն խանդարեր իրարու և ուրիշներու կեանքն ու կենցաղը և թէ՛ իրապէս, ասո՛նք են որ հաւասարութեան և ազատութեան դրօշին տակ երջանկութեան տիրացած են:

ԶԱՐ. (Ոսփի կ'ելլայ ու մտեր ալ ղնելով) Հայրիկ. կո՞չտ մարդեր. ծխափողը բերանը, գոր-

ծին զբաղած, հաղիւ գլուխը վեր կ'առնէ. «Պօն
 ժուռ Մատամ» ըսելու: Անդին, հին ու մին հա-
 գուստներով կին մը, իր այժը կը կթէ, «Մա-
 տամ, կ'ուզէ՞ք որ քիչ մը թարմ կաթ հրամ-
 ցընեմ ձեզի» չէ', չէ', չեմ ուզեր ըսի, բար-
 կացայ, Տիգրանն ալ քա՛հ, քա՛հ կը խնդայ
 կոր...: Վերջապէս ես բնաւ չախորժեցայ գե-
 ղերէն, ըսի որ՝ երթանք Փարիզ, քանի մ'օր ալ
 կենանք հոն. բայց Տիգրան ըսաւ որ՝ հայրիկը
 նամակը նամակին վրայ գրելով՝ մեզ կ'ուզէ.
 ես ալ շիտակը մամաս շա՛տ կարօտցեր էի,
 ձգեցինք եկանք:

ՎԱՐՍ. Ազէ՛կ ըրիք ազջիկս, քիչ մնաց որ
 կարօտէք մեռնէի:

Ա.Ի.Կ. Այս ամէնը աղէկ (Ոսֆի եղբորով) Տիգ-
 րա՛ն. եկու՛ր, երթանք միւս սենեակը, քիչ
 մըն ալ գործի վրայ խօսինք:

(Սպասարուները կը փաշտին):

ՏԻԳ. Այո՛ Հայրիկ, կարևոր տեղեկութիւն-
 ներ բերած եմ գործի մասին, այնպէս որ շատ
 պիտի ընդարձակուին մեր առևտուրի սահման-
 ները: (Կ'երթան)

ԶԱՐ. Մամա, քեզի աղուօր կերպաս մը
 գնեցի, բո՛ւն Փարիզէն:

ՎԱՐՍ. Կերպաս. հա՛, հա, հա, շրջադ-
 գես՞ա թէ թիկնոցցու:

ԶԱՐ. Մամա, քեզի գոյնղգոյն քարերով,
 ոսկիէ, թանկագին պւօշ մը գնեցի, որ կուրծ-
 քըդ զարնես: (Զեռֆէն փաշտելով) Եկու՛ր, սնտուկս

քեզի ցուցնեմ. նայէ ինչ բանե՛ր բերի հետս:
 (Դուրս կ'եղլեն):

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՀԵՂԱՍ, ՎԱՐԴԱՆ յետոյ ԶԱՐՈՒՀԻ և ՎԱՐՍԵՆԻԿ

ՀԵՂ. (Ներս կը մտնէ այցեսունս մը բռն-
 նած. կը դնէ գայն գրասեղանին վրայ ու կը
 մեկնի):

ՎԱՐԴ. (Ներս կը մտնէ, նամակ մը եւ այ-
 ցեսունս մը բռնած՝ զոր կը կարդայ) «Տիկին
 Համբարձումեան, ձեր բարի դալուստը կը շը-
 նորհաւորէ», աս աղէ՛կ, բայց այս այցեսոմսը
 բերողը, պատուիրեց որ, նամակը գաղտնի տամ
 Տիկին Զարուհիին, (Նամակը դարձնելով աս-
 դին: անդին) նամակն ալ այնպէս մը գոցեր է
 որ, (դէպի պատահակ դարձնելով գրումսի
 քաշակցեղ կը ջանայ) նու... նու... նոյե-
 մի, հա՛, հասկցայ... ան Տիկին Նոյեմին է,
 ասոր հօտը աղէկ չի գար ինծի... բայց սա
 ալ կայ որ՝ գրողը կին մըն է, ի՞նչ վնաս կըր-
 նայ ունենալ... անանկ է ա. կնիկը կնկան ի՛նչ
 կրնայ ընել:

ՀԵՂ. (Զեռֆը այցեսունս մը բռնած ներս
 մտնելով) Ի՞նչ կ'ընես հոս, գուռը կը զարնուի,
 ամէն ատեն ես չպիտի վազե՞մ ալ. ան քու գոր-
 ծըդ է: Սովոր նայէ...

ՎԱՐԴ. (Նեղանալով) Սա նամակը պիտի տամ
 Տիկինին, կ'սպասեմ որ գայ:

ՀԵՂ. (Նամակը մեռֆէն փաշտելով) Տո՛ւր

նայիմ, Տիկին Զարուհիին է, ես կուտամ ի-
րեն, դուն գործի՛դ գնա:

ՎԱՐԳ. (Դուրս ելլելով) Կնիկ չէ՞ք մի, իրա-
րու գաղտնիք պահելու համար ինչ՞ վարպետ
էք: (Կր մտնեն Զարուհի եւ Վարսենիկ)

ԶԱՐ. Տու՛ր նայիմ, ի՞նչ է ատ:

ՀԵՂ. (Ինչպիսի դուռը նայելով, ձեռքին մեջ
կր դնել նամակը, գաղտնի սայր պես): Քեզի նա-
մակ մը տիկին:

ԶԱՐ. (Նամակը բանալով այժե անցնելի
վերջ) Գնա՛ առ նոյեմբերն ըսէ՛ որ՞ ալ մէյ մըն
ալ երեսս տեսնալիք չունիս: Թող ասանկ գիտ-
ցած ըլլայ:

ՎԱՐՍ. Ինչո՞ւ աղջիկ, ա՞տ ինչ խօսք է:

ԶԱՐ. (Թերեւ բարկութեամբ) Մայրիկ, հարս-
նիքիս գիշերը նամակ մը գրած են Տիգրանին.
որչափ խօսք եղաւ մէջերնիս: Կ'ըսէ թէ՛ ան-
պատճառ նոյեմբերն գործն է ատ:

ՎԱՐՍ. Չէ, չէ, ես գիտեմ հովը ուրկէ կը
փչէ: Ատ նամակը անոր էրիկը գրած է: Հայրդ
չուկան բռներ աղէ՛կ մը լուացեր է: Աղջիկս ա-
ներձագիդ չի տուի, անոր համար թշնամու-
թիւն կ'ընես ըսեր է: Կնիկը տեղեկութիւն չու-
նի ատ գիրէն, պարապ տեղը անոր մեղքը մի՛
առներ:

ՀԵՂ. Այո՛, այո, Տիկին նոյեմբերն բարե-
սիրտ կնիկ մ'է, անոր մեղքը մի՛ առնէք պա-
րապ տեղը:

ՎԱՐՍ. (Թերեւ մը սաստելով) Դու գնա վա՛ր,

գործերուդ նայէ. քեզի հազար անգամ ըսեր
եմ որ՞ խօսքի մէջ մի՛ մտներ: (Հեղնա դուրս
կ'ելլէ)

ԶԱՐ. Մայրիկ, Օննիկը նամակ մը գրեր էր,
Փարիզ ձեռքս հասաւ: Սիրտս կտոր կտոր ե-
ղաւ ...:


ՎԱՐՍ. (Ընդմիջելով) Սու՛ս, սուս, սուս, ա-
տանկ խօսքեր մէյ մըն ալ չի լսեմ. մոռցի՛ր,
ալ ամէ՛ն բան մոռցիր: Ասկից վերջը քու մը-
տածմունքդ պիտի ըլլան (Հասիկ հասիկ), Ծը-
նողք, Ամուսին, Աստուած:

ԶԱՐ. (Մեքենաբար, անշարժ եւ անշեշտ)
Ծնողք. Ամուսին. Աստուած:

ՎԱՐՍ. (Գլուխն օրօրելով այ ու ձախ) Ու՛...:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Պոլիս, Բոխնդիրս կղզին: Գիւղի տանն գիտնայարկի սենեակ մը. բաց դռնէն կ'երևի պարտէզը:

Ա. ՏԵՍՍՐԱՆ

ԱԻԻԿ և ՎԱՐԳԱՆ

ՎԱՐԳ. (Ներս մտնելով) Աղա, նարկիլէնդ լեցունե՞մ, կ'ուզե՞ս:

ԱԻԻԿ. (Նստած) Չէ, չեմ ուզեր: Հիմա կ'երլամ կամաց կամաց ծովեղերքի սրճարանը կ'երթամ, հոն մէկ-երկու բարեկամ կը տեսնամ և թէ նարկիլէ մը կը խմեմ, ժամանակ է կ'անցնի կ'երթայ: Հանրմդ ի՞նչ պէս է, քովը դացի՞ր բան մը կ'ուզե՞ թէ ոչ:

ՎԱՐԳ. Հանրմն աղէկ է, ա՛ղա, երէկուան վրայ շատ աղէկ է: Փա՛ռք Աստուծոյ. ելաւ, կամաց կամաց կը հագուի կոր, հիմա կուգայ, ան ալ քե՛զ հարցուց քիչ մը առաջ:

ԱԻԻԿ. Վա՛րդան, աղաս. հանրմիդ աղէկ նայէ, սիրտը դող չի հանես. գիտես ա՛, աս կաթուածը անա՛նկ բան մ'է որ, անդամ մըն ալ

գարուն պէս՝ կ'առնէ կը տանի: Բժիշկն ալ պատուիրեց որ շատ զգուշաւոր ըլլանք և բնաւ հոգ չի պատճառենք անոր:

ՎԱՐԳ. Աղա՛, ատ մասին հոգ մի՛ աներ, դուն իմ ինչ շիտակ մարդ ըլլալս գիտես. ես քեզի համար հոգի կուտամ, աստուած գիտէ: Ես հիմակ ուրիշ մէկ ցաւ ունիմ. երկու օրէ քեզի պիտի ըսեմ, չեմ կրնար:

ԱԻԻԿ. Ըսէ նայիմ ի՛նչ ցաւ ունիս. ինչո՞ւ չես կրնար: Ըսէ նայիմ:

ՎԱՐԳ. Ես քու քսան տարուան աշխատաւորդ եմ. ես քեզի գէշ չեմ կամենար: Ես կ'ուզեմ որ երթամ Պէոյիւք տէրէ, Պ. Տիգրանին, Զարուհիին քով կենամ. թող Հեղնան գայ կենայ հոս ժամանակ մը:

ԱԻԻԿ. (Բարկանալով) Ա՛տ ինչ խօսք է ապերախտ. այսչափ տարի եղաւ քովս կեցեր, հացըս կերեր ես, Հայրենիք երթալ ուզեցիր՝ քեզի Յ անգամ հրաման տուի, ամէն կերպով ճամբուդ ծախքն ալ հոգացի. քանի մը օր առաջ Տիգրանին ըսի որ՝ ստակ տայ քեզի, որ երկիր խաւրես, ատ ալ եղաս. ալ ի՞նչ կ'ուզես, ըսէ որ տամ, ա՛պերախտ: Ըսէ՛ նայիմ ի՞նչ կ'ուզես...

ՎԱՐԳ. (Ընդմիջելով) Աղա, մի՛ բարկանար. կ'աղաչեմ, ապերախտ մի՛ ըսեր ինձի. ես քու ոտքի հողն եմ:

ԱԻԻԿ. Ինչպէ՞ս ապերախտ չըսե՛ր քեզի, որ զիս աս վիճակիս մէջ կը թողուս, կ'երթաս:

Հանրմդ հիւանդ է. ամէն սպասաւորի հետ չի կրնար վարուիլ. գէշ աղէկ, քեղի հետ վարժուած է. դուն ի՞նչպէս կը թողուս կ'երթաս:

ՎԱՐԴ. Աղա, չի հասկցար, ես քովէդ կ'ելլամ չեմ ըսեր, քիչ մը ժախնակ պղտիկ հանրմիս, Զարուհիին քով երթամ, կ'ըսեմ:

ԱԻԻԿ. Ինչո՞ւ. ի՞նչ կայ որ: Եղ ու մե՞զրկայ որ հոն վազել կ'ուզես. վաղը միւս օր գեղէն երբոր իջնանք, նորէն մէկտեղ չը՞ պիտի նըստինք: Ան ալ մեր աունն է, ա'ս ալ: Ինչո՞ւ ատանկ պարապ խօսքերով սիրտս դող կը հանես. դուն տարիքդ առած մարդ ես, քեղի կը վայլէ՞ մի:

ՎԱՐԴ. (Խորհրդաւոր շեշտով) Աղա՛, ուրիշ բան կայ, անոր համար: Թէ ոչ ես քեռէ մէկ դժգոհութիւն մը չունիմ, մեղա՛յ Աստուծոյ:

ԱԻԻԿ. Ի՞նչ կայ որ, ըսէ նայիմ: Սարէն ձորէն խօսքեր բերելու տեղ՝ ըսելի՛քդ ըսէ շիպչիտակ:

ՎԱՐԴ. Աղա, ես Հայաստանցի եմ. պատիւի համար կը մեռնիմ. ես չեմ ուզեր որ քու պատիւդ ստնակոխ ըլլայ:

ԱԻԻԿ. Տղայ, երկան մ'ընէր, սիրտս նեղ է. վիճակէս չե՞ս հասկնար, ըսելի՛քդ ըսէ. պարապ խօսքերով սիրտս մի՛ հատցնէր:

ՎԱՐԴ. Հա՛, աղա. հա. ըսեմ: Երէկ կէս օրէն ետքը, քու դուրս ելլալուդ պէս՝ դուռը դարակին. ես ալ հանրմիս քով էի, վար իջայ, դուռը բացի, երկու կնիկ եկան հոս, ըսին որ

Աւիկ աղային տունը աս՞ է. վարսենիկ հանրմը հո՞ս կը նստի:

ԱԻԻԿ. Ո՞վ էին ատոնք. չե՞ս ճանչնար:

ՎԱՐԴ. Չէ. չեմ ճանչնար:

ԱԻԻԿ. Է՛ աղէկ, ի՞նչ կ'ուզէին. չի հասկցա՞ր:

ՎԱՐԴ. Հանրմիս հետ տեսնուիլ կ'ուզէին. նայեցայ որ բերաննին էլէլ պակաս խօսքերով լեցուն է, չի թողի որ վեր ելլան. դունէն ճամբեցի, հանրմըս հոս չէ ըսի: Աս առտու նորէն եկան պահ մը առաջ հոս էին. վարի սենեակը նստան, քչիկ մը բացուեցան ինծի:

ԱԻԻԿ. Ի՞նչ բացուեցան:

ՎԱՐԴ. Աս կնիկներէն մէկը 20 տարեկան աղջիկ մ'ունի եղեր. ան նայեմին կայ, ս'ըր է մեր տունը կ'երթայ կուգայ, անոր եղբօրը՝ Օննիկին հետ նշանուած է եղեր:

ԱԻԻԿ. Է՛ մեղի՞ ինչ:

ՎԱՐԴ. Օննիկ պարապ կը պառտի. բան գործ չունի. ասոր գործի կ'ըլլամ, վաղը գործի կ'ըլլամ, ըսելով՝ նշանածէն 40-50 սօկիի չափ ստակ քաշեր է...

ԱԻԻԿ. (Ընդմիջելով) Աս ալ մեղի վերաբերեալ բան մը չէ:

ՎԱՐԴ. Հիմա աս կնիկները կ'ըսեն որ, աս Օննիկ ըսուած սրիկան գիշեր ցորեկ մեր Զարուհիին ետեւն ի վեր կը պառտկի եղեր. աս ըստակը անոր հետ կերեր խմեր են: Հիմա, կա՛մ աս տղան վաճակեցէք ձեր տունէն, որ գայ նըշանածին հետ կարգուի, կամ յիսուն սօկին տը

ւէք, որ մենք անկէ վազ անցնինք: Թէ ոչ
դատ կը բանանք ու ձեր պատիւը մէկ փարայի
կ'ընենք:

Ախի. Ատոնք շղթիկ կնիկներու խօսքեր են.
դուն ալ կը հաւատաս: Բսենք թէ մեր ազջիկը
նանիլ է, հովը որ' ծակէ գալը չգիտեր, ու վը-
րան խօսք կը բերէ իր համարձակութեանը
պատճառով, ատիկա Թրանսական դպրոցէն ա-
ռած նկարագրին կուտանք: Ի՞նչ ընենք, դաւա-
կը մերն է, պէտք է շահինք: Բայց Տիգրանը
գիտե՞ս որքան պատուախնդիր է, ատանկ բա-
ներու հօտն անգամ ընդունո՞ղ տղայ է: Ի՞նչ
կ'ըսես:

ՎԱՐԴ. Պ. Տիգրան ատանկ բաներ չընդու-
նիր, ես լաւ գիտեմ ...

Ախի. Խօսէ՛, Վարդան. խոսէ՛, համարձակ
խօսէ, բոլոր մտածմունքդ յայտնէ, բա՛ն մի
պահեր, բնա՛ւ մի քաշուիր:

ՎԱՐԴ. Ազա, իրաւ է որ Պ. Տիգրան էլնասի
պէս տղայ է, ատանկ բաներ չընդունիր. բայց
խեղճը առտուն կանո՞ւխ տունէն կը վազէ շու-
կան, իրիկունը ուշ կը դառնայ տուն: Ես կ'ու-
զեմ որ Զարուհիին քով կենամ. ատ Նոյեմիին
տաքը մէյ մը կարեմ անկէ, յետոյ անոր եղ-
բայրը, ան սրիկայ Օննիկը ձեռք ձգեմ ու ...
սա՛նկ խզգեմ:

ՎԱՐՄ. (Դուրսէն) Վա՛րդան, Վա՛րդան, ու՞ր ես:

ՎԱՐԴ. (Դուրս վազելով) Հո՛ս եմ հանրմ, բա՞ն
մը կ'ուզես:

ՎԱՐՄ. (Դուրսը) Քիչ մը ջո՛ւր տաքցուր, սա
տաքերս ջուրը դնեմ: Շատ կը մոխիմ նորէն:

Ախի. (Դուռը բանալով) Նե՛րս եկուր Վար-
սենիկ, նե՛րս եկուր, հոս տաք է:

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԱԻԻԿ և ՎԱՐՍԵՆԻԿ

ՎԱՐՄ. (Դողդոջուն ձեւերով ներս գալով)
Նորէն ի՞նչ խորունկ մտմտութի մէջ ինկեր
ես, Աւիկ աղա:

Ախի. Մտմտութեան թէ որ ըսեմ, նորէն
սիրող դող պիտի ելլայ:

ՎԱՐՄ. (Նեղսանալով) Ի՞նչ կայ որ, նորէն
հաւկիթ մը անէ նայինք:

Ախի. Ազէկ ա՛, մենք ելանք հոս կղզի
եկանք, մեր ազջիկը, մեր փեսան, մեր նո-
րածին թուռնիկը մեզի հետ ըլլալու չէի՞ն: Ի՞նչ
կար որ անոնք ելան Պէօյիւք-Տէրէ գային:
Դուրս չեմ կրնար ելլել, աս ու ան զիս կը քաշ-
քըչեն, «Փեսադ զատուե՞ր է քենէ... Տիկին
Զարուհին տեսանք ջուրերը . . . ազջիկդ կառ-
քով պատյո կ'ընէր . . . քովը մարդ մը կար,
ան ո՞վ է . . .» Ես սի՞րտ ունիմ որ ատանկ խօս-
քեր լսեմ, ո՞ր մէկին պատասխան տամ:

ՎԱՐՄ. Օ՞՞՞, Աւիկ աղա, պարապ մտմտութե-
ներ են ատոնք, հազար անգամ կ'ըսեմ որ
օտարին ըսածին ականջ մի՛ կախեր . . .

Ախի. (Ընդդիշտով) Ինչ որ ալ ըլլայ, ան
Նոյեմի ըսուած շխտի կինը աչքիս ազէկ չերե-

ւար կոր, իմացայ որ գիշեր ցորեկ Չարուհիին քովն ի վեր կը սւքտայ... խօսք չունիմ, էրիկը շնորհքով մարդ է, բայց ասոր հակառակը եղբայրն ալ սրիկային մէկն է: Ինծի մնայ նէ, օգերը զովացան, կամաց կամաց երթանք տուներնիս. անոնք ալ թող վար իջնան գեղէն, սա մէջտեղի աւելորդ խօսքերը վերջանան, ասոնք աղէկ բաներ չեն: Իրա՛ւ է, ինծի ցընգած, մնգած կ'ըսես կար և կարելի է որ իրաւունք ալ ունիս, բայց բա՛ն մը կայ... վերջապէս աս հոտը իմ քթիս աղէկ չի գար կոր... Ի՞նչպէս ընենք որ ան Նոյեմին ա՛լ մեր տունը ոտք չի կոխէ...

ՎԱՐՍ. Գասըմին, Աւիկ ազա, գասըմին երբոր գեղէն վար իջնանք, ատ ըսածիդ վրայ կը մտածենք:

ԱՒԻԿ. Եկո՛ւ գասըմին չապստենք, վար իջնանք որ, ե՛ս ալ երբեմն երբեմն մաղազան երթամ: Տիգրանը մինակ է, աս միջոցներուս գործերն ալ կարծես բացուած են. շա՛տ կը յոգնի, ինչ կ'ըլլայ կոր, օրէ օր կը նիհարնայ աղան. կը վախնամ թէ անկողին կ'իյնայ: Դո՛ւն ինչպէս եղար վա՛րսենիկ, ծունդիդ դողալն անցաւ քիչ մը հէ՛. սրտիդ չարվրնըր՞ն, անցա՛ւ, ի՛նչպէս:

ՎԱՐՍ. Չէ՛, օրէ օր գէշ կ'ըլլամ կոր. զիս հանգիստ թողած ունի՞ս որ աղէկնամ, նայէ՛ ի՞նչ խօսքեր կ'ընես կոր Չարուհիս համար... Թողնիկս՝ Սիրվարդը 6 ամսու եղաւ... քանի

չաբաթ է տեսած չունիմ, կարօտէս կը մեռնիմ կոր...

ԱՒԻԿ. Տէ՛ր ողորմեա, թէ որ ցաւդ ատ է՛ ինչո՞ւ չես ըսեր. երթանք Պէօյիւք-Տէրէ, քանի մը օր կենտնք հոն, վերջէն ամէնքս մէկտեղ վար կ'իջնենք, իրաւ է որ ես ալ կարօտցայ ձագուկս, ե՛լ նայիմ, ել նայիմ, (Յանկարծ դուռը կը բացուի: Տիգրան, մանկիկը գիրկը, այրայրած ներս կը նետուի. Աւիկ կը ցատկէ ոտքի՝ շփոքած):

Գ. ՏԵՍՍԻՍ

ՆՈՅՆՔ Ե ՏԻԳՐԱՆ

ՏԻԳ. (Չգլխած) Ա՛խ, տունս աւրուեցա՛ւ... մեռա՛յ... կորսուեցա՛յ... ալ իմ պատիւս ոտնակոխ ըլլալէն ետքը՝ ես կեանքն ի՞նչ ընեմ. (Տղան գրկէն նետելու պէս կ'ընէ, Վարդան, որ դրան մէջ կը կեկար, կը իսկ մանկիկը ու սեւեւակ մը կը սակի), Սատկի՛մ, անունս վերնա՛յ այս աշխարհէն: Ա՛խ, անօրէններ, (Սպառնակասն շեշտով Աւիկին ու Վարսենիկին նայելով փոփոխակի) Անաստուածներ... անգո՛ւթ, անխի՛ղճ մարդիկ, ի՞նչ կ'ուզէիք ինէ... (Կուրծփիւ բուցփի հարածներ սայով դուրս կ'ելլէ շնորհով) ա՛խ... վա՛խ...

ԱՒԻԿ. (Շուարած) Ի՞նչ է, աստուած իմ, ի՞նչ եղաւ արդեօք:

ՎԱՐՍ. (Չեղբերով կուրծփը կը սեղմէ եւ ոտքի ելլելու նիգ մը կ'ընէ, բայց չի կրնար, կը

զոսորի ու գեօսին կ'իյնայ կարուածահար) Մի'...
Թո... զուր... հա... սի'ր...

(Առիկ դուրս կը վագէ, առանց իր կնոջ վիշակիսն նայելու)

Գ. ՏԵՍԱՐՈՆ

ՎԱՐԳՄԱՆ և ՀԵՂՆԱ (Ներս կը խուժեն)

ՀԵՂ. (Հայգնեցով) Բռնէ՛ սա կնիկը անկողին տանինք. մահուան տողերու մէջ էջ Խեղճ կնիկ: (Թեւերը մ'սած փաշջելով կը սանիկն եւ կը վերադառնան կրկին)

ՎԱՐԳ. (Մտնելով) Հեղնա՛, ի՞նչ պատահեցաւ, չըսե՞ս:

ՀԵՂ. Լուէ՛ քիչ մը... ոտքերս կը դողան կոր. կեցի՛ր, կտոր մը շունչ առնեմ սատեղ: (Արոտի մը վրայ կ'իյնայ)

ՎԱՐԳ. Աղէ՛կ, բայց մեծ բան մը պատահած ըլլալու է. Տիգրան ազան խոհեմ՝ ազայ մըն է, սա 10 տարու հասակը ունէր երբ հոս եկաւ. ասանկ կատղելու համար՝ շատ մեծ բան մը պատահած ըլլալու է. չըլլա՛յ թէ դժբաղդութիւն մը... չըլլա՞յ թէ...

ՀԵՂ. (Կտրուկ շեշտով) Կի՛նը, կինը...

ՎԱՐԳ. Ի՞նչ ըրաւ կինը, կուի՞ր ըրաւ. ատիկա նոր բան մը չէ՛ ար, ամէն օրուան պատահած բանն է:

ՀԵՂ. (Վշտալից ու ծակն եղանակով) Կեցի՛ր որ ըսեմ. այսօր կէսօրին մօտ Տիգրան էֆէնտին, կամուրջին վրայէն անցած ատեն, պատահմամբ

կը հանդիպի 14-15 տարեկան աղու մը, որ պղտիկը, Սիրվարդը...

ՎԱՐԳ. (Երրայու շարժումով) Հա՛, նայիմ՛, ի՞նչ եղաւ մանկիկը:

ՀԵՂ. Մի՛ դպչիր. կը քնանայ կոր. անկողին դրի. (Ճարուկնակելով) ատ աղան, Սիրվարդը գերկը բռնած, ասդին-անդին կը թափառի. «Ատ աղան ո՛ւր կը տանիս, ո՛ւր է ասոր մայրը» կը հարցնէ: Օ՛ֆ. շունչս կը հատնի կոր...

ՎԱՐԳ. (Հեստիքի տեղ արտայայտ) Է՞...

ՀԵՂ. Տղան ըսելիքը չիտթած. «Մայրը շոգենաւնեքէն մէկը մտաւ, կ'ըսէ, բայց չեմ գիտեր թէ ո՞րն է. միայն սա գիտեմ որ մեծ շոգենաւ մըն էր և թէ Տիկինն ու իր հետի մարդը շոգենաւ մտնելուն պէ՝ նաւը ճամբայ ելաւ:» Կնոջ ձայն մը լսած էր աղան, որ՝ «Տղա՛ս, աղջի՛կս» կը պոռայ եղեր, երբ շոգենաւն արդէն բաւական բացուած էր: Վերջապէս Տիգրան էֆէնտին, բան մը չի հասկնալով պղտիկը կ'առնէ կուգայ գիւղ՝ Պէօյիւր-Տէրէ: Հոն, զիս կը հարցովործէ թէ՛ արդեօք Տիկինն ո՛ւր երթալը գիտե՞մ. ես ալ ըսի որ կարելի է կղզի գնաց: Ետքը ասդին անդին պըրելի է կղզի գնաց: Ետքը ասդին անդին պըրելի է կղզի գնաց, սնտուկը, պահարանը, վերը, վարը, ամէն կողմը քննելով՝ արցունքներու մէջ ինկաւ, սկսաւ աղու մը պէս լալ: Տունը անզը կողոպտեր, ոսկի, արծաթ, օղ, ապահարան, պանքային թուղթերը, գրեթէ...

տես ա՛, 1500 լիբայէն անելի ստակ կար Տիկինն
Զարուհիին ձեռքին տակ, ասոնք ամէնքն ալ,
ամէնն ալ չկային. զարմանքներու մէջ մնացի,
կեցած տեղս քա՛ր կտրեցայ, ե՛ս ալ սկսայ լալ,
տղեկն ալ, անմեղուկ ձագուկը կարծես կ'զգար
պատահածը, պայթելու աստիճան կուլար ու կը
ճչէր:

ՎԱՐԴ. Ո՛վ մեծ Աստուած: (Երկուսն ալ ակն-
նայն կը մնան գրոխնիկ կախ)

ՀԵՂ. (Պահ մը շուն կեկուտէ վերջը) Յան-
կարծ Տիգրան է՞ք. գիբկն առաւ աղջկը, քա-
նի մը անգամ համբուրեց տղեկը, ու արցուն-
քոս աչքերով ինկաւ ճամբայ. ես ալ ինքզին-
քըս չի կրցայ զսպել, ետէն վազեցի ու մը-
տանք շոգեհաւ. ելանք կամուրջ, անկէ ալ կըղ-
զիին շոգեհաւը մտանք՝ եկանք հոս: Բայց
ո՛ր գնաց Տիգրան է՞քէնտին, ինչո՛ւ թողու-
ցիք... Աւիկ աղա՞ն ուր է: (Պաղատելով) Վար-
դան, եղբայ՛րս դուն գնա ասոնք ինտուէ. ես
ալ ելլամ Տիկինն Վարսենիկին քով: Հիւանդ կը-
նիկը ինտո՛ր պիտի գիմանայ աս ցաւերուն. ա-
նոր բան ըսելու չէ. Աստուած իմ, աս ի՛նչ
փորձանք էր եկաւ գլխուս. ախ՛ ան պատճառ
եզոզին ի՛նչ ըսեմ:

ՎԱՐԴ. Պատճա՛ռ... աս գործին մէջ (կոշ
շարժումով մը մասնակիչ ընկելով) Յանցաւորին
մէկը գո՛ւն, մէկն ալ մայրը...:

ՀԵՂ. (Բռուն բողոքով) Ե՛ս ինչ յանցանք
ունիմ:

ՎԱՐԴ. Զարուհի վեր, Զարուհի վար... Օն-
նիկ եկու, Օննիկ գնա... Նոյեմբին նամակն է...,
Նոյեմին կը կանչէ... Նոյեմին եկաւ, Նոյեմին
գնաց: Ալ ամէն օր, գիշե՛ր ցորեկ գլուխ կը
բռնէիք: Մուցա՞ր Զարուհիէն առած նուէրնե-
րըդ, Օննիկին ու Նոյեմիին լուբերն ու նամակ-
ները տանիլ բերելուդ համար: Մուցա՞ր Նոյե-
մին քեզի տուած հագուստները, անո՛ր համար
կը գովէիր ու կը գովէիր՝ սա՛նկ աղէկ է, նա՛նկ
աղէկ է. երկինքները կը հանէիր աս ջլղիկ
կնիկը: Օննիկը ուրախութենէն զիս համբուրեց
ըսողը դու չէի՞ր. Նոյեմին ինծի շատ պատիւ
կ'ընէ, ինծի էրիկ մը պիտի գտնայ, չէի՞ր ըսեր.
ը՞. ըսէ՛ նայիմ: Քեզի պէս քթին ծայրը չի
տեսնող կնիկները չե՞ն օր, մարդուն տունը
տեղը կը քրքրեն ասանկ: (Վարդանի խօսած
միջոցին, ֆակի՛ ֆակի ակնաւնետ Հեղևս ընդ-
միջել կը ջախտէ ձեռքով, գլխով, ցաւալի եւ
բողոքով շարժումներ կ'ընէ, բայց Վարդան միշտ
կ'արգիլէ զայն ձեռքի շարժումներով, մակա-
ւանդ խօսքի սրագ սրագ շարայարումովը.
Հեղևս քաշկիկակը այժիմ կ'սկսի հեկեկալ:
Վարդան՝ խօսքը Վարսենիկին հասցէիկ ուղղե-
լով) Հապա սա ջա՛տուկ պառա՞ւը, վիճը աղջկան
վրայ ձգած, առջի՛ օրէն անոր ամէն պակասու-
թիւնները գոցեց, ամէն տեսակ խայտառակու-
թիւնները պարտկեց, քանի՛ հեղ լաւ ու գէշ
եղայ հեար. աղջկանը բռնած ծոռ ճամբանե-

բուն չի հաւնելու համար: Աղան դուրսը բաներ մը կ'իմանայ, դուն լուր կուտաս ըսելով՝ զիս երեսէ՛ ձգելները: ալ ո՛ր մէկը ըսեմ:

ՀԵՂ. (Չայրոյթի շարժումներով դուրս կ'ելլէ):

ՎԱՐԴ. (Կը շարունակէ նախասումը, սաւելի բռուն եղանակով): Դո՛ւք, շիտէ՛ շիտակ դուք պատճառ եղաք աս անխորձ աղջկան գլխէ ելլալուն. ան խեղճ տղուն՝ Տիգրանին՝ գլուխն էրեցիք... (Հանդարտելով) Ան հօրպալա աղջիկն ու՛ր, անոր էրիկ ելլալն ո՛ւր, տղու տէր ըլլալն ուր: (Պահ մը խորհելէ վերջ) Խեղքս սրվո՛ր չի հասնիր, տղե՞կն ինտոր հոս մնացեր է. ասոնց միաքը ան ալ հետ տանիլ էր հարկաւ. (պահ մը խորհելէ վերջ) կ'երևի թէ՛ Տիգրանին վրայ հասնելովը, ինքզինքնին շիտթած ու նաւ նետուած են, պղտիկն ալ աս կերպով հօրը ձեռքը անցեր է: Աս ա՛ս է. իմ կարճ խելքով ես ասանկ կը գտնամ: Հիմա ի՛նչ պիտի ըլլայ Տիգրանին վիճակը, ինչ պիտի ըլլայ ան անմեղ տղեկը, ինչ պիտի ըլլայ Աւիկ աղա՛ն, Վարսենիկ հանրմը՛: Ասոնք առջի՛ օրէն անխելքութիւն ըրին. 1000 ոսկիի պանքայի թուղթ տուին աղջըկան, Տիգրան ալ - էշութենէն չի կշտանայ - 500 ոսկիի չափ շրմէնտըֆէրի թուղթ ունէր՝ հանեց կնկանը տուաւ որ պահէ, Է շիտակը, ես ալ 1500 ոսկի ունենամ նէ գրպանիս կամ


սնտուկիս մէջ, խենդենալս կուգայ... (Պահ մը խորհելէ վերջ) Ախ՛ դրամ, դրամ, ինչեք՛ կ'ըլլան աշխարհիս մէջ քեզի համար:

ՀԵՂ. (Ներս կը մտնէ եւ շարով դառնապէս) Ախ, մեռե՛ր է, խեղճ կնիկը մեռե՛ր է, վախ հանրմը՛ս, վախ Տիկին Վարսենի՛կ...

ՎԱՐԴ. (Հեղնաւի հեկեկանքներուն մէջ. անյողոյող եւ խիստ բարձրաձայն գոչելով) Տուն աւրողներ, մարդասպաններ, ինքնասպաններ...



ՎԵՑԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Մարտիկա. Զարուհիին տան մէջ, ակնախտիղ առարկաներով զարդարուած, ցուցամոլիկ գեղատեսնակ մը, կողմնակի դռներով. պատէն կախուած է Զարուհիին պատկերը: Ճակատի դուռը բաց ձգուած է, փողոցի դուռը կ'երևի զխմացօք:

Ա. ՏԵՍՕՐԱՆ

ՏԻԳՐԱՆ, ՍՊԱՍԱՒՈՐ և ԿԱՌԱՊԱՆ

(Կառապան մը եւ Զարուհիին սպասաւորը, Տիգրանին թեւերը մտած՝ ներս կը բերեն ու արուի մը վրայ կը նստցնեն: Տիգրան ցնցոխներ հագած է եւ բեռ կրելու փոքր չուան մը կը կրէ, մէջքը վաքսած:)

ԿԱՌ. Գիշ մը ջուր, քիչ մը ջուր բեր:
(Սպասաւորը գաւարով ջուր կը բերէ. կը խըրճցնէ. Տիգրան կ'սրսի) Դուն ալ, խեղճ մարդ. ժամանակը գտար ողորմութիւն խնդրելու. վազող կառքին առջեւ կը կեցուի՞:

ՏԻԳ. (Յաւայի բողոքով) Ո՛չ պարոն, ես մուրացկան չեմ, շատ ժամանակ չի կայ որ ես Մարտիկա եկած եմ եւ թէ՛ այս քաղաքին փողոցները տակաւին չեմ սորված, փողոցին ան-

կիւնէն դուրս ելլելս ու կառքին տակը գլտորելս մէկ եղաւ, ինքզինքս կորսնցուցի... (Բռնորսիկը նայելով) Բայց հիմա ո՛ւր կը դառնուիմ, զիս ինչո՞ւ հոս բերիք:

ԿԱՌ. (Սպասաւորին) Ա՛ն ձեր Տիկինն ալ անտանելի բնաւորութիւն մը ունի որ, կառքը նստած ատեն, կ'ուզէ որ՝ կրակի՛ պէս վազեն ձիերը. վը՛... զզզ, օթամոպի՞լ է աս, թէ շրմէնսը քիչ էր:

ՍՊԱ. Ի՞նչ եղաւ որ, ի՞նչ պատահեցաւ:

ԿԱՌ. Ի՞նչ պիտի ըլլայ. խեղճ մարդը կառքին տակը մնաց. Աստուած պահեց որ կառքին անիւները վրայէն չանցան:

ՍՊԱ. (Գոռելով) Վա՛խ, վախ, վախ. մէկ տեղը ցաւեցա՞ւ արդեօք:

ԿԱՌ. Ինչ որ է, անցած ըլլայ, մէկ տեղը կը ցաւի՞, ըսէ՛ որ դեղ-դարման ընենք:

ՏԻԳ. (Կուշար ցոյց տալով) Սա, սա տեղս կը ցաւի, գլուխս կրակներո՞ւ մէջ է:

ՍՊԱ. (Մէջքը եւ գրուիք կը շոյեմ) Բա՛ն չի կայ. բան չի կայ, մի՛ վախնար:

ԿԱՌ. Փա՛ռք Աստուծոյ, անցած ըլլայ, անցած ըլլայ:

ՏԻԳ. (Ոսփի ելլելու ճիգ մ'ընելով) Ենոր... հա... կալ եմ:

ԿԱՌ. Նստէ՛ հոս, քիչ մը հանգստացի՛ր որ ինքզինքդ գտնես:

ՍՊԱ. Այո՛, այո՛ բարեկամ. նստէ՛, հանգըստացի՛ր:

ԿԱՌ. (Ապաստաւորիւն) Ինծի' նայէ. խեղճ մար-
դուն քիչ մը հոգ տար. թող հոս կենայ, մինչ-
չև որ Տիկինը վերադառնայ: Անիկա բարե-
սիրտ է, կարելի է բարիք մը կ'ընէ ազգատին:
Խեղճ մարդ: (Գրուիւն օրօրեղով կը մեկնի):

ՍՊԱ. Շատո՞նց է որ Մարսիլիա եկած ես.
բա՛րեկամ:

ՅԻԳ. Ա՛յ պարոն. հազիւ քանի մ'օր կայ:

ՍՊԱ. Ուրիշ անգամ բնաւ եկած չէի՞ր հոս,
Մարսիլիա:

ՏԻԿ. (Հասուցելով) Ասկէց 4-5 տարի առաջ,
ամիսի մը չափ ... բայց կ'աղաչեմ, զիս մի'
հարցափորձէք, առանկ բաներ մի' հարցնէք,
(Ոսֆի ելլելու միզ մը կ'ընէ)

ՍՊԱ. (Ելլելն արգիւելով) Ա՛յ բարեկամ, ո՛չ
չեմ խօսիր, քանի որ կը նեղանաք: Սուրճ մը
բերե՛մ ձեզի, թէյ մը եփե՛մ:

ՏԻԿ. Ա՛յ պարոն. շնորհակալ եմ, բան մը
չեմ ուզեր:

ՍՊԱ. Այն ատեն ձեզի աղաչանք մը ունիմ,
կը խնդրեմ որ չի մերժէք զիս:

ՏԻԿ. (Չարմահալով) Ի՞նչ բան, կ'աղաչե՛մ...

ՍՊԱ. Շատ թեթեւ բան մը... պնակ մը
ապուր կամ արգանակ պիտի պատրաստեմ եւ չի
պիտի մերժէք: (Մեկնելու վրայ)

ՏԻԿ. Բայց ի՞նչ հարկ կայ, աղնուսի՛րտ
պարոնս...

ՍՊԱ. (Չուարք ու ժպտուն) Այո՛, այո՛, հիմա
հանգի՛ստ ըրէք խնդրեմ, միայն թէ քիչ մը

գրան ուշադրութիւն ըրէք, վասն զի ես խո-
հանօցէն չեմ լսեր: (Ին ֆեխրեկն) Մեր տունն ալ
եկող գացողն այնքա՛ն շատ է որ, մի՛նչեւ իրի-
կուն գու՛ն բաց, գու՛ն գօցէ: (Կը մեկնի):

Բ. ՏԵՍԱԸՐՆ

ՏԻԳՐԱՆ (առանձին) յետոյ ԹՂԱՅԵՐ

ՏԻԿ. (Ոսֆի ելլելով) Է՛յ Մարսիլիա՛... այս
օտար երկրին մէջ, ուր երբեմն անունովս ու
վարկովս համբաւ չահած էի, անձովս անծա-
նօթ կը մնամ այսօր: Պարզ ստորագրութեամբս
հազարաւոր ոսկիներ կը գանձէի, ներկայու-
թեամբս բա՛ն մը չեմ արժեր: Այս ի՛նչ դժ-
բազդ ճակատագիր. Աստուած իմ...: Անձնաս-
պան ըլլալ փորձեցի, ինքզինքս ծովը նետեցի
ազատեցին, հանեցին դիս, հիւանդանոց դրին:
Հոն, փորձառու մարդիկ կ'ըսէին թէ անձնաս-
պանութիւնը՝ մարդասպանութենէն աւելի վատ
բան է: Արդարեւ ե՛ս ալ համոզուեցայ ասոր,
մարդ մը չա՛տ վատ ըլլալու է որ, իր նմանին
ապրելուն արդելք ըլլայ, բայց՝ իր կեանքը
դադրեցնող մարդը վատերուն ալ վատն է:
(Խորհուրդ տալու պէս) Ուրեմն ապրի՛մ, պէտք
է որ ապրիմ, դժնդակ ծառայութեամբ, մու-
րացիկի պէս հայթայթելով հացս, ապրի՛մ...
ապրիմ որ խաչս կրեմ: Սակայն ասիկա Աստու-
ծոյ կամքը չէ, այլ՝ կնոջ մը՝ ախ... մի՛. մի՛.
պէտք չէ՛ որ խորհիմ անոր վրայ: Չորս տարի

եղաւ. ալ բաւակա՛ն է որքան խոկացի՛, տըք-
 նեցա՛յ, պարապ տեղը պատճառներ փնտռեցի՛,
 ինքզինքս դատապարտեցի, նեղեցի ու մինչև
 այս վիճակիս հասայ: Աս անտանելի չարչարան-
 քին մատնուելէ ետքն ալ, դեռ անոր վրայ
 խորհիլ ու այսպէս կառքերու տակ գլտորուի՛լ...
 (Չեոխր կուրծփիւն սիւնեղոյ) Լուէ սի՛րտ, քնա-
 ցիւր հո՛գի... (Փողոցի դուռը կը զարնուի, Տիգ-
 րան կը փարակի. կրկին կը զարնուի, ակամայ
 կ'երթայ, կը բանայ):

ԹՂԹ. (Իրան մէջ երեւնալոյ նաւնակ մը կը
 ղնէ Տիգրանիւն ձեոխր) Չեր տան հասցէով չա-
 մակ մը, Պա՛րոն: Այս տունն ալ երբէ՛ք ծառայ
 չի հիննար, ամէն գալուս նոր սպասաւոր կ'ել-
 լայ դէմս: (Յրուիչը կը մեկնի դուռը գոցելով:
 Տիգրան, նաւնակը ձեոխր, դէպի ներս կուգայ.
 փողոցիւն դուռը կը զարնուի կրկին: Տիգրան
 կը բանայ եւ մէկ կողմ կը կեւնայ ամօրդած):

Գ. ՏԵՍԱՐԱՆ.

ՏԻԳՐԱՆ և ՄՈՒՐԱՅԻԿ ՄԸ

ՄՈՒՐ. (Փողոցի դռնէն ձեոխ կարկանդակով)
 Աստուծո՛յ սիրոյն, կտոր մը հաց տուէ՛ք, կամ
 քանի մը փարա՛:

ՏԻԳ. (Երեսն գալով) Տան տէրը հոս չէ,
 բարեկամ՛. ես ալ հոս... օտարական եմ:

ՄՈՒՐ. (Վայրկեան մը դիտելէ վերջ) Է՛յ

բաղդակից, ո՛ւր երթամ դէմս կ'ելլես, ալ ու-
 թիչ տեղ չի գտա՞ր որ հոս կուգաս մուրալու:
 Աս իմ թաղս է. իմ հացիս արգելք կ'ըլլաս.
 դուն ալ եկեղեցիին դուռը կամ ուրիշ տեղ
 մը գնա՛, մուրա՛: Ատ նամակն ինչ պիտի բլ-
 լայ. թուղթով, գրով ողորմա՞թիւն խնդրելն
 ալ այս տարիներու նորութիւնն եղաւ:

ՏԻԳ. (Ծաւն եւ ցարագին) Ո՛չ, բարեկամ.
 ո՛չ. կին մը դիս բաղդակից ըբաւ քեզի, ներ-
 կաս ոչնչացուց, ապագաս խորտակեց, բայց
 սիրտս իր մէջ բան մը ունի, ան չի՛ թողուր
 որ մուրա՛... երե՛ք օր է բան կերած չեմ,
 անօթի եմ, ոյժ չունիմ, կը մսիմ, բայց...
 բայց՝ չեմ մուրար... չեմ կընար մուրալ...
 ուրիշ օր մ'ալ նախատեցիր դիս այսպէս, ես
 մուրացկան չեմ...:

ՄՈՒՐ. Մուրացկանին մե՛ծն ես, երէկուրնէ
 մնացած հացի կտոր մը կայ պարկիս մէջ, եթէ
 կ'ուզես՝ քեզի տամ ան, հեռացի՛ր աս տեղէն,
 իմ թաղս մի՛ մուրար, եղբայր ենք մենք,
 իրարու մնաս չի հասցնենք:

ՏԻԳ. Այո՛ բարեկամ, այո՛, եղբայր ենք մենք,
 բայց ես չեմ մուրար, ունեցած քիչ մը ոյժս
 պիտի դործածեմ տակաւին հացս ճարելու և...
 Աստուա՛ծ... Աստուա՛ծ իմ... (Ծաւն, ծաւն
 ետ կը փաշտի):

ՄՈՒՐ. (Ինկնիրեւ) Մարդոց շատեր չպար-
 տութեամբ կը կործանին, կ'ըսէ մարգարեն.
 սըվոր նայէ՛, անօթի եմ, կ'ըսէ, հաց կու-

տամ իրեն, ողորմութիւնը կուտամ՝ չ'ընդունիր: Զարմանալի բան: Կի՛ն... այս վիճակին մէջ անգամ կնիկ կը մտածէ. ես, խորհուրթեամբ ձեռք բանալով, մուրալով մուրալով, 50 հատ ոսկի կարեցի հագուստիս մէջ ու տակաւին կին չեմ մտածեր, աս իր անօթի՛ վիճակին մէջ անգամ, կին... հէ՞, կի՛ն... (Կը մեկնի):

ՏԻԳ. (Նամակիկն հասցէն գնկելով եւ այրայրելով) Ի՞նչ կը տեսնեմ Աստուած իմ, «Տիկիկն Զարուհի Պողոսեան»... Կնոջս հասցէով նամակ մը ձեռքիս մէջ... ո՛վ բաղդ, մինչեւ ե՞րբ հալածես զիս... (Գողալով) Ի՞նչ ընեմ հիմակ... Ի՞նչ պէտք է ընել... (Վայրկեան մը խորհելով) Տարակոյս չի կայ թէ այր մը իրաւունք ունի իր կնոջ նամակը բանալու, թէ եւ փիլիսոսիայ աշխարհին մէջ ասոր հակառակը պնդողներ ըլլան: Բայց ո՛չ... (Եփոք ու դողդոջուն երեւոյթով կը դեգերի պատերուն զարդերը դիտելով) Ի՛նչ կը գտնուիմ Աստուած իմ... (Նամակը ձեռքէն կ'իջնայ սեկեակիկն մէջտեղը) Այս տունը որուն բնակարանն է արդեօք (Պատիկ վրայ կենցըլ լուսակարիկն հակդիպելով յանկարծ հոն քիկնարողիկն վրայ կ'իջնայ դեմքի վրայ՝ գոռալով ներքս) Զարուհի՛...

(ՊԱՏԿԵՐ)

Գ. ՏԵՍԱՐՈՆ.

ՏԻԳՐԱՆ, ԱԻԻԿ, ՎԱՐՍԵՆԻԿ և ՍԻՐՎԱՐԳ.

Տիգրան ինկած կը մնայ. թատերարանը կը ձգուի կէս մութի մէջ, վարագոյր մը կը բացուի, ուր երեւան կուգայ պարտէզ մը՝ ծառերով ու ծաղիկներով զարդարուն: Պարտէզին հանդիպակաց անկիւնը կ'երեւի գերեզմանատուն. ծանր եւ խիստ զանդաղ շարժումով կը բարձրանայ Աւիկ, սպիտակ սաւանով մը պարստածկուած եւ անշարժ կը ցցուի իր գերեզմանաքարին վրայ. նոյնը կ'ընէ նաեւ Վարսենիկ: Պարտէզին մէջէն, դողոջ քայլերով, կը յառաջանայ 5 տարեկան աղջիկ մը՝ Սիրվարդ. ուրուսեկանները տեսնելուն վրայ կը սահմուկի, ես ես քալելով փախչելու կը պատրաստուի: Աւիկ և Վարսենիկ կը ձգեն սաւանները եւ իրենց կենդանութեան տարողով կ'երեւին.

ՍԻՐ. (Ոգեւորուած) Մեծ-Հայրիկ, Մեծ-Մայր:

ՎԱՐՍ.) (Ձեռքով նշան կուսակ ու, Սիրվարդ ևս
ԱԻԻԿ.) նսկն սունե ու Տիգրանիկ սայ. սյեկը շուարս կը կենայ):

ՎԱՐՍ. (Յանք փայլերով առայ կուգայ. կ'սունե նսնակը. երկու մասով՝ մեկ ծայրէն բռնած կ'երկնցնի Սիրվարդիկն, երկու ֆայլ հետուիկն ու դեպ յառայ երկնցած. Սիրվարդ կը նայի Աւիկիկն. աս գիտով նշան կուսայ որ սունե նսնակը. Սիրվարդ նամակն սունելով հանդերձ կը վազէ Վարսենիկիկն փաքսուելու, աս կը պրդի, չի քողար իրեկն նպի. ձեռքով ցոյց կուսայ Տիգրանը. Սիրվարդ Աւիկիկն կը նայի. աս Տիգրանը ցոյց կուսայ «Միսցուր, հաշեցուր» կ'ըսէ. ձեռքի նշանով: Սիրվարդ չի հասկնար. բարբիթը կը նայի ապշած: Աւիկ ձեռքէնիկ երկու ուսեր միացնելով՝ կուսայ Սիրվարդիկն ու սնայ իր լըլայ. Վարսենիկ ալ սնեւերեւոյթ կ'ըլլայ):

ՄԻՐ. (Զիբեկիի ուսը ձախ ձեռքը. նամակը աջ ձեռքը բռնած՝ մտեմալով Տիգրանին) Հայրիկ... հայրիկ... ո՛ւր է Մամա:

ՏԻԳ. (Շարժվելով կ'արքննայ եւ կը նստի ու աջ կերը շփել կ'սխի):

ՄԻՐ. (Նամակը Տիգրանին գիրկը ձգելով կը հեռակայ իսկոյն, ձիբեկիի ուսը գլխէն վեր բռնած Պոսկերին վարագոյրը կը գոցուի ու կը շարժուի քեւր, ՏԻԳ. (Կոտորած վիճակով ուսի կ'երէ, նամակը կ'անէ փոփոխելով կը բաւայ զայն եւ հեղեղալով) Այս թղթի կտորը գուցէ նոր հարուած մը տայ սրտիս և զիսկիս նշխարքն ըլլալու սահմանուած ըլլայ: (Կտորադարով նամակը անձայն եւ ուրախութեամբ զգլխած) Այս, Տէ՛ր Աստուած, փա՛ռք քեզ, (Ծունկի գալով) Հաղար անգամ փառք կուտամ քեզի, ո՛վ ամենախորդ Աստուած. Բու կողմէդ եկած զժրագոյթիւնաց ներքև շատ անգամ յաջողութիւններ պահած կ'ըլլաս այսօր: (Արողի մը վրայ նստելով բարձրանայն կը կարգայ նաւակը):

«Ամենապիւրէի հարս՝ Տիկին Զարուհի,

«Մինչե հիմա քեզի շատ նամակներ գրեցի, բայց անոնց մէջ քեզի ցաւ պատճառով մասերը խնայեցի. թէպէտ միւս կողմէ, եղբօր՝ Օննիկին կը տեղեկագրէի ամէն բան՝ կատարելով մանրամասնութեամբ: Ասկէց ամիս մը առաջ, եղբօր հասցեով գրած նամակիս պատասխան ստացած չըլլալուս համար, կ'ենթադրեմ թէ անոր հետ զժուած ես. ինչպէս քանի՛ անգամներ պատահե-

ւ այս 3-4 տարուան մէջ. ուսի՛ սոյն նամակս ուղղակի քու հասցէիդ ղրկելով, հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները կուտամ քեզի:

«Մայրդ ձեր մեկնած օրը կարծածահար եղաւ ու մեռաւ. Աստուած լուսաւորէ հոգին: Հայրդ՝ Ասիկ աղան՝ իր կնոջ մահուան վրայ, անկողին ինկաւ, եւ, հակառակ հարսար բժիշկներու խնամքին, ասկէց իբր ամիս մը առաջ մեռաւ: Դո՛ւք ողջ ըլլաք. Աստուած ձեզի՛ երկար օրեր տայ: Սա՛ կարեւոր է ըսել թէ՛ հայրդ, լուսահոգին իր բոլոր հարստութիւնը աղջկանդ՝ Սիրվարդին կտակեց. թէպէտ բարեկամներու միջոցաւ շա՛տ աշխատեցայ, որ քեզ ժառանգութեան չի գրէ, բայց լուսահոգիին յամառ բրնաւորութիւնը գիտես արդէն, խօսք մտիկ չըրաւ: Հիմա, աղջիկդ՝ Սիրվարդը 5 տարեկան է եւ իմ քույր կը գտնուի ողջ առողջ եւ ձեռքդ կը համբուրէ:

«Նամակս առնելուդ պէս, Օննիկին հետ միասին, փութացէ՛ք Պոլիս գալ: Տիգրանէն ամենեւին տեղեկութիւն չունիմ. չորս տարի է որ անյայտ է բոլորովին:

«Շատ կարօտով կը համբուրեմ քեզ եւ եղբայրս: Ակնդէտ սպասելով ձեր գալստեան,

«Մնամ անմտաց ընկերուհիդ

ՆՈՅՆՄԻՆ

(Նամակը կը զետեղէ գրպանը. սփոխուած) Չորս հինգ տարի է որ, բաղդը խաղալիկ բրաւ զիս իրեն. ներելի է անշուշտ որ քիչ մըն ալ ե՛ս ա՛նոր հետ զբօսնում, լոկ համբերութեամբ վերա-

բերուելուս իտխարէն: (Բոլորսիբը նայելով) Այս
տունը կ'երեւի թէ իմ երբեմնի... սիրելի կնո-
ջըս բնակարանն է:

Ե. ՏԵՍԱԲԱՆ

ՏԻԳՐԱՆ և ՍՊԱՍԱԻՈՐ յետոյ ԶԱՐՈՒՀԻ

ՍՊԱՍ. (Մտնելով) Եկուր բարեկամ, եկուր
իմ սենեակս երթանք՝ Տիկինն եկաւ, քեզ հոտ
չի տեսնայ:

ՏԻԳ. Այո՛, երթանք, (Հեզկնելով) տիկինը
զիս հոտ չի տեսնա՞յ... (Կ'երթայ):

ԶԱՐ. (Ներս կը մտնէ խիստ անոյտ արդուզար-
դեր կրելով. կ'զբաղի գլխարկը հսկել: Սպա-
սաւորը կը մտնէ) Ո՞վ եկաւ հոս:

ՍՊԱՍ. Պարոն մը, որուն փամազբուծիւնը
մուցած ըլլալնուդ համար ցաւ յայտնեց:

ԶԱՐ. Ուրի՞շ:

ՍՊԱ. Աղքատ մուրացիկ մը, որ կարծեմ
ձեր կառքին տակ մնացեր էր, վարք, իմ
սենեակս է. մեկնիլ կ'ուզէ: Անա՛նիկ հպարտաղ-
քատ մը որ, խիստ դժուարաւ պնակ մը ա-
պուր խմցուցի: Անթուծեցէն ծունկերը կը
դողդղան խեղճին:

ԶԱՐ. Ինձի զրկէ տեսնեմ:

ՍՊԱ. Հա՛, չի մոռնամ ըսել... կարծեմ թէ՛
նորէ՛ն ստտիկանութեան հետ գործ պիտի ու-
նենանք:

ԶԱՐ. (Սարսափով) Ի՞նչ կ'ըսես...

ՍՊԱ. Ես այնպէս կը կարծեմ, վասնզի մար-

դը անունդ ու մականունդ հասկնալ ուզեց ու
պատկերդ զննեց երկա՛ր բարակ:

ԶԱՐ. Անունս չըսի՛ր ալ:

ՍՊԱ. Միւս անունդ ըսի՛. «Ալիս Թորոսեան»:

ԶԱՐ. Աս ալ ըսելու չէիր, բայց ինչ որ է.
ինձի զրկէ տեսնեմ: (Սպասաւորը կը մեկնի,
Տիկինը քիկնարոտի մը մեջ կը բազմի սիրա-
բար: Տիգրան ներս կը մտնէ անկոտ կերպա-
րակով. կը բարեւէ գլխով ու այլը կնոջը ոտ-
փերուն կը ստեղծէ միկնել վերջ: Տիկինը արգա-
հասելի նայումով մը կը ձգէ անոր փայ, Տիգ-
րան կարծես քէ՛ չի համարձակիր կնոջը երեսը
նայելու):

ԶԱՐ. Ո՞վ ես դու, Պարո՛ն. անունդ ի՞նչ է:

ՏԻԳ. (Կեղծ ու ընկճումած ձայնով մը) Աղ-
նիւ՛ Տիկին, ձեր սրբնթաց կառքը ինձի դպաւ,
վար ինկայ. ես ան մարդն եմ:

ԶԱՐ. Աղքատ մ' ես թէ՛ մուրացկան մը:

ՏԻԳ. Բազդի, դժբաղդ ճակատագրի հարուա-
ծեալ մը, զո՞հ մըն եմ, Տիկին:

ԶԱՐ. Զո՞հ մը. արկած մը ունեցած էք,
կը ցաւիմ:

ՏԻԳ. (Խոնարհութիւն ընելով) Շնորհակալ
եմ Տիկին. շա՛տ ազնիւ էք:

ԶԱՐ. (Քսակ մը տալով) Ա՛ռ՛ սա քսակը, մէջի
դրամը քեզի՛ ըլլայ. թեթեւցո՛ւր վիշտդ:

ՏԻԳ. Շա՛տ ազնիւ էք Տիկին, թո՛յլ տուէք
որ մերժեմ այս շնորհը: Իրաւ է որ կարօտ վի-
ճակ մը ունիմ, բայց՝ դժուար կուգայ ինձի

ողորմութեամբ ապրիլ, ճակտիս քրտինքով ճա-
րել կ'ուզեմ հացս: Ես, որ երբեմն աէր մըն էի
... հիմա խոնարհ ծառայ մը ըլլալու տրամա-
դիր եմ. սակայն այս իմ անշահ վիճակս, գար-
շելի երեւոյթս, վստահութիւն ներշնչելէ հե-
ռու ըլլալուն պատճառով, անօթի ալ կը մնամ
շատ անգամ: Բայց ի՞նչ հարկ կայ ցաւերս
վերյուշելու. Աստուած... Աստուած իմ... (Այ-
տերը կը շեղուի) ներեցէ՛ք Տիկին. ներեցէ՛ք
որ մեկնիմ. կնոջ մը պատճառած վիշտը ո՛չ
մէկ կինն եւ ոչ մէկ մարդ կրնայ անհետա-
ցընել...: Թողէ՛ք որ, ընկճուած սիրտս ինքնին
տառապի, քարին տակ ճմլուի, մինչեւ որ մահը
գայ սրբել զայն...: Հա՛, մնաք բարով, ազնիւ
եւ երջանիկ Տիկին. շնորհակալ եմ ձեր հիւրըն-
կալութենէն, (Մեկնելու վրայ):

ՁԱՐ. (Յուզուած եւ քերտ գայրոյքով ոսփի
կ'ելլէ) Բայց խեղճ մարդ, այդ թշուառու-
թեան մէջ հպարտութիւնը աղէտաբեր է ձեզի,
պէտք չէ՛ որ մերժէք այս բաւական գումարը,
զոր հաճութեամբ կուտամ ձեզ:

ՏիԳ. Բայց արդէն ըսի՛ թէ՛ ողորմութիւն
չեմ ընդունիր. ասիկա հպարտութիւն չէ, այլ՝
ուրիշ բան մը, զոր չեմ կրնար բացատրել.
Վասն զի գժբաղդները, թշուառութեան մէջ,
ամէնէն անխելքներն են. անոնց ըսածը ո՛րքան
ալ իմաստալից ըլլայ, նո՛յնքան յիմարտական
պիտի նկատուի: Օ՛ն, մի՛ խօսեցնէք զիս
Տիկին, թողէք որ երթամ, երթամ:

ՁԱՐ. Պա՛րոն, կը հասկնամ թէ շատ ազնիւ
եւ վեհանձն սիրտ մը կը կրէք. ողորմութիւն
չէք ընդունիր. ես ալ իբր այն չեմ տար ձեզ
այս գումարը. այլ՝ իմ պատճառով ձեզի հա-
սած վնասին հատուցում ընել կը փափաքիմ:

ՏիԳ. (Եւս ծակն ու հասիկ հասիկ արտասա-
նուրեւանք) Ձեր վառվառն ձիերուն քաշած կառ-
քին զիս տապալելը ըսել կ'ուզէք...

ՁԱՐ. Այո՛, ուրեմն առէ՛ք ասիկա, հաճեցէ՛ք
ընդունել: (Ձեռքի մէջ կը դնէ ֆուսկը):

ՏիԳ. Շա՛տ աղէկ, շնորհակալ եմ:

ՁԱՐ. (Ձեռքը Տիգրանի ուսին դնելով գրգ-
ռանօք) Ուրեմն կը ներէք ինձի. այնպէս չէ՞,
բարի՛ մարդ. եւ զիս չէք մատներ ոտիկանու-
թեան, այսօրուան արկածին համար:

ՏիԳ. Կ'աղաչե՛մ Տիկին, վատութեան, ստոր-
նութեան, մատնութեան նշո՛յլն անգամ չի կայ
ու՛՛ սրտիս եւ ոչ մտքիս մէջ:

ՁԱՐ. (Չղայիկ բարկուրեւանք պոսալով) Բայց
կ'աղաչեմ, Աստուծո՛յ սիրուն, չորս տարիէ ի
վեր կրած խղճի խայթիս քով, (Տիգրան կնոյր
դեմքի կը սերտեմ այտերը) քուկինդ ալ չեմ ու-
զեր ունենալ. «կը ներե՛մ» ըսէք եւ գացէք
գործերնուդ (ԵՏ ԵՏ երրայով). Մի՛թէ էրիկ մար-
դիկ ստեղծուած են կիները տանչելու համար:
Ես, զրկուած՝ հօրմէ, մօրմէ, ամուսնէ եւ զաւ-
կէ, դաւի, խարէութեան այս անել քառսին
մէջ տարուբեր...

ՏԻԳ. (Բնորոշելով, ձեռքի քսակը առջևը կը
նետե եւ իր քնակսն ձայնով) Քաշէ՛ ստ.բգ Զա-
րուհի՛, ծնողքիդ գիակին վրայ կը կոխես...

ՉԱՐ. (Վախճալով ձեռերով՝ ֆոլդնէի) Տիգ-
րա՛նն է, Տիգրա՛նը... (Տիգրան կոնակը դար-
ձնելով ծանրաբայ կը մեկնի):

2. ՏԵՍՏԵՐՆ


ՉԱՐՈՒՂԻ առանձին, յետոյ ՕՆՆԻԿ

ՉԱՐ. (Յորդառաս արցունքներ քափելով
կ'իյնայ քիկնարոռի մը վրայ եւ ծուկզիկ զար-
նելով) Ա՛հ, երբեք զգացած չէի թէ՛ ի՞նչ աս-
տիճան չարիք կրնայ յառաջ բերել կնոջ մը
անխորհուրդ մէկ քայլը: Ա՛հ ի՛նչ գժնդա՛կ
կացութիւն, Աստուած իմ... ձեռքովս կործա-
նած տանս մոխիրներուն վերեւ բերաւ զիս
դիպուածը: Ներկայով և ապագայով ջախջախած
մարդու՝ ամուսնիս... (Յարագիկ շեշտով) Ա՛խ,
ամուսնիս, ամուսնիս կմախքը տեսայ, գութի,
ողորմութեան կարօտ վիճակի մէջ. և ահա այս
քակը, ասոր մէջի գրամը, պերճախօս ու
հնչուն եզանակով կը հասկցնեն ինծի թէ՛ այս
մարդը՝ Աստուածավախ, բարի ու ազնիւ զգա-
ցումներու հետեւող մ'է: (Պահ մը զրախը ա-
փերուն մէջ կը խոկայ, յետոյ ցարագիկ եւ
փղձկոս շեշտով) կը կարծէի թէ՛ էրիկս զիս
պիտի հետապնդէ ու վրէժ լուծէ: Թէ՛ որ զիս
նախատէր, ձեծէր, սպաննէ՛ր իսկ, այսքան
թշուառ չի պիտի զգայի ինքզինքս: Այս ցուրտ

արհամարհանքը, այս անտարբեր լքումը, մա-
հէ՛ս շատ աւելի դժուար եկաւ ինծի: Ա՛խ...
Տիգրա՛ն. Տիգրա՛ն. (Պոռալով ու ժգիկ) Նոյե-
միին չար խրատներն ու նենգաւոր խորհուրդ-
ները զիս գլխէ հանեցին. Օննիկին խաբւրայ
սէ՛րը թունաւորեց զիս. անոր բոլոր բաղձանքը՝
քու շնորհիւդ ունեցած հարստութիւնս սրիկա-
յաբար մոխել է եղեր. ա՛հ, ան ամէ՛ն օր,
նորանոր միջոցներ կ'ստեղծէ ինչ գրամ քաշե-
լու համար. մինչդեռ դուն, քեզի տուած գրա-
մքս՝ քու ստակիդ մէկ փոքր մասը. չես ընդու-
նիր. ու այսպէս գլխուս կը զարնես ու կը
փախչիս ինչ: Ինչ եւ անոր,

ՕՆՆԻԿ. (կը մտնէ եւ դրան ետեւ կը մնայ
այլաձ. յետոյ նետուած քսակը գողնալով դուրս
սպրդի կը փոքայ):

ՉԱՐ. (Շարունակելով) Ամուսնիս եւ սիրա-
հարիս տարբերութիւնը, Աստուած իմ, կո՞յր
էի որ չէի տեսներ ասկէ առաջ: Ա՛խ, նո՛յե-
մի... (Գառնալով դէպի դուռը, ուրկէ դուրս
ելլելու վրայ է Օննիկ, եւ երկու ձեռքով դէպի
այն ուղղելով) Անէ՛ժք, քեզի, և եղբորդ: (Իրան
մէջ փախչելու դիմելով կը մնայ Օննիկ՝ քեռերը
դէպի դուրս, իսկ դեմքը դէպի ետեւ դարձնալով.
Չարունի աչ կը մնայ անշարժ, անեծք տալու
դիմելով մէջ, միկնելու որ փարսպոյրը իջնէ):




ՄԻՐՎԱՐԴԻՆ ՍԵՐԸ

ՏՐԱՄ

ՊՈԼՍԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՎԵՅ ԱՐԱՐՈՒԱԾ



Հետաքրքիր ընթերցողին կը յանձնանարուի կարգով՝

Միրվարդին Սէրը

վեց արարուածով, տաամաթիք թատերութիւնը, որ ներկայիս շարունակութիւնն է:

Միրվարդ՝ Տիգրանին և Զարուհիին միամօր զաւակը, որ օրրանին մէջ լքուեցաւ իր ցոփակեաց մօրմէն, կ'առեւանդուի անկէ՝ մանկամարդ հասակի մէջ: Սակայն սա, իր քաջասարտութեամբ, լուրջ մտքով ու հանճարեղ տարանդով, ո՛չ միայն անաղարտ կ'ելլէ անբարոյութեան տիգրմերուն մէջէն, ուր կը զլորուի թակարդի մէջ կոյտալով անսիրտութեամբ, այլ՝ ա՛յնքան կը լարձրանայ որ, իր հայրն ու մայրը կը միացնէ, ըսենք, վերստին կը պսակէ՝ ի՛ր խկ ձևօքով, անոնց քսան տարի բաժանեալ տառապելէն կտքը:



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Մ Օ Մ Լ Ո Յ Տ Ս Ե

- Սիրվարդին Սերը (Թասերգու քիւն)
- Հոգեբանու քիւն (Մանկավարժական)
- Կրկնասումար (Տոմարակալու քիւն)
- Բագրասումար

ԳԻՆ 5 ՂՐՇ.



Կեդրոնասեղի՞

ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

Չամբանքլար, 29

502

ԵՍ.ԿՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՏՈՒՄ

ՊՈԼՍԱԿԱՆ-ԸՍՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ
ՎԵՑ ԱՐԱՐՈՒՄԵ



1910

ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂՆԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԿԱԼԱԹԱ - Կ. ՊՈԼԻՍ



ՄԻՐՎԱՐԴԻՆ ՍԷՐԸ

ՏՈՒՄ

ՊՈԼՍԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Գ.Ե.Յ Ա.ԲԱՐՈՒՄՆԷ



1910

ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՂԻՒ
ԿՆՆԱԹԱ, Կ. ՊՈԼԻՍ



ԱՆՁԻՆՔ

Ներկայ ժամանակի բարեկամ

ՏԻԳՐԱՆ.— Պատանեկան հասակին մէջ Պոլիս եկած Հայաստանցի երիտասարդ մը. միջնահասակ, խոնամ, ամերում զէմքով, 35 տարեկան: Պոլսեցի աղջկան մը՝ Զարուհիին հետ ամուսնացած, բայց լքուած՝ և իր աղջկան՝ Սիրվարդին ժառանգութիւնովը հարստացած, բարեկիրթ և սուսայ մարդ մը:

ՍԻՐՎԱՐԴ.— Տիգրանին ու Զարուհիին աղջիկը. միտմեայ հասակին մէջ մօրմէն լքուած, մեծ հօրմէն ժառանգած հարստութիւնովը հօրը ձեռքը անցած, 14-15 տարեկան զեզեցիկ Օրբորդ մը: Համեստ, բարեկիրթ և խելացի ու լեզուանի:

ԱՆՆԻԿ.— Տիգրանի տան մէջ, Սիրվարդի խնամակալուհին. 50 տարեկան, սևեր հագած, ազէտ՝ բայց ինքնազիտակ, զուրգուրտ կին մը:

ԶԱՐԱՐ.— Իբր 40 տարեկան. խզճամիտ, բարեացակամ մարդ մը, Տիգրանի մտերիմ բարեկամը. ամերում զէմքով:

ՄԵԼԻՔԵՍՆ.— Իբր 55 տարեկան. փաստարան. սպիտակբաճան ցցուած մօրուքով, անխուժօրէն վար կախուած ու սիկանի ծուխէն սեցած պիտերով: Յէսը միշտ զլուխը:

ԶԱՐՈՒՀԻ.— Տիգրանի կինը և Սիրվարդի մայրը: Սա իր ամուսնութեան երկրորդ տարին, փախած է ընտանեկան յարկէն, հեռեկող սիրահարին՝ Օննիկին: Իբր 33 տարեկան փոփոխամիտ, զեզեցիկ կին մը, զոր, փախըստեանը պատճառաւ, հայրը իր ժառանգութիւնէն զրկուած է, բոլոր ունեցածը օրինաւորապէս կտակելով իր

Սոյն բաճարութեան ներկայացման իրաւունքը՝

Հեղինակին վերապահուած է:

Ներկայացման առփիւ բանակցութեան համար

Գիտե՛լ՝

Առեւտրական Վարժարան, Բակկալքի

Բերա, 4. Պոլիս:



հնգամեայ թուան՝ Սիրվարդին, զայս միայն գտնելով
իր մօտ մահուան անկողինն ինկած աստնս և անդխակով
խաբսո՛ իր աղջկան ու՛ր կամ ողջ ըլլայն ու չըլլայը, երբ
փեսան ալ անցարտ էր:

ՕՆՆԻԿ.— Զարուհիի համանին. իրր 40 տարեկան.
ածիլուած գէմքով, կնահածոյ չարժուծեւերով, համա-
կերպով և խորամանկ չարադործի թիւի մը: Ախտ ճար-
պիկ ու զխւրաթիւք: Սիրվարդին զուսածանը:

ՄԱՆՅՈՂ.— Օննիկի զուսակիցը: Յունական գլխար-
կով, անչաճ մօրուքով, նուազ վայելուչ հազուստով,
գող մարդ մը:

ՏԱՆՏԵՐ.— Փարիզ, Զարուհիին բնակած տան տէրը.
իրր 50 տարեկան, վայելուչ հազուստներով, մաքուր
զլխարկով, խղճամիտ ու բարի տրամադրութիւններով
օժտուած անձ մը: Իրր 30 տարեկան:

ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ.— Փարիզ, մին մօրուսաւոր
միւսը ածիլուած. 45—50 տարեկան. բիրտ կերպարան-
քով ու վստայուուն, հոանդատ սրաչածեաններ:

ԱՆՅՈՐԳՆԵՐ.— Լաւ հազուած, ֆէսով և զլխար-
կով, զուսպան ու հովանոց ձեռքերնին. երխտասարդ-
ներ և կիներ:

ԿԻՆ ՄԸ.— Բայց զոյն հազուստով, 25 տարեկան
երխտասարդուհի մը:

ՄԱՔՐՈՒՂԻ.— Հազիւ 30 տարեկան, սեւը հագած,
նիհար, աղքատ գործաւորուհի մը: Բարեխիտ ու աղ-
նիւ թիւի մը:

ԿԻՆ ՄԸ.— Իրր 40 տարեկան. խիտ գէր. պարզ
հազուած: Տնական զգեստով:

ՍԻՐՎԱՐԴԻՆ ՍԷՐԸ

ՊՈՒՍԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՔԷ ՏՈՒՄ ՎԵՅ ԱՐԱՐՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Կ. Պոլիս, Բերս, Տիգրանի տան միջնաշարիւր, կողմ-
նակի դռներով ընդարձակ սենեակ մը, չքեղ կարասի-
ներ, աթոռներ եւն. բայց անձաշակ կերպով զետեղուած:

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ և ԱՆՆԻԿ, յետոյ ՍԻՐՎԱՐԴ

ԱՆՆԻԿ. (Սեւեակիին մէջ արտունելով կը շըս-
կըրտէ սկսած կերպով.)

ՏԻԳ. (Ոսֆի վրայ) Սա աթուրը քիչ մը ան-
դի՛ն քչէ, սեղանը մէջտե՛ղը բեր. սա տունին-
տեղին քիչ մը աղէ՛կ նայէ. դուն իրա՛ւ է որ
ամսականով կ'աշխատիս հոս՝ բայց ես քեզ
բնաւ սպասուհի չեմ նկատած, այլ՝ ընտանի-
քիս մէկ անդամը: Բաւական ժամանակ եղաւ

տանս մէջն ես, ու տակաւին բնաւորութիւնս
չի հասկցար վերջապէս:

ՍԻՐ. (Կը մտնէ ուրախ գուարք, ձեռքը բռն-
նած դպրոցական գրքերը, կը դիմէ Տիգրանին
ու համարուելով զայն) Բարի իրիկուն Հայրիկ:
Դուն այսօր կանոնիս ես եկեր շուկայէն:

ՏԻՒ. (Փարտելով աղջկան) Այո՛ զաւակս. այս
օր քիչ մը կանոնիս եկայ:

ՍԻՐ. (Հօրը պարսկոցէն կատարելով) Հայ-
րիկ. ես քեզ շատ կը սիրեմ...

ՏԻՒ. Վա՛յ կեղծաւոր, դուն կ'երեւի թէ
նորէն յանցանք մը գործեր ես:

ՍԻՐ. Ո՛չ հայրիկ. ես քեզ շատ կը սիրեմ:

ՏԻՒ. Նայինք թէ ես ալ քեզ կը սիրե՞մ կոր...

ՍԻՐ. (Թախսանձելով) Հա՛րկաւ հայրիկ. տա-
րակոյս չկայ. դուն զիս շատ կը սիրես:

ՏԻՒ. (Աղջկան գլուխը շոյելով) Այո՛, աղջի-
կրս. այո՛. դուն իմ կեանքս, արեւս ու հողիս
եւ. առանց քեզի չպիտի կրնայի ապրիլ: Ես
քեզ շատ կը սիրեմ: (Համարուելով)

ՍԻՐ. (Համարորկելով ողորդելով) Հայրի՛կ.
եւ քեզ շատ կը սիրեմ, հայրիկ եւ քեզ չարա-
դանց կը սիրեմ, հայրիկ...

ՏԻՒ. Է՛, է, հասկցանք դաւակո, հասկցանք.
գնա՛ սպասաւորը կանչէ որ, սա ջերմոցը վառէ:

ՍԻՐ. (Ետ խշռուելով) Հայրի՛կ, սպասաւորը
վարը չէ:

ՏԻՒ. Ինչո՞ւ, ո՞ւր գնաց որ, հետը միասին
չեկա՞ր գպրոցէն:

ՍԻՐ. Ո՛չ հայրիկ, ես մինակս եկայ, ան
չեկաւ ետեւէս: (Դուռը կը զարնուի. Սիրվարդ
կը փազէ բանալ)

ՏԻՒ. (Թեքել խաւարեալ) Սիրվա՛րդ. հո՞ս
եկուր. ի՛նչ որ ալ ըլլայ, դուռը կոտորեն ալ՝
դուն չպիտի բանաս: (Աննիկ կ'երթայ բանալ)
Ասիկա քեզի քանի՛ անգամ պատուիրեր եմ,
բայց դարձեալ կը մոռնաս. ըսել է, դուն իմ
խօսքս մտիկ չես ընել:

ՍԻՐ. Ո՛չ, հայրիկ. մոռցայ. ես քու խօսքդ
մտիկ կ'ընեմ կոր:

Գ. ՏԵՍԱԼՈՒՆ

ՆՈՅՆԻ ԵՒ ԶԱՐԱՐ

ԶԱՐ. (Մտնելով) Բարի իրիկուն Տիգրան
էֆէնտի. քանի՛ օր է քեզ չեմ տեսեր. թէ որ
եւ քեզի տեսութեան չի գամ, դու զիս ամե-
նեւին չես փնտռեր:

ՏԻՒ. Ա՛տ ինչ խօսք է Զարար աղա. աշխար-
հի մէջ եթէ մտերիմ բարեկամ մ'ունիմ, ան
ալ դուն ես: Զե՞ս գիտեր որ, ես շատ մար-
դոց հետ կը նստիմ-կ'ելլեմ, բայց անոնց շատ
քիչերն են որ ինծի բարեկամ կ'ընտրեմ: Ի՞նչ
պէս ես, աղէ՞կ ես:

ԶԱՐ. Շնորհակալ եմ. դուն ինչպէս, աղէ՞կ ես:

ՏԻՒ. Է՛հ, փա՛ռք Աստուծոյ, նստէ՛ նա-
յինք: Դուն Սիրվա՛րդ. դա՞ս ունիս, գրելիք,
գնա՛ աղջիկս, սենեակդ գնա, աշխատէ,

վաղուան դասերդ արէ՛կ պատրաստէ :

ՉԱՔ. (Եստերով) Այսօր Սիրվարդին հետ կին

մը կարնոր սպասուհի՞ առեր ես, ի՛նչ ես ըրեր :

ԱՆՆԻԿ. (Կը մեկնէ . արտուները կը շփրտէ :)

ՏԻԳ. Չէ՛, (Աղջկան ուղղելով) Ա՞՞տ ինչ կնիկ է : Ո՞վ էր ան :

ՍԻՐ. Հայրի՛կ, գպրոցէն կուգայի, կին մը «Աղջիկս, ըսաւ, կեցի՛ր հովանոցիդ տակը մանամ, անձրեւէն չի թըջի՛մ» և թրամվայ հոտաւ, գնաց :

ՏԻԳ. Քեզի չե՞մ ըսեր որ, չի ճանչցած մարդուդ հետ բարեւ Աստուծոյ բարին չպիտի ընես : Ա՛նթ չէ՞ աս...

ՍԻՐ. Հայրիկ . կ'երեւի թէ գպրոցական ընկերուհիներէս մէկուն մայրն էր ան, վասնզի անունս գիտէր . «Սիրվարդ» ըսաւ :

ՏԻԳ. (Աննիկին ուղղելով) Է՛յ գա գործերդ վերջացու՛ր ու հոս եկուր նայի՛նք :

(Սիրվարդ կը մեկնի) :

ԱՆՆԻԿ. (Նեղականալով) Ի՞նչ է նորէն Տիգրան էֆէնտի . այսօր լա՛ն մըն ես եղեր . մա՛րդ կը փնտռես սը հետը կուի ընես : Մեղա՛յ եկա՛ր չեկար, աղջկան օձիքէն բռնեցիր . խեղճ աղջիկը բան մ'ըրած ունի՞ . Աստուծոյ գա՛ւն է ան : Գիշեր ցորեկ կարգալուս ետեւէն է :

ՏԻԳ. Աղջկան ո՞վ ինչ ըսաւ . իմ ըսելիքս քեզի է :

ԱՆՆԻԿ. Է ինէ՞ ի՛նչ կ'ուզես . չե՞ս թողուր որ տանը գործերովը պարապիմ :

ՏԻԳ. Իմ աչքիս ո՛չ տուն կ'երեւայ եւ ոչ տեղ . հո՛ս եկուր եւ ինձի պատասխա՛ն տուր :

ՉԱՔ. Մի՛ բորբոքիր, Տիգրան էֆէնտի . մի՛ բարկանար . հիմա սպասուհիին հետ կուի ընելու տեղը չկայ :

ՏԻԳ. Զաքար աղա, ես կուի ընող մա՛րդ եմ, դուն իմ բնութիւնս չե՞ս գիտեր : Քանի որ է որ իրարու վրայ գէշ գէշ երազներ կը տեսնեմ...

ՉԱՔ. (Ընդմիջելով) Աստուած բարին կատարէ . լայց գէշ երազներուն շատ կարեւորութիւն տարու չէ, թէ սչ անոնք ձախտողութեան կը տանին մարդը :

ՏԻԳ. Աննիկ քեզի հազար անգամ պատուիրեցի որ, աղջիկս, գպրոց գացած—եկած միջոցին, անպատճառ սպասաւորին հետ ըլլայ . առանց հսկողի տեղ չերթայ : Գուն աղէկ գիտես որ, ես ոչ սպասաւորի պէտք ունիմ հոս, ոչ ալ սպասուհիի, այդ ծառաները վարձած եմ, պա՛րզապէս աղջկանս վրայ հսկելու հա՛նար : Ա՛նթ չէ՛ ա, կը վախնամ կոր, աղջիկ գաւակ է, չըլլայ թէ փորձանք մը պատահի : Գուն հոս ամենեւին գործ մը չունիս . ծառաները պիտի աշխատին տանս մէջ, դուն անոնց վերակացուն ես . աղջկանս ալ խնամակալուհին : Սա՛չաի գործը չես կրնար կատարել ու շա՛րուսնակ, ամէն որ թերութիւններ կը պատահին :

ԱՆՆԻԿ. Տիգրան էֆէնտի . ատոնք պարապ խօսքեր են . հոս կը տեսնաս որ գիշեր ցորեկ

աղջկանդ՝ Սիրվարդին քովն ի վեր եմ միշտ .
 պատահանը, դուռը, վերը, վարը, վերջապէս
 ամէն տեղ կը հսկեմ վրան՝ որ չըլլայ թէ հիւանդ
 ըլլայ և փա՛ռք Աստուծոյ, ինէ, քենէ առողջ է
 ու կայտառ . երգելով, պարելով, ցատկելով
 ժամանակ կ'անցունէ, ալ ի՞նչ կ'ուզես . . .

ՏԻԳ. (Ընդմիջելով) Չէ՛. չէ՛. իմ բսածս կա՛մ
 չես հասկնար և կամ թէ անհոգ ու անգէտ կին
 մըն ես դուն . մինչդեռ ես քեզ այդպէս չէի
 կարծեր : Իմ ըսած խօսքերս քու մէ՛կ ականջէդ
 կը մտնեն՝ միւս ականջէդ կ'ելլեն :

ԱՆՆԻԿ. Չաքար աղա . Աստուծոյ սիրուն շի-
 տակն ըսէ . ես սա տեղ ի՞նչ յանցանք ունիմ :
 Առաւօտուն կանուխ աղջկան մազերը սանտրե-
 ցի, վրան գլուխը կարգի դրի և ծառային հետ
 դպրոց զրկեցի : Կէս օրին, աղջկան ճաշը զըր-
 կած ատննս, ծառան ըսաւ որ, Ֆէրիտիէ փո-
 ղոցը՝ հայրենակից մը տեսնելու պիտի երթայ .
 ես ալ ըսի որ, անկէ անցած ատենդ քրո՛ջս
 ալ հանդիպէ՛, վերջը շուտով եկո՛ւր : Ծառան
 գնաց և մինչեւ հիմա երեւան ելած չէ . ասոր
 հետ մէկտեղ ճաշի պահուն ժամ մը կայ տա-
 կաւին . մինչեւ ան ատեն կուգայ կը հասնի :
 Ի՞նչ կ'ըլլայ . հիմա ի՞նչ է պատահեր :

ՏԻԳ. (Բարկամայր) Ի՞նչ է պատահեր չի ,
 քեզի ո՞վ ըսաւ որ , սպասուորը քու կամ քրոջդ
 տրամագրութեան տակ դրած եմ . խո՛սք ու
 խորատ չը հասկցող կնիկ , (Ոսֆի եղելով) տակա-
 ւին դէմս կեցեր լեզու՞ կը շափես . (Աննիկ դուրս

կ'ելլայ) սըլո՛ր նայէ եղբայր . գիրկս նստեր ,
 մօրուքս կը փետտէ . ես աշխարհիս մէջ մէ՛կ
 հատիկ աղջիկ մ'ունիմ , բոլոր ուշադրութիւնս
 անոր պահպանման տուած եմ , ան ատ մասը
 բնա՛ւ չի՛ հասկնար ու հասկնալիք ալ չունի :

ՉԱՔ. Տիգրան է՞՞հետի . պարապ բաները
 հոգ կ'ընես քեզի՞ . . .

ՏԻԳ. (Ընդմիջելով) Ասիկա պարապ բան չէ
 ե՛ղբայր . ամէն մարդ իր ցա՛ւը գիտէ : Դուն
 այսչափ տարուան մտերիմ բարեկամս ես , բայց
 շատ անգամ զաղափարներս այդպէս վար կը
 զարնես , առանց հասկցած ըլլալու սիրտս ու
 հոգիս . . . գոնէ ա՛ս պարագային մէջ , ես իրա-
 ւունք ունիմ խիտ վարուելու :

ՉԱՔ. Այո՛ Տիգրան է՞՞հետի . այո՛ . իրաւունք
 ունիս . միայն սա կայ թէ՛ սչինչ բաներու
 համար շատ կը բարկանաս : Աշխարհի մէջ տե-
 սակ տեսակ վիշտեր կան : Փա՛ռք տուր Աստուծոյ
 որ կարող ու հարուստ վիճակ մը ունիս եւ ա-
 նուշիկ աղջիկ մը՝ որ մայրապետի մը համես-
 տութեամբ ու բարեսրտութեամբը օժտուած է :

ՏԻԳ. Մե՛ղք քեզի Չաքար աղա , դուն իմ
 մտերիմս ես ու չես գիտեր թէ՛ աշխարհիս ամէ-
 նէ՛ն դժբաղդ մարդը ես եմ . . .

ՉԱՔ. (Ընդմիջելով) Մեղայ ըսէ՛, մեղայ ըսէ՛,
 աս ի՞նչ ապերախտութիւն է , դուն աշխարհիս
 ամէնէն երջանիկ մարդն ես :

ՏԻԳ. Սխա՛լ , սխա՛լ : Իմ գլխէս անցածները
 գիտնա՛ս . . .

Ձև. Տիգրա՛ն էֆէնտի. հիմա թո՛ղ առ բա-
ները, քեզի հետ խորհրդակցութիւն մ՛ընելու
համար եկած եմ այսօր. կարեւոր գործի մը
համար է:

Տի. Հրամայեցէ՛ք, Ձեր տրամադրութեան
տակն եմ. բարեկամս:

Ձև. Մեր դրացին՝ Սարգիսը կայ, կը ճանչ-
նա՞ս ա՛...:

Տի. (Առհասարհանիով) Նոյեմիի՞ն էրիկը:

Ձև. Այո՛. զրպարտութեան մը հետեւան-
քով բանտարկուած է: Անոր անմեղ ըլլալուն
կատարելապէս համոզուած եմ: Հանգանակու-
թիւն մը կատարեցի մեր թաղին մէջ եւ հինգ
ոսկիի չափ ստակ հաւաքեցի, բայց տակաւին
15 ոսկիի պէտք կայ: Եկայ որ քու բաժինդ ալ
ստանամ: Վստահ եմ թէ՛ զիս չպիտի մերժես;
քանի որ շատ անգամներ, այսպիսի բարեգոր-
ծութիւններու մասին, ազնիւ սրտիդ ապացոյ-
ցը տուած ես:

Տի. Ի՞նչ բանի պիտի յատկացուի հանգա-
նակուած գումարը:

Ձև. Սարգիսին փաստարանին պիտի վճար-
ուի, որ հաստատուն կերպով կ'ապահովցնէ թէ՛
պիտի կրնայ անոր անմեղութիւնը զօրաւոր
փաստերով ապացուցանել և փրկել բանտար-
կեալը: Մե՛ղք է տղան. ազատենք:

Տի. Ձեմ հասկնար, բարեկամս. ի՞նչ պատ-
ճառով կը ձերբակալուի. ո՞վ ունի իրեն հետ
ամբաստանեալ և ո՞վ է դատախազը:

Ձև. Երկու խօսքով պատմեմ՝ ինքերը որ
լաւ հասկնաս: Սարգիս անուշեղէն շատ կը սի-
րէ. կինը՝ Նոյեմի սպասուհիին ձեռքով 2 պը-
նակ խմորեղէն՝ բակլալա պատրաստել կուտայ.
այդ խմորեղէններուն շաքարը ինք կ'անցունէ
ու մէկը՝ իր ձեռքով, կը տանի, ամուսնոյն
օ ենեակը կը դնէ, որ գիշերը անոր կերցնէ:
Միւս պնակն ալ սպասուհին կ'առնէ, կը տանի,
նոյն պնակին քով կը դնէ, վար կ'իջնայ: Այդ
միջոցին Նոյեմի սեղանատուն կ'երթայ. կը
նայի որ անուշեղէնը հոն չէ. սպասուհին կը
պօռայ—կը կանչէ (Մասով խորհրդաւոր շար-
ժու մէկեր ընկերով) ու, տարած պնակը վա՛ր բեր,
կ'ըսէ. ան ալ կը բերէ: Բանանք հիմա Բ.
վարագոյրը: Գիտնալու ես որ Նոյեմի... թե-
թեւ ու կասկածելի կենցաղ մ'ունի. մինչդեռ
Սարգիս՝ ըսէրջ, Աստուածավա՛րս, բարի ու
պարկեշտ մարդ մըն է...

Տի. (Ընդմիջելով) Այո՛, այո, այդ երկու
պարագաներն ալ ճիշդ են, ամէ՛ն մարդ ալ
կը վկայէ ատոր. ես ալ կը հաստատեմ:

Ձև. (Շարունակելով) Հա՛. Նոյեմի պտոյտի
կ'ելլէ. իրիկունը ճաշին ներկայ չըլլար—ինչպէս
որ շատ անգամներ կը պատահի եղեր — ուստի
Նոյեմիին ծերուկ հայրը, պնուաւ մայրը, 8-10
տարեկան տղեկը և ամուսինը՝ Սարգիս, կը
նստին, ախորժակով կերակուրնին կ'ուտեն.
կարգը կուգայ անուշեղէնի՛ն: Սպասուհին հոն,
—Աստուծով պիտի ըլլայ— կատակ մը կ'ընէ

Սարգիսին, «Քու անուշեղէնի բաժինդ վերը, սենեակդ է. կ'ըսէ. իրաւունք չունիս աս պնակէն ուտելու»։ Սարգիս ալ, զուարթ մարդ մը, գիտե՞ս ա՛... կ'ելլէ, իր սենեակէն պնակը վար կը լերէ, «Ձիս սիրողը ինձի թող գայ» կ'ըսէ, տղան անդիէն՝ «Հայրիկ. ես ալ քու պնակէդ պիտի ուտեմ, ես քեզ չատ կը սիրեմ» ըսելով հայր ու որդի կ'սկսին մէկ պնակէ ուտել...

ՏԻԳ. (Անհաւրել) Է ի՞նչ կ'ելլէ ատկէջ:

ՁԱՔ. Մտի՛կ ըրէ՛. յաջորդ առտուն նոյեմբին հայրն ու մայրը մեռած կը գտնուին եւ թու- նաւորուած ըլլալնին պաշտօնական քննութեամբ կը հաստատուի: Հիմա ընդհ. դատախազին պահանջման նայելով՝ երկու ոճրագործ կայ հոս. Սարգիս եւ նոյեմբ, որոնք հաւասարապէս պատասխանատու են. սպասուհին ալ մեղսակից ճանչցուած է: Գործը այս վիճակին մէջ է ասհուսակի:

ՏԻԳ. Եղածին վրայ քեզի չափ ցաւ կ'զգամ: սակայն այսպիսի մանուածապատ ու կնճռոտ խնդրոյ մը քննութիւնը կամ դատավարու- թիւնը չաւարտած, անոր միջամտութիւն ընելը՝ անմեղներուն, արդարներուն իրաւունքը կապ- տել ըսել է. ես չեմ մասնակցիր. Ձեզի ալ բարեկամարար խորհուրդ կուտամ որ՝ չեզոք կենաք այս գործին մէջ: (Աննիկ ներս կը մտնի)

ՁԱՔ. (Մեղմօրէն) Տիգրա՛ն էֆէնտի. ներե- ցէք որ ըսեմ. խօսքս չաւարտեցի տակաւին. փաստաբանը գնաց նախնական քննութիւնները

ուսումնասիրեց եւ վերագաւնալով յայտարարեց թէ՛ նոյեմբ կը դատապարտուի ա՛նուուզն 15 տարի բանտարկութեան. սպասուհին վաղը- միւս օր անպարտ կ'արձակուի. սակայն Սար- գիսի անմեղութեան հաստատութիւնը փաստա- բանական ճարտարութեան պէտք ունի:

ՏԻԳ. Ձաքա՛ր աղա. բա՛րեկամս. փաստաբա- նին հետ անգամ մը տեսնուելու եմ. թէ որ համոզուիմ՝ ուղածէդ աւելին կ'ընեմ:

ՁԱՔ. (Ոսֆի եղբորոյ աճապարսևոյ) Ես հի՛մա փաստաբանը կը գտնամ ու հոս կը բերեմ. անո՛ր հետ խօսէ. ատ աւելի՛ աղէկ կ'ըլլայ. (Գորս եղբորոյ) Ես ան հի՛մա կը գտնամ ու քեզի կը բերեմ:

ՏԻԳ. (Յսակարծ ոսֆի ցաւկերոյ ու ցաւկոր- սերոյ) Օրհնեա՛լ ես Աստուած. փա՛ռք Աստու- ծոյ: Օրհնեա՛լ ես Աստուած. փա՛ռք Աստուծոյ: Օրհնեա՛լ ես Աստուած. փա՛ռք Աստուծոյ... հա- շար անգամ փա՛ռք քեզ Աստուած...

ԱՆՆԻԿ. (Տիգրսևին ցաւկրսած միջոցին) Տիգրա՛ն էֆէնտի. ի՞նչ կ'ըլլաս կոր (Արգիլերոյ) խելքի՞դ եկար, Տիգրա՛ն էֆէնտի. Տիգրա՛ն էֆէնտի. խելքի՞դ եկար, ի՞նչ կ'ըլլաս կոր:

ՏԻԳ. (Նստերոյ) Նստէ՛ Աննիկ, նստէ՛: Փառք քեզ Աստուած. փա՛ռք քեզ Ապրուած...

ԱՆՆԻԿ. Քա՛ ի՞նչ կայ որ, ըսէ նայիմ: Ի՞նչ ունիս: Ի՞նչ եղաւ:

ՏԻԳ. (Այֆերը դէպի վեր յառած փսկ փսկ արսասևեղերոյ) Աս կը նի կը կը նար ժա մա- նա կին զիս թու նա ու ըել:

Աննիկ. (Քովրկնիսի) Աստուած իմ. խնն...
թե... ցեր... է'...

ՏԻՊ. (Առանց Աննիկին նայելու եւ ծակը
ծակը) Աս նոյեմբին կրնար զիս թունաւորել:
Կինս անոր խորհուրդով կրնար զիս մահացնել:
Փա՛ւք քեզ Աստուած. փա՛ւք քեզ Աստուած.
Փա՛ւք քեզ...

Աննիկ. (Քովր փոքրայով) Տիգրան էփէնարի,
կ'աղաչեմ. Աստուծոյ սիրուն ըլլայ. զիս կը
վախցնես կոր. ի՞նչ կայ. ի՞նչ եղաւ:

ՏԻՊ. (Չեռնէն փաշտով ու խովր նստեցնելով).
Նստէ՛ որ ըսեմ, նստէ՛, նստէ՛... (Նիւնեղու պէս,
զրուխը քիկնարոտին փրայ դէպի ետեւ կը ձգէ)

Աննիկ. (Վախնալով թոյրսիփը կը նայի):

ՏԻՊ. (Շեկուելով) Աննիկ. ա՛լ գաղտնիք չի
չի մնաց. ամէ՛ն բան պիտի պատմեմ՝ քեզի:
Դուն այլեւս տեւական կերպով Սիրվարդիս
խնամակալուհին ես, և ասկէց վերջը ա՛լ պատ-
ճառ չունիմ անոր մասին այնքան խիտտ հսկո-
ղութիւն կատարել տալու. Մտի՛կ ըրէ: Ասկէց
16 տարի առաջ ամուսնացայ այս տանը մէջ
Զարուհիին հետ: Աներս ու զոքանչս 500ական
ոսկի տունին կնոջս. ես ալ բոլոր ունեցածս հա-
նեցի անոր տուի: Մեր մեզրալուսինը Փարիզ
և Մարսիլիա անցուցինք. կինս քիչ ժամա-
նակուան մէջ սահելու տրամադիր ըլլալուն
ապացոյցները տուաւ: Վերագարծանք հոս,
Պոլիս. անուշիկ ձագուկ մ'ունեցանք՝ Սիրվարդը
Տղեկը, հազի՛ւ մէկ տարու կար՝ զրկուեցաւ մօր-

մէն: Զարուհի այս մարդասպան նոյեմբին
կարգադրութեամբ Օննիկին հետ փախաւ գնաց,
հետը տանելով 1500 ոսկիի չափ գոյք ու դը-
րամ: Շփոթած միջոցիս՝ աղջիկս՝ աչքիս լոյսին
պէս սիրած Սիրվարդս մէկ տարեկան հասակին
մէջ, տարի աներոջս տունը ձգեցի. իջայ մա-
ղազան որ քիչ մը ստակ առնեմ. աներս ետե-
ւէս հասաւ, դիս անկէ վաճառեց. յուսահատե-
ցայ կեանքէս. ինքզինքս ծովը նետեցի, հանե-
ցին անկէ, ազատեցին զիս և սկսայ թա՛փա-
ռական պտտիլ քաղաքէ քաղաք: Վրաս գլուխս
թափթիած, Մարսիլիայի փողոցները կը գե-
զերէի. մտադրազ վիճակիս մէջ կառքի մը տակ
մնացի, նուազեցայ. զիս առեր տարեր են
տուն մը. հոն վէրքերս քննեցին տեսան որ
ծանր բաներ չեն: Այդ տան սպասաւորը խըղ-
ճաց վրաս ու գնաց որ ինծի ապուր մը եփէ,
յանձնարարելով նաեւ որ դուռը բանամ երբոր
զարնուի: Հոն նստած՝ բազդս կ'ողբայի. մուրա-
ցիկ մը եկաւ զիս նախատեց՝ համբերեցի.
սպասաւորը զիս ծաղրեց՝ հանգուրթեցի. վեր-
ջապէս նամակատան ցրուիչն եկաւ, սա նամա-
կը՝ (Գրպանէն հանելով եւ կարողին հավրու-
րելով) Ա՛խ, մութէն լոյսը հանող, թշուառին
կե՛անք եւ ազատութիւն պարգեւող Աստուած,
դժբաղդութեան ճամբս՝ լալ բարիք կը զրկես
եզեր մարդուս. և ի՞նչ բարիք... շնորհ. երկ-
նային շնորհ... (Շփոթելով) Ի՞նչ կ'ըսէի... այո՛,

այս նամակը բերաւ, ինծի տուաւ ցրուիչը,
 զիս տանը սպասաւորը կարծելով: Տե՛ս, կնոջս
 հասցէն կը կրէ՝ այսօրուան դատապարտեալ
 Նոյեմբրին ստորագրութեան տակ...: Կարգամ՝
 մտի՛կ ըրէ: (Կը կարդայ բարձրաձայն)

Ամենասիրելի հարս՝ Տիկին Զարուհի,

Մինչեւ հիմա քեզի շատ նամակներ գրեցի,
 բայց անոնց մէջ քեզի ցաւ պատճառող մասերը
 խնայեցի. քէպէտ միւս կողմէ, եղբօր՝ Օճնիկին
 կը տեղեկագրէի ամէն բան՝ կատարեալ մանրա-
 մասնութեամբ: Ասկէց ամիս մը առաջ, եղբօրս
 հասցէով գրած նամակիս պատասխանի ստացած
 չըլլալուս համար, կ'ենթադրեմ քէ անոր հետ
 գժտուած ես. ինչպէս քանի՛ անգամներ պատահե-
 ցաւ այս 3-4 տարուան մէջ. ուսի՛ տոյն նա-
 մակս ուղղակի բոյ հասցէիդ դրկելով, հետեւեալ
 կարեւոր տեղեկութիւնները կուտամ քեզի:

Մայրդ, ձեր մեկնած օրը, կարուածահար
 եղաւ ու մեռաւ. Աստուած լուսաւորէ հոգիին:
 Հայրդ՝ Ալիկ աղան՝ իր կնոջ մահուան վրայ, ան-
 կողին ինկաւ, եւ, հակառակ հարսար բժիշկնե-
 րու խնամքին, ասկէց իբր ամիս մը առաջ մե-
 ռաւ: Դո՛ւք ողջ ըլլաք. Աստուած ձեզի՛ երկար
 օրեր տայ: Սա՛ կարեւոր է ըսել քէ՛ հայրդ, լու-
 սահոգին իր բոլոր հարսութիւնը աղջկանդ՝
 Սիրվարդին կտակեց. քէպէտ բարեկամներու մի-
 ջոցաւ շա՛տ աշխատեցայ, որ քեզ ժառանգու-
 րեցէ՛ չի զրկէ, բայց լուսահոգիին յամառ բը-

նաւորութիւնը գիտես աղէն, խօսք մտիկ չըրաւ:
 Հիմա, աղջիկդ՝ Սիրվարդը 5 տարեկան է եւ
 իմ բովս կը գտնուի ողջ առողջ եւ ձեռքդ կը
 համբուրէ:

Նամակս անճշտաբար պէս, Օճնիկին հետ
 միասին, փութացէ՛ք Պոլիս գալ: Տիրաւորէն ան-
 մենեւին տեղեկութիւն չունիմ. չորս տարի է որ
 անյայտ է բոլորովին:

Շատ կարօտով կը համբուրեմ քեզ եւ եղ-
 բայրս: Ակնդէտ սպասելով ձեր գալստեան,

Մնամ անսխալ ընկերուհիդ
 ՆՈՅՆԵՄԻ

Մնացածը կը հասկնաս թէ աս նամակը առ-
 նելա՛ւս պէս՝ հասաւ Պոլիս, աղջիկդ՝ Սիրվարդը,
 որ 5 տարու եղած էր, առի աս բանտարկեալ
 Նոյեմբրին ձեռքէն ու հաստատուեցայ աղջկանս,
 իր մեծ հօրմէն ժառանգած, այս տան մէջ:
 Աներթովէս աղջկանս կտակուած հարստութիւնը
 աճեցուցի եւ բազմացուցի մինչեւ այսօր: Այս
 Նոյեմբրին իմ անձնական թշնամիս էր. անկէ կը
 սարսափէի. և ս'ըշտի աղջիկս մեծնար, այն-
 քան մտահոգութիւնս կ'աւելնար: Ահա թէ ին-
 չո՞ւ համար քեհնէ կը պահանջէի որ միշտ լաւ
 հսկես աղջկանս վրայ:

Աննիկ. Ըսել է, ատ կնիկը ողջ է տակաւին:
 Տիգ. Ո՞րը. Նոյեմբրին. իբր սճրագործ մահ-
 ուան պիտի դատապարտուի, կամ ցմահ բեր-
 դարգեւութեան:

Աննիկ. Չէ՛, ան քու կնիկդ...

Տիգ. Չարուհի՞ն... ո՞վ գիտէ ուր մնաց:
Ո՞վ կը մտածէ անոր վրայ: (Դուռը կը զարնուի)
Բայց... Աննիկ, ինձի՛ նայէ, չըլլա՛յ թէ
Սիրվարդին բան մ'ըսես. պէտք է որ անիկա
իւր մանկութեան մէջ մայրը մեռած նկատէ,
առաջուան պէս. կը հասկնա՞ս: (Կը մտնեն Չա-
խար եւ Փասարան)

Գ. ՏԵՍՏԻՐՈՆ

ՏԻԳԻՐԱՆ, ՉԱՒԱՐ, ՓՍՍՏՍԻՐԱՆ և ԱՆՆԻԿ

ՓՍՍՏ. Բարե՛ւ Տիգրան էֆէնտի:

ՏԻԳ. (Ոսֆի կըրտով) Բարե՛ւ Մելիքեան էֆ.
հրամանեցէ՛ք:

ՓՍՍՏ. Ի՞նչ լուր, նայինք:

ՏԻԳ. Գիտէ՛ք անշուշտ, թէ՛ ի՞նչ բանի հա-
մար ձեզի ձանձրոյթ պատճառեցի:

ՓՍՍՏ. Այո՛, (Կը հագայ եւ կը նստի)

ՏԻԳ. Ընդհ. դատախազին հետ տեսնուած և
թուղթերն ուսումնասիրած էք եղեր:

(Մօտը կը նստի)

ՓՍՍՏ. Այո՛:

ՏԻԳ. Սարգիս, Նոյեմի և Սպասուհին...

ՓՍՍՏ. (Ընդմիջելով) Ամբաստանեալները՛-
ր՛մ (Կոկորդը կը մտնի)

ՏԻԳ. Ասոնց մէջ ոճրագո՞րծը ով է: Մեղա-
պարտը ո՞վ է:

ՓՍՍՏ. Օրէնքին առջեւ, երե՛քն ալ, հաւա-
սարապէս պատասխանատու են:

ՉԱՒ. (Մէջ նետուելով) Ի՛նչ. Մելիքեան էֆէն-
տի. դուք ինձի այդպէս չէ՛իք ըսեր: Սարգիսը
եւ սպասուհին անմեղ են, կ'ըսէիք:

ՓՍՍՏ. Կեցի՛ր բարեկամ. մի՛ աճապարեր.
Ընդհ. դատախազը երեքին դէմ ալ դատ բա-
ցած է. Կրնայ երեքն ալ դատապարտել տալ:
(Չախար կ'այրայրի)

ՏԻԳ. (Հանդարտ) Խնդրեմ. Ձեր կարծիքով
ասոնցմէ ո՞րն է անմեղը կամ ո՞րն է մեղա-
պարտը:

ՓՍՍՏ. Իմ անձնական համոզումս կ'ուզէք:

ՏԻԳ. Այո՛, Ձեր անձնական համոզումը:

ՓՍՍՏ. Սպասուհին անմեղ կը գտնեմ. կամ,
բո՛ւն ոճրագործին ձեռքը, անդիտակ գործիք
մը. վասն զի ան ո՛չ Սարգիսին մեռնելէն բան
մը կ'սպասէ, ոչ ալ այդ ծեր, պառաւ էրիկ-
կնիկէն: Բո՛ւն ոճրագործը Նոյեմին է, շաքարը
պատրաստեր եւ մէկ պնակին վրայ լեցուցեր է:
Յետոյ շաքարին մնացորդը ամանին մէջ թու-
նաւորեր, միւս պնակին վրայ լեցուցեր ու ի՛ր
ձեռքով տարեր ամուսնոյն սենեակը դրեր է.
որ գիշերը Սարգիսին կերցնէ: Բազդին բեր-
մո՛ւնքը նայէ որ, ատ պնակը վա՛ր կուգայ ու
մաքուր պնակը վե՛ր կ'երթայ, և ոճիւրը կը
գործադրուի՝ ակամայ՝ ուրիշներու վրայ: Հե-
տեւաբար, Նոյեմի հարիւրին հարիւր կը դատա-
պարտուի, իւր կանխամտածութեամբ ոճրա-
գործ, հա՛...

ՏԻԳ. Սարգիսի մասի՞ն:

ՓԱՍՏ. Սարգիս անմեղ է և եղածէն բո՛լորովին անտեղեակ. բայց պէտք է ասոնք որոշ ապացոյցներով հաստատել օրինական փաստերով: Ես խօսք կուտամ որ, Աստուծով Սարգիսն ազատեմ:

ՏԻԳ. Ես սարգիսի պաշտպանութեան համար 20 լիրա որոշած էք եղեր: Ապահո՞ւմ էք թէ անմեղ է անիկա:

ՓԱՍՏ. Կը կրկնեմ, անմեղ է:

ՏԻԳ. Ձեր իրաւունքը ամբողջապէս ե՛ս պիտի մտարեմ, փրկեցէ՛ք այդ անմեղը: Քանի որ դուք ալ այդպէս համոզուած էք:

ՓԱՍՏ. Շատ աղէ՛կ: (Կը հագայ) Ը՛հը, Ը՛հը:

ՏԻԳ. Սպասուհին արդէն կ'ազատի:

ՓԱՍՏ. (Խորհելով ու գլուխը մէկ կողմ շարժելով) Շատ շատ, անգիտակ գործիք պիտի նըկատուի, որուն պատիժը թեթեւ է, բան մը չէ: Տգեղ աղջիկ մը (Խնդալով) անոր համար ո՞վ պիտի ստակ վճարէ փաստարանին:

ՏԻԳ. Գանք Նոյեմբին, այդ թշուառ կնոջ կեանքը փրկելու միջոց մը պէտք է ստեղծէք, Մեղիքեան էֆէնտի, անոր համար յիսուն ոսկի վճարել աչք կ'առնեմ:

ՓԱՍՏ. Հարիւր ոսկի ալ տաք, հնար չիկայ. (Ոսփի կ'երչէ):

ՏԻԳ. (Փաստարանին ձեռքը բռնելով) Հարիւր լիրա պիտի վճարեմ, Մեղիքեան էֆէնտի. խօսքս խօսք է. միջոց մը գտէք զայն փրկելու:

ՓԱՍՏ. Կա՛րելի չէ բարեկամս. ան իր ոճիրը

խոստովանած է արդէն, ինչպէս որ պէտք է:

ՉԱՔ. (Գրպանը խառնելով) Այս 5 ոսկին քեզի տա՛. քանի որ փաստարանին ծախքը վրատ առիւր:

ՏԻԳ. Այդ 5 ոսկին բանար տար. երկուքը Նոյեմբին տուր, երկուքը հոն՝ Սարգիսին եւ մէկ ոսկին ալ սպասուհիին:

ՓԱՍՏ. Մնաք բարով:

(Զախար եւ Փաստարան կը մեկնին):

ՏԻԳ. (Գրան մեջէն) Մեղիքեան էֆ., փրկէ՛ Նոյեմբին, 100 ոսկի կը վճարեմ եւ աւելի...
ՓԱՍՏ. (Դուրսէն) Անհնարին է բարեկամ.

անհնարին:

Աննիկ (Տիգրանին քեռէն փաշտելով) Ասդին եկուր, խեղճ ես, ինչ ես. օտարին կնկան համար 100 ոսկի ստակ կուտաս. չէ՞ որ անիկա քեզի մեծ չարիքներ հասցուցած է:

ՏԻԳ. Այո՛, բայց հոգի ազատելը մե՛ծ բան է:

Աննիկ. (Գլուխը շարժելով) Հոգի ազատել մի:

ՍԻՐ. (Գրան մեջ) Հա՛յրիկ. հա՛յրիկ. անցեալ որ հետս խօսող կի՛նը տես. եկո՛ւր. շուտ եկուր որ տեսնես:

ՏԻԳ. (Դուռը կը փութայ եւ կը դիտէ)

ՍԻՐ. (Հեռուն ցոյց տալով) Նա՛, նա՛, հայրիկ. սա կինը. հոն կեցեր, մեր տունը կը գիտէ:


ՏԻԳ. (Գլուխը կախ առջեւը կը նայի)

ՍԻՐ. (Թախսանձելով) Հա՛յրիկ. ան ո՞վ է. հա՛յրիկ ան ո՞վ է:

ՏԻԳ. Մի՛ հարցներ զաւա՛կս. մի՛ հետաքրքրուի՛ր:



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Կ. Պոլիս, Բերս, Զարուհի տան մէջ, աննշան կաներով շտկուած սննեակ մը, փողոցին վրայ նայող պատուհաններով:

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԶԱՐՈՒՀԻ յետոյ ՍԻՐՎԱՐԴ և ՕՆՆԻԿ

ԶԱՐ. (Պատուհանին առջեւ նստած ինկնի-րեն) տասնը հինգ-տասնը վեց տարի է, քաջած չարչարանքս մէկ Աստուած գիտէ: Ի՞նչ էի, ի՞նչ եղայ: Որո՞ւն մտքէն կ'անցնէր: Գրուածը տեսնէի՛ չէի հաւատար: Ես, Բերացի ծանօթ ընտանիքի մը շառաւիղը, Աւիկ աղային աղջիկը, այս փլիկած տանը մէջ վարձուոր ըլլա՛մ, ա՛խ հայրիկ. ի՞նչ ըսեմ. չեմ ուզեր քեզ գերեզմանիդ մէջ վրդովել, լայց այս անխելք կարգադրութիւնդ որքան սուղի նստաւ ինծի: Շա՛տ փաստաբաններու դիմեցի. բաւակա՛ն ծախքեր ըրի. սակայն՝ ամենեւին միջոց մը չի գըտայ, ինքզինքս հօրս կամ ծնողացս իրը օրինաւոր ժառանգ ճանչցնելու մասին: Հայրս, իմ

բացակայութեանս, ու՛ր, ողջ կամ մեռած ըլլալէս. անտեղեակ բոլո՛ր հարստութիւնը օրինաւոր եղանակով կտակած է իր թոռան՝ աղջկանս՝ Սիրվարդին, անշուշտ այն մտածումով որ չըլլա՛յ թէ Տիգրան՝ ան վատ ամուսինս տիրապետէ անոր եւ մայրաղուրկ ձագուկս խեղճ մնայ աշխարհիս մէջ: Զա՛ր բաղդ, որ կը հակառակի ինծի, ու այնպէ՛ս մը կ'ըլլայ որ՝ Տիգրան ինէ՛ առաջ կը հասնի, Պոլիս, կը գըրաւէ հօրս հարստութիւնը եւ խնամակալ կ'ըլլայ զաւկիս ու անկէ մինչե՛ւ այսօր, 10 տարիէ ի վեր, այնպիսի՛ սեղմ ցանցերու մէջ կը պահէ զաւակս որ, չեմ կրնար ո՛չ անոր հետ յարաբերութիւն մշակել, ոչ ալ ինքզինքս յայտնել անոր: Երկու-երեք անգամ հանդիպում ունեցայ աղջկանս հետ, ա՛խ, ան անուշիկ հըրեշտակը զիս իր դպրոցական բնկերութիւններէն մէկուն մօրաքոյրը կը նկատէ եւ այնպէս կարծելով կը տեսակցի ինծի հետ: Թո՛ղ այնպէս ըլլայ. բաւական է որ ես իմ նպատակիս հասնիմ: Քանի՛ քանի անգամներ աղաչական նամակներ գրեցի ամուսնոյ՝ Տիգրանին. քահանանս՝ տաներէցս զրկելով զըլլում յայտնեցի, ան մերժեց զիս բացարձակապէս: Պարբիարքարամերժեց զիս բացարձակապէս: Պատու մը չունեցաւ, նի միջամտութիւնն ալ օգուտ մը չունեցաւ, երբ ես ստիպուեցայ դարձեալ Օննիկին դիմել, անոր խորամանկ մտածումներուն շնորհիւ աղջկանս եւ ժառանգութեանս տէր ըլլալու համար: Ես չար չե՛մ. Աստուած ալ գիտէ որ, իմ սըր-եւ չար չե՛մ. Աստուած ալ գիտէ որ, իմ սըր-

տիս մէջ ո՛չ չարութիւն կա՛յ, ոչ ալ չարագործութիւն. (Մորորուն կերպով ոսֆի եղերով) սակա՛յն... վերջապէս պէտք է ընդունիմ ու գործագրեմ՝ Օննիկին ծրագիրը. (Գաղսնի ըսելու պէս) ո՛ր եւ է կերպով վերջացնել Տիգրանին կեանքը, որով աղջիկս իր ժառանգոյն ինծի կը մնայ, կամ փախցնել աղջիկս եւ անով ապրիլ ու վայելել ժառանգութիւնս... այսպէսով թէ՛ աղջկանս տիրացած կ'ըլլամ, որ առաջին բաղձանքս է, եւ թէ՛ հարստութիւնս կրկին ձեռք բերած կ'ըլլամ: Ուղիղ միջոցներն ապարգիւն եղան. այս անուղիղ միջոցները սակայն պիտի յաջողի՞ն արդեօք. (Չեմքը երեսին դրած պահ մը խոկնակց մէջ, յետոյ կը ցատկէ յանկարծ եւ ոսֆը գէտիկը զարնելով ուժգին) Մա՛հ Տիգրանի՛ն. ես այս տունը յատկապէս այս նպատակին համար վարձեցի, (Վրէժխնդրական ցաւմաւր պատահանէն ցոյց տալով) ահա իմ հայրենական տունս, ուր ծնած եւ մեծցած եմ. եւ ուր հոգւոյս հատորը կը մնայ բանտարկուած: Ես անոր փրկութեան համար ամէ՛ն միջոց պիտի գործադրեմ: Նա անգիտակ է իր վիճակին. նա պիտի գիտնայ ամէ՛ն բան եւ հօրը մերժած շնորհը, ինք՝ աղջիկս պիտի շնորհէ իրմով: (Պատահանին առջեւ կը նստի ու կը զտակցէ): Սի՛րվարդ. ես քու մա՛յրդ եմ... զիս չե՞ս մեղքը նար... դուն իմ աղջիկս ես. ես քեզ շա՛տ կը սիրեմ... դուն իմ... զաւակս ես...:

(Պատահանէն դուրս նայելով) Յէ՛ր Աստուած. օգնէ՛ ինծի. հրեշտակս կուգայ. (Պատահանին փեղկերը կը բանայ ահ ու դողով) Ծունկերս կը դողան... Տէ՛ր Աստուած...: (Պատահանէն դուրս կախուած. դողդոջուն շեշտով) Սի՛րվարդ. Օրի՛որդ Սիրվարդ. ինծի՛ նայէ. նե՛րս եկուր աղջիկս. ինչո՞ւ այդպէս աճապարանքով կ'անցնիս, կ'երթաս, առանց բոլորտիքդ նայելու: Սիր. (Գարոցական գիւրջ ու տեսակ մեղքը բռնած ներս մտնելով) Բարի իրիկո՛ւն Տիկին: ՉԱՐ. (Կը շաղկէ, կը հանրուրէ աղջիկը ու անոր մեղքէն բռնած կ'իջնայ արտօնի մը վրայ) Աստուծոյ բարին. անուշիկ աղջիկս: Ի՞նչ ունիս. նստէ քիչ մը աղջիկս. Ո՞ւր ես գացեր այսպէս: Սիր. (Նստակնով) Չէ՛, չեմ նստիր. դպրոցէն կը դառնամ կոր: Շարագրութեան դաստանն նիւթ մը պատմեց, տուն պիտի երթամ, անմիջապէս գրեմ որ չի մոռնամ: ՉԱՐ. Ի՞նչ նիւթ է աղջիկս. կարդա՛ նայիմ. լեզու՛դ սիրեմ: Սիր. Թէ ինչպէս մայր մը ինքզինքը կը զոհէ իր զաւակը փրկելու համար: «Մայրական գորով»: ՉԱՐ. (Այլերը արբերով) Մայրական գորով... Սիր. Ինչո՞ւ կուլաք Տիկին. յուզուած էք: (Կը նստի ֆոյիկը): ՉԱՐ. Չէ՛ աղջիկս. միտքս բան մ' ինկաւ: Սիր. (Մանկական արտասանութեամբ) Ի՞նչ. միտքդ բան մը ինկա՛ւ:

ՁԱՐ. (Հիացակասն նայուածօր) Երանի՛ հօ-
րբդ Սիրվարդ. բայց մա՛յրիկդ... չե՞ս մեզքը-
նար ան:

ՍԻՐ. (Ապշահար) Ի՞նչ...

ՁԱՐ. Մայրիկդ ո՞ւր է. գիտե՞ս ան ո՞ւր է:

ՍԻՐ. (Տկար շեշտով) Չէ՛. չե՛մ գիտեր.
մեռա՞ծ է ան:

ՁԱՐ. Մայրիկդ տեսած չե՞ս. ընա՞ւ չես յի-
չեր ան. քեզի բա՛ն մը չե՞ն ըսեր անոր մասին:

ՍԻՐ. Հայրիկս արգիլած է. ատանկ ըսներ
չենք խօսիր:

ՁԱՐ. Քեզի բան մ' ըսեմ, քու մայրդ ողջ
է. մեռած չէ: Ան քեզ չափազանց կը սիրէ.
քու կարօտովդ կը մաշի. քեզի համար...

ՍԻՐ. (Ընդմիջելով) Ես այս իրիկուն հայրի-
կիս կը հարցնեմ. բայց ես գիտեմ, մայր չու-
նիմ. ես շատ պզտիկ եմ եղեր, երբ անիկա
մեռեր է:

ՁԱՐ. Չէ՛, հայրիկիդ բան մի՛ ըսեր. կամ
թէ երբոր գինով ըլլայ, այն ատեն հարցուր
որ քեզի պատմէ: Բու մայրդ ողջ է. մեռած
չէ՛. ասիկա լա՛ւ գիտցիր:

ՍԻՐ. Իմ հայրիկս երբէք գինով չէ եղած.
ան ինձի սուտ չի խօսիր. թէ որ մայրս ողջ
ըլլար՝ ան ինձի չէ՞ր ըսեր: Ես մայր չունիմ:

ՁԱՐ. (Իսրանէն փոքր քրքածուր մը հա-
նելով) Աղջիկս, քանի որ չես հաւատար իմ
խօսքիս... կեցի՛ր որ ըսեմ... ա՛ւ, սա դեզը
հայրիկիդ սուրճին կամ կաթին մէջ դի՛ր, որ

գինովնայ ու քեզի ըսէ քու մայրիկիդ ուր ըլ-
լալը եւ...

ՍԻՐ. (Գեղը զննելով եւ ընդմիջելով) Աճի՞ն
է այս Տիկին. իրագիտութեան մէջ դաս առած
ենք ասոր վրայ:

ՁԱՐ. Այո՛, անոր պէս բան մը. դուն բե-
րանդ չի զարնես, աղջիկս. մարդու՛ բան մի
ըսեր: Ուրիշ օր մը մայրիկիդ պատկերը քեզի
տամ որ...

ՍԻՐ. (Գեղը գրպանը դնելով եւ ընդմիջելով)
Ո՞ւր է. ասու նայիմ. կ'աղաչե՛մ Տիկին. ասու
նայիմ. տեսնեմ մայրիկիս պատկե՛րը...

ՁԱՐ: Չէ՛ աղջիկս. ուրիշ օր մը. հիմա չ'ըլլար:

ՍԻՐ. Ա՛խ տիկին մե՛... (Գեղը ծովնկե-
լով կը փոխի)

ՁԱՐ. (Ողջագուրելով) Հոգի՛դ սիրեմ զաւա-
կըս. մի՛ լար, կուտա՛մ. իրաւ որ վաղը կուտամ:

ՍԻՐ. (Ոտքի ելլելով) Ես հիմա կ'երթամ.
վաղը դարձեալ կուգամ. թէ որ աս անգամ ալ
դիս խարես ու մայրիկիս պատկերը ինձի չի
տաս, հայրիկիս կ'ըսեմ, գիտցած ըլլաս: Մը-
նաս բարով:

ՁԱՐ. (Ձեռքէն բռնած միկնէր դուռը փակե-
լով) կուտամ, աղջիկս. կուտամ: Բայց դուն
աս բաներուն վրայ մարդու խօսք չ'ախի բանաս:
ՍԻՐ. Շա՛տ աղէկ. շատ աղէկ (կը մեկնի)

ՁԱՐ. (Իրան մէջ կը կեկայ. յետոյ գլխով քա-
րելով) Երթաս բարձ՛վ աղջիկս. ցտեսութիւն:
(Ետը գալով եւ ինքնիրեն) Եթէ մայր մը ինք-

զինքը կը զոհէ, իր զաւակը իրկելու համար, ես
աւելի՛ գիւրաւ կրնամ զոհել ուրիշ մը, իմ գա-
ւակըս ձեռք անցնելու, անոր մեղքըսնոյշ չըր-
թունքէն մայրիկ կոչուելու, մի եւ նոյն ատեն
հայրենական ժառանգութեանս տիրանալու հա-
մար: (Ոսֆը գեօսիւնը զարնելոյ ուժգիւն) Մա՛հ
Տիգրանին. Աստուած ալ գիտէ որ. իմ սրտիս
մէջ ո՛չ չարիք կայ, ոչ ալ չարագործութիւն.
(Կասաղորէն) զաւակս կ'ուզեմ, զաւակս.....

Օննիկ. (Հայպէսոյ ներս կը մտնէ) Ի՞նչ ըրիր
ի՞նչ եղաւ. յաջողեցա՞ր:

ՉԱՐ. Ե՛րբէք, ի՛նչ կ'ընեմ չի հասկնար կոր.
մայր չունիմ կ'ըսէ կ'երթայ:

Օննիկ. Է աղէ՛կ. ատիկա մէկէն չըլլար,
համբերութիւն պէտք է. հարկաւ կամաց կա-
մաց պիտի համոզուի, որ դուն իրեն մայրն ես:

ՉԱՐ. Ես աւելի՛ կտրուկ միջոց մը գործա-
ծեցի, որ մէկ ձայնով ազատինք:

Օննիկ. Ի՞նչպէս նայինք:

ՉԱՐ. (Գաղսնի լսելու պէս) Բերած թոյնդ
Սիրվարդին տուի որ հօրը խմցնէ եւ ամէ՛ն
բան լմնեայ: Աղէկ չըրի՞:

Օննիկ. (Ոսֆի ելլելոյ ցաւաւաւը) Ինչպէ՛ս...
զա՛րձեալ սխալ, զա՛րձեալ սխալ: Աս ի՞նչ յի-
մարութիւն է պէ՛, աս քանի՞երորդ անգամն է,
որ մեր բոլո՛ր աշխատութիւնը պարապը կը հա-
նես: Մարտիլիա, հաղի՛ւ թէ յաջողութեան հա-
սանք, ձգեցեր անխոհմարար էթիէնին հետ

զայիր, Տիգրան ալ առիթ ունեցաւ յաջողու-
թիւնը ձեռք ձգելու: Հի՛մա, տակաւին ինքզին-
քըդ իբր մայր ընդունի՛լ չի տուած, ելար վեր-
ջին ընելիքնիս առաջ գործադրեցիր... Ի՞նչ
գիտնամ. խենթութիւն է ասիկա. կնկան խել-
քով առաջնորդուիլը կատարեա՛լ անմտութիւն
է եղեր: Մե՛զք ինձի:

ՉԱՐ. Ինչպէ՛ս, ինչո՞ւ կը նախատես զիս:

Օննիկ. Կ'աղաչեմ, Աստուծո՛յ սիրուն, հիմա
այդ մարդուն մահ պատճառելով՝ վրէժխնդ-
րութիւնն ընել կ'ուզես:

ՉԱՐ. Ա՛մենեհի՛ն. իմ միակ փափաքս աղջիկս
ձեռք ձգելու է:

Օննիկ. Բայց երբ անիկա քեզ չի՞ ճանչնար:

ՉԱՐ. Վերջէ՞ն ալ չը պիտի ճանչնայ:

Օննիկ. Տարակոյս չկայ. նախ թէ՛ ի՞նչպէս
պիտի հաւատացնես աղջկանդ, թէ՛ դուն իրեն
մայրն ես, և յետոյ դուն, քո՛ւ ձեռքովդ կու-
տաս թոյնը, անով կը մեռնի ամուսինդ, աղ-
ջիկդ ալ ատոր ականատես ու գիտակից կ'ըլլայ,
ու ետքը՝ իր աչքին լոյսին պէս սերած հայրը
սպաննող կինը՝ զքեզ իբր մայր պիտի ընդունի
ու «բարի եկար» ըսէ. հէ՛. կը կարծե՛ս միթէ:

ՉԱՐ. (Չղջում յայտնելոյ) Իբա՛ւ ես. իրա-
ւունք ունիս. սխալեցայ:

Օննիկ. Ի՞նչ օգուտ. սխալը ճանչնալէ յետոյ,
զայն դարմանելու միջոցը պէտք է խորհիլ:

ՉԱՐ. (Պոյսնելոյ) Խորհի՛նք Օննիկ. խորհի՛նք:

ՕՆՆԻԿ. (Մսախոհ) Միջոց մը կայ. թէ որ կարելի ըլլար ատ աղջիկը վաղը ձեռք ձգե՛լ: ԶԱՐ. Ատկէ գիւրին ի՞նչ կայ. առտաւօտուն դպրոց գացած ատեն մեր դրան առջիկէն պիտի անցնի. ներս կը կանչեմ զինքը:

ՕՆՆԻԿ. Պիտի կրնա՞ն համոզել որ մինչեւ երկաթուղւոյ կայարանը՝ Սիրքէճի քեզ հետ գայ միասին:

ԶԱՐ. Այո՛. ատոր համար խօսք կուտամ. մայրդ Մագրի-Գիւղ կը գտնուի ը՛սելուս պէս, գոնէ հետաքրքրութեան համար մինչեւ հոն կուգայ անշուշտ:

ՕՆՆԻԿ. Դժուա՛ր թէ յաջողիս:

ԶԱՐ. Ինչո՞ւ պէտք է ին՛չ կ'ընեմ՝ կ'ընեմ, ես ան շոգեկամքին մէջ կը մտցունեմ:

ՕՆՆԻԿ. Շա՛տ աղէկ. երբ դուն այդ մասին կը վստահացնես, ապահովապէս վաղը Փարիզի ճամբան կը բռնենք: Բայց հիմակուհիմա շանամ որ, տուած թոյնդ չի գործածուի գո՛նէ այս գիշեր:

ԶԱՐ. Ի՞նչպէս պիտի յաջողիս ատիկա ընել:

ՕՆՆԻԿ. Հիմա մութը կոխելուն պէս դուրս կ'ելլեմ, Տիգրանին պատուհանները կը քարտաւեմ, առանց երևնալու. այս կերպով կ'ստիպեմ հայրը որ դուրս ելլէ ու յանցաւորը ընտուէ և խուսափի ստոյգ մահէ մը, քանի որ անկէ մենք շահ չունինք, այլ՝ վնաս:

ԶԱՐ. Զըլլա՞յ թէ աղջիկս վախնայ բան, մը ըլլայ: Լաւ մտածէ:

ՕՆՆԻԿ. Զէ՛, միայն թէ պիտի շիտթէ և միտքը դրածը, այսինքն տուած աղէտաբեր խորհուրդդ պիտի յետաձգէ:

ԶԱՐ. Ա՛խ Օննիկ, (Երեսը կամքստրով) շա՛տ հնարագէտ ես:

ՕՆՆԻԿ. Սըկէ քանի մը սակի՛ տուր:

ԶԱՐ. Նո՛րէն ստակ, նորէն ստակ: Ի՞նչ պիտի ընես որ:

ՕՆՆԻԿ. Անցագիր պատրաստելու եւ երկաթուղիի տոմսակ գնելու համար, ստակ պէտք է՞, հոգիս: Եկուր նայի՛մ (Ձեռքէն փաշերով) Եկո՛ւր, բայց սա սնտուկդ: (Գուրս կ'երրէն)

ԶԱՐ. (Պակ մը վերջ ներս կը մտնէ եւ պաստիսակէն դիտելով սաղիսն ակնիսն բարակակաւ ասեւն կը դեզերի եւ գաղտնագողի ծակը ծակը արսասանորեակը) Զըլլա՞յ թէ աղջիկս վախնայ բան մը ըլլայ... (Վրէժխնդրութեամբ) Ա՛, ապակիները կը կոտորեն... Օ՛. հա՛տ մըն ալ... (Սարսափով) փողոցին մէջ մարդիկ հաւաքուցան, փոխաներ կը վազեն... մարդիկ կը խըռնուին հետզհետէ... Տիգրան դուրս ելաւ... ահա կը խօսի փոխաներուն հետ... անոնց հետ զնաց... ո՞ւր կ'երթայ արդեօք. հիմա որո՞ւ վրայ կը կասկածի... հա՛, մարդ մը ձերբազերի կը կախցին. (Գուրս ի վեր նայելով) ա՛խ Օննիկ կախցին. (Գուրս ի վեր նայելով) հաւաքուողները շարժիլ սկսան... ալ հանգարտեցաւ փողոցը... ամէն մարդ իր ճամբան կ'երթայ:

ՕՆՆԻԿ. (Խոչոր ֆայլերով վագերով եւ շատ ուրախ) Եղա՛ւ, եղաւ, լմնցաւ. Տիգրանի տան ապակիները կտո՛ր կտոր ըրի: Տանը մարդիկը բոլորն ալ դուրս թափեցին: Փողոցին մէջ խուճբ խուճբ մարդիկ կեցած՝ զանազան մեկնութիւններ կուտան դէպքին:

ՉԱՐ. (Մըսարոյ) Տեսա՞ն, քեզ տեսնող եղա՞ւ արդեօք:

ՕՆՆԻԿ. Ամենեւի՛ն, ամենեւի՛ն:

ՉԱՐ. Է՛՛հ աղէկ. սա կարասիները պիտի ծախէիր: Պատրաստուինք...

ՕՆՆԻԿ. Դուն մէ՛կ բան ունիս բնելու, աս ամէնը ես կը կարգադրեմ:

ՉԱՐ. Սիրվա՞րդը. աս դիւրին է:

(Դուռը կը զարնուի)

ԵՐԿՈՒԲՆ ԱՆ. (Ան ու դողով) Ա՛խ, ո՞վ է...

ՉԱՐ. Դա դուռը բա՛ց քիչ մը:

ՕՆՆԻԿ. (Մէկ կողմ պահուրեցնալ պէս) Դո՛ւն բաց, դուն բաց:

(Զարուհի կը բաւայ եւ ներս կուգայ)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԲ ԵՒ ՄԱՆՕԼ

ՄԱՆ. (Մըսարոյի ուրախութեամբ, ներս մտնելով) Բարեւ Չեզ. բանտէ՛ն կուգամ. Նոյեմբին ձեզի բարեկներ ունի: Ինծի պատուիրեց եւ շատ ազաչեց որ գամ Չեզ տեսնեմ: Քեզ կը ճանչնամ արդէն, Տիկին Զարուհի. պարոնն ո՞վ է:

ՉԱՐ. Օտար չէ:

ՄԱՆ. Անունն ի՞նչ է, ներեցէ՛ք. որովհետեւ գաղտնի ըսելիքներ ունիմ. պէտք չէ՛ որ օտարներ իմանան:

ՉԱՐ. Ետա աղէկ, հանգիստ ըրէք բարեկամ. կը տեսնուինք:

ՄԱՆ. (Հապճեպով) Բայց խնդրե՛մ պարոն. Չեք անուներ. եթէ չէ՛ք ուզեր մեզ միտակ թողուլ վայրկեան մը:

ՕՆՆԻԿ. Բայց ի՞նչ հարկ կայ ատար Նոյեմբին ի՛նչ որ ըսաւ ան ըսէ:

ՄԱՆ. ... Դուք Նոյեմբին եղբա՞յրն էք:

ՉԱՐ. Նստէ՛ք Պարոն, վայրկեան մը հանգիստ ըրէք: (Կը նստի) Դուք հիմա ուղղակի բանտէ՞ն կուգաք:

ՄԱՆ. Այո՛ տիկին, ես հիմա ուղղակի բանտէ՛ն կուգամ: Երեք ամիս է հոն էի գողութեան պատճառով: Դոնէ յանցա՞նք ունենայի:

ՉԱՐ. Ի՞նչպէս եղաւ որ Նոյեմբին տեսաք բանտին մէջ: Կիներուն տեղը գատ չէ՞:

ՄԱՆ. Հա՛րկաւ գատ է, միասին կ'ըլլա՞յ: Բանտին բոլոր մարդիկն ալ դիտէին որ ես պիտի ելլեմ եւ ո՛ր առաջ զանազան տեսակ յանձնարարութիւններ կ'ընէին ինծի: Այսպէս Նոյեմբին ալ երէկ ինծի պատուիրեց որ, բանտէն ելլելու՛ս պէս քեզ գամ տեսնեմ:

(Զարուհիին նշանիկ վրայ Օննիկ դուրս կ'երթէ)

ՉԱՐ. (Սրտը մօտեցնելով) Ըսէ՛ նայեմ, ի՞նչ կ'ընէ Նոյեմբին. ի՞նչ ըսաւ:

ՄԱՆ. (Յաժ ճայնով) Ասիկա Նոյեմբին եղ-
բայրը պիտի ըլլայ:

ՉԱՐ. Այո՛. այո՛. անոր եղբայրն է:

ՄԱՆ. Անո՞նք,

ՉԱՐ. Օննիկ...

ՄԱՆ. Հա, ճի՛շդ է, անոր եղբայրն է. ու-
րեմն կանչեցէք, կանչեցէք դայն. անկէ գազտնի
չէ ըսելիքս, մանաւանդ թէ Նոյեմբին յանձ-
նարարութիւնը աւելի իրե՛ն մասին է քան թէ
քեզի:

ՉԱՐ. (Իրան մէջէն) Օննի՛կ. ներս եկուր:
(Մակոյ սեղանին վրայէն առարկայ մը կը զր-
պակէ. կը մտնէ Օննիկ)

ՄԱՆ. (Ոսքի վրայ) Ինծի՛ նայէ, պարոն Օննիկ.
պարապ տեղը ժամանակ կորսնցուցիր. հիմա
վայրկեանները, մասնաւորապէս քեզի համար,
թանկագին են:

ՕՆՆԻԿ. (Մտադրոյ) Ի՞նչ կայ որ, ըսելիքդ
ըսէ, կ'աղաչեմ...

ՄԱՆ. Նոյեմբին բարեւ խօսեցաւ. ըսաւ որ՝
Չեր ազգականները, ամէ՛նքն ալ, ձերբակալ-
ուած ու հարցաքննութեան ենթարկուած են,
թոյնը հայթայթուլը երևան հանելու համար:
Իրմէն կրկին եւ կրկին պահանջած են որ թոյնը
իրեն բերուի յայտնէ, բայց անիկա քու տալդ
բոլորովին ուրացած է: Տարակո՛յս չկայ թէ
դուն ալ պիտի ձերբակալուիս այսօր կամ վաղը.
Եթէ կրնաս, ասկէ փախչելուն ճա՛րը նայէ. իսկ
եթէ երբէք յանկարծ ձերբակալուիս, չըլլա՛յ

թէ թոյնը քու միջոցաւ Նոյեմբին բերուիլը
խօստովանիս: Բոլորովին ուրացիր. հասկցա՞ր:
Հա, չի մոռնամ ըսելու թէ՛ քոյրդ ըսաւ որ,
անա՛նկ ալ ինծի ազատում չկայ անանկ ալ. կը-
սէին թէ և՛ տարի բանտարկութեան պիտի դա-
տապարտուի:

ՕՆՆԻԿ. Վա՛խ քոյրս, վախ...

ՉԱՐ. Խե՛ղճ Նոյեմբի:

ՄԱՆ. Ես ալ շատ մեղքեցայ, բայց ի՛նչ օգուտ
էֆէնտիմ ասանկ բաներու մէջ մարդ վարպետ
ըլլալու է. ձիւնին վրայէն քալելու եւ նշան
ձգելու չէ: Ասոր հետ մէկտեղ ձեռքովն ըրաւ
ճիտովը կը քաշէ: (Իռուր կը զարնուի)

ՉԱՐ. (Պատահանէն զրուիչ դուրս հանելով
դուռը կը նայի, յետոյ անմիջապէս դառնալով
ձեռքը աչիկն դիւսժ եւ զրուիչ Եսին ձգելով) ...
փոխ մը. ա՛հ, ձերբակալում. Օննի՛կ:

ՕՆՆԻԿ. (Մարտափախար) Չերբակալում... .

ՄԱՆ. Ինծի նայեցէ՛ք. մի՛ շուարիք:

ՉԱՐ. (Աղաչակաւ) Այո՛. օգնեցէք մեզի պա-
րո՛ն. կ'աղաչեմ:

ՄԱՆ. Ինծի նայեցէ՛ք. հիմա ես կը յանձ-
նուիմ փոխններուն. անոնք զիս քու տեղդ կը
ձերբակալեն ու կը տանին. այս խարէութիւնը,
կամ իրենց կողմէ սխալումը մինչեւ որ երևան
ելլէ, 1-2 օր կը տեւէ եւ դուք այդ միջոցին
կրնաք փախչիլ: Վճռեցէ՛ք, ժամանակ չունիք:

ՉԱՐ. (Թեւերը բաճակով) Ահ՛ սպարոն. ինչպէ՛ս
վարձատրեմ Ձեզ:

ՄԱՆ. Վե՛րջը, վե՛րջը, հիմա գնա՛ դո՛ւռը
բաց: (Զարուհի կ'երթայ բանալ)

ՄԱՆ. (Բաճկոնը հասնելով) Ինձի՛ նայէ Օն-
նիկ. շո՛ւտ. հանէ՛ սա հագուստներդ:

ՕՆՆԻԿ. (Ապշահար) Ի՞նչ բանի համար:

ՄԱՆ. Ոստիկանները ձերբակալուելիք անձին
հագուստին — կապուստին վրայ տեղեկութիւն
առած կ'ըլլան ընդհանրապէս. ուստի աւելի
աղէկ կ'ըլլայ որ, քու զգեստներովդ յանձնուիմ
անոնց, քո՛ւ տեղդ, քո՛ւ անուշովդ: Շո՛ւտ
ըրէ. հիմա ներս կուգան:

ՕՆՆԻԿ. (Բաճկոնը հասնելով) Աղէ՛կ. աղէկ. առ:
(Գրպանները կը խուզարկէ)

ՄԱՆ. (Չեղփեմ խղերով եւ հազնելով) Զգէ՛
եղբայր. ախթ է: (Բաճկոնը ձեռքը տար) Բռնէ
սա որ հագնիմ: (Օննիկ կը բռնէ Մանօլ
կը հազնի) Փողկա՛յ մը...

ՕՆՆԻԿ. (Իր փողկապը կը խկէ եւ կուսայ)

ՄԱՆ. Թիկնո՞ց. շուտ ըրէ՛ ժամանակ չունինք:

ՕՆՆԻԿ. (Կը փութայ բերել քովի սենեակեն)

ՄԱՆ. (Ինքնիրեն) Նոր փեսայի պէս հագուե-
ցայ... եւ ասիկա գողութիւն չի սեպուիք: Զէ՞
որ ինքն իր կամքովը կուտայ ամէն բան:

ՕՆՆԻԿ. (Թիկնոց մը բերելով կը հազնէ
անոր)

ՄԱՆ. (Թիկնոցը շոյելով) Օ՛խ. սա աղէկ
վայլեց: (Օննիկին ձեռքը խղերով) Շարժէ քեզ
մը եղբայր:

ՕՆՆԻԿ. Ի՞նչ կ'ուզես. բոլոր ըսածներդ տուի:

ՄԱՆ. Պարապ խօսք մի՛ ընեք. հանէ՛ դա
կօշիկներդ. նայիմ ոտքս կ'ըլլա՞ն:

ԶԱՐ. (Գրպան մէջ կենւարով ապշած) Ա՞տ ինչ
է. աս ի՞նչ կերպարանք է:

ՄԱՆ. Լռէ՛ Տիկին. ձայն մի՛ հաներ. քու
խելքդ չի հասնիր: (Ձեռքը գրուիք դնելով) Բանի
որ ետղծի Հասանին տեղ՝ Պալճի հասանը բանա
կը մտնէ, Մանօլն ալ՝ Օննիկին տեղ, ուստի-
կաններուն կը յանձնուի այսպէս:

ԶԱՐ. (Առաջ գալով) Բայց տե՛ղը չկայ ատանկ
բաներու. սխալմամբ դարկին դուռը, Օննիկը
հարցնող փնտռող չկայ:

ՄԱՆ. (Իկոյի դուռը խոյանալով) Ատ աւելի
աղէկ, Թիկին. ես հիմա կը հասկնամ:

ԶԱՐ. (Վրակ փաշելով) Հո՛ս եկուր...


ՄԱՆ. (Գանակ փաշելով) Ետ կեցի՛ր...

ԶԱՐ. (Կ'ընկրկի միջ ո՛ւրձակելով) Ա՛հ. մի՛...

ՕՆՆԻԿ. (Նստած տեղը սարսափահար) Ա՞
իրա՛ւ գող է եղբոր...



ԵՐՐՈՐԳ ԱՐԱՐՈՒՍԾ



Փարիզ, Զարուհի տան մէջ աննշան կաներով շրա-
կուած սենեակ մը. փողոցին վրայ բացուած սրտու-
հաններով: Պատին վրայ ստորճանակ մը կայ կախուած:



Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՍԻՐՎԱՐԳ, ԶԱՐՈՒՀԻ Ե ՕՆՆԻԿ

ՍԻՐ. (Ոսֆի վրայ) Ես գիտէի որ մայր շու-
հիմ. զիս խաբելով առիք հոս բերիք որ մայրս
տեսնեմ. քանի՜ որ է զիս վար դրեր էք հոս.
հիմա հայրս զիս կը փնտռէ. նամակս ինչ
ըրիք. ես անոր մէջ գրած էի հայրիկիս թէ
Մաքրի-գիւղ կը գտնուիմ. դուք այնպէս ըսիք.
անիկա թէոր նամակս առած ըլլար՝ գիշերով
պիտի գար զիս առնէր ձեր ձեռքէն: Դուք իմ
նամակս զրկած չէք եւ թէ ասիկա շատ հեռու
քաղաք մ'ըլլալու է. 3-4 օր ճամբորդութիւն
ըրինք երկաթուղիով: Ստախօսներ:

ԶԱՐ. (նսսած) Աղջիկս, նամակդ զրկեցինք,
պատասխանն ալ առինք, կ'ըսենք, չես հաւա-
տար. նայէ՛, հայրիկիդ նամակը (Գիր մը կուսայ)

ՍԻՐ. (Գիրը փաշտելով) Ես հայրիկիս գիրը
չե՛մ ճանչնար, աս անոր գի՞րն է նայէ՛:
(Կը նեւեւ նաւակը):

ՕՆՆԻԿ. (Նամակն առնելով գեսնեն) Կարելի
է որ գրագրին գիրն է. բայց հայրիկդ կար-
գացեր, ստորագրեր ու քեզի զրկեր է...
ցրուելը բերաւ, փոսթածին: Մտի՛կ ըրէ, նայէ
ի՞նչ կըսէ. (Գիրը կը կարդայ):

Սիրելի՛ զաւակս, բաւակա՛ն ժամանակ ելաւ
որ ինէ հեռացիր ես. իմացայ թէ մայրիկիդ
հովն ես ու ռա՛ճ հանգիստ ես...

ՍԻՐ. Հապա՛, հապա...

ՕՆՆԻԿ. (Կը շարունակէ)

Միտի Օճնիկին հետ ամուսնացիր, ու հետը
մէկտեղ, մայրիկդ ալ ա՛ն, եկո՛ւր: Հոն պարզ
պսակ մ'ըրէք, վերջէն հոս մեծ հարսնիք ես
խնջոյք կ'ընենք: Սիրելի աղջիկս, երկու այժեղ
կը համբուրեմ. մայրիկիդ եւ Օճնիկին՝ բարեւ
կ'ընեմ:

Նայէ՛, նայէ. ասիկա հայրիկիդ ստորագրու-
թիւնն է:

ՍԻՐ. (Ոսֆերը գեսիւնը զարնելով) Չե՛մ ուզեր,
չե՛մ ուզեր, չե՛մ կարգուիր, ես դպրոց պիտի
երթամ, չե՛մ ուզեր, հայրի՛կ, չե՛մ ուզեր,
(Զարուհիին վրայ փաշտելով) Ո՛ւր է մայրս, ինչո՞ւ
չէք ցուցներ, քանի որ հայրս ալ գրեր է թէ՛
մայրիկիս քովն եմ, հապա ո՛ւր է անիկա,

ինչո՞ւ համար չէք ցոյց տար ինծի, ի՞նչ գէշ մարդիկ էք դուք: (Կ'սկսի շայ):

ԶԱՐ. Մայրիկդ ես եմ սիրուն աղջիկս, չե՞ս տեսներ թէ քեզ որչափ կը սիրեմ, զաւա՛կս, մի՛ լար, հաւատա՛ ինծի. հայրիկդ՝ իմ ամուսինս ալ արդէն գրեթէ անհասկի:

ՍԻՐ. Ինծի թուղթ տուէք. գրիչ տուէք, պահարան տուէք. հայրիկիս այս գիշեր նամակ մը գրեմ, ըսեմ իրեն որ՝ հայրիկ, ես քեզ կ'ուզեմ, աս մարդուն հետ չեմ կարգուիլ. չեմ ուզեր ան:

ՕՆՆԻԿ. Է՛, հայրիկդ թէ որ ուրիշ նամակ մ'ալ գրէ ու ըսէ որ ինծի հետ կարգուիս, կ'ընդունիս. այնպէս չէ՞ անուշիկ նշանածս:

ՍԻՐ. Նշանածդ մի... մեռնիմ չեմ ուզեր քեզ:

ՕՆՆԻԿ. Ինչո՞ւ, չի հաւնեցա՞ր ինծի:

ՍԻՐ. Ո՛չ, ամենեւին, դուն՝ ստախո՛ս, խաբեբա՛յ, սրիկայ մարդ մըն ես:

ՕՆՆԻԿ. (Ապսակը բանալով վրան կը փայտ) Որո՞ւ գէտ կը խօսիս այդպէս. հի՛մա քեզ...

ԶԱՐ. (Յասկերով երկուքին մէջտեղ կեցած, բռունցքը վերցնելով դէպի Օննիկը) Օննիկ...
ՕՆՆԻԿ. (Պատիկ վրայ ցոյց տալով) Կը տեսնե՞ս աս ատրճանակը. ասիկա քեզի համար կ'սպասէ, գիտցած ըլլաս:

(Սիրվարդ կուշայ դողահար)

ԶԱՐ. (Զգածուած) Եկո՛ւր զաւակս անոր հետ մ'իյնար, եկուր իմ անուշիկ աղջիկս. եկո՛ւր. նամակ մ'ալ գրէ հայրիկիդ, բայց այս անգամ

ի՞նչ որ ըսէ պիտի ընես, հայրիկիդ կը հանգանդիս այնպէս չէ՞:

ՍԻՐ. (Վեր վեր նկատելով) Հայրիկս կ'ուզեմ, հայրիկս. թո՛ղ տուէք զիս. ես կրնամ հայրիկիս երթալ, ես կերթամ. (Իհպի դուռը կը փայտ)

ՕՆՆԻԿ. Սա դռնէ՛ն դուրս չես կրնար ելլել, գիտցած ըլլաս, յոյսդ կտրէ՛, քուկին հայրդ ալ հոս է, մայրդ ալ...

ԶԱՐ. (Սիրվարդին ձեռքէն փաշտելով) Եկո՛ւր, քեզի թուղթ տամ որ նամակ գրես զաւակս. (Կ'երբան) Ան խենդ է անոր հետ մ'իյնար:

ՕՆՆԻԿ. (Մտախոհ կ'երթուելի սենեակին մէջ)

ԶԱՐ. (Ներս մտնելով) Ինծի նայէ՛ Օննիկ, երկար բարակ խօսքերով զիս համոզեցիր որ, աղջիկս քեզի հետ ամուսնանայ, ես ալ հաւանութիւն տուի՛ յուսալով որ անիկա միշտ քովս պիտի ունենամ: Սակայն, այս բանին համար թէ որ բռնութիւն բանեցնես, ես իմ զաւակիս տէրն եմ, գիտցած ըլլաս, և թէ իմ գիակիս վրայ չի կոխած աղջկանս մէկ մագին անգամ չես կրնար դպչիլ, աս ալ լաւ զետեղէ մտքիդ մէջ ու անոր համեմատ շարժէ:

ՕՆՆԻԿ. Զարուհի՛, ինչո՞ւ վատ կ'ըլլաս. սխտած գործ մը գլուխ հանելու է: Դուն աղջիկդ ունենալ կը բաղձայիր, անհասկի փառքիդ հասար: Ես ալ անոր հարստութեանը աչք ունէի, նոյն իսկ անոր ծնելէն առաջ. թո՛ղ աչք ունէի, նոյն իսկ անոր ծնելէն առաջ. թո՛ղ որ ես ալ իմ նպատակիս հասնիմ. ընդհակա-

ուսկն օգնէ՛ ինծի որ յաջողիմ՝ ու հետզ միասին վայելենք զայն։

ՁԱՐ. Շա՛տ աղէկ, ամէ՛ն կերպով օգնեմ՝ քեզի. բայց աղջկանս վախ ազդող բռնութիւնն ներզ գիտ կը սարսափեցնեն։

ՕՆՆԻԿ. Ատոր գիւրիներ կայ, հոս տեղ փարիզ է, շատ բան կարելի է ընել. ո՞վ որու...

ՁԱՐ. Ի՞նչպէս։

ՕՆՆԻԿ. Սիրվարդը հետո կ'առնեմ...

ՁԱՐ. Ե՛ս ալ մէկտեղ։

ՕՆՆԻԿ. Հասցա տեսա՞ր մի. չես թողուր որ գոնէ յատակագիծս բացատրեմ, վստահ եմ որ պիտի հաւնիս։ Սիրվարդը կ'առնեմ՝ հետո, կը տանիմ, հոս փարիզի գեղերը. հոն ամայի լեռներուն մէջ... կը հասկնա՞ս. թէ որ համոզուեցաւ ու կինս եղաւ, ես ալ հարստացայ դուն ալ. իսկ եթէ յամառի... մինակս կը դառնամ քովդ։

ՁԱՐ. (Վախենալով) Բայց աղջիկս լեռներուն մէջ միտ մինակ...

ՕՆՆԻԿ. (Ընկնելով) Դառնալէս յետոյ կը գտնենք անոր տարեկից աղջիկ մը...

ՁԱՐ. (Հաշիտ պահանջելու պէս) Բայց իմ աղջիկս։

ՕՆՆԻԿ. (Բաւն մը պիտի ըստ սակայն չի հաւատարմակիր։)

ՁԱՐ. (Կասաղորդեալ փրակ փաշտով) Ինծի՛ նայէ Օննիկ. ինծի՛ նայէ, քուկին աչքերդ կը փորեմ! քեզ եղունգներովս կը խեղդեմ! ախ-

ուաներովս կտոր կտոր կ'ընեմ՝ քեզ. թէ որ աղջիկս անուշութեամբ կընաս համոզել, աղէ՛կ, ապա թէ ոչ զիտ իմ խելքիս թո՛ղ. այսչափ։

ՕՆՆԻԿ. Բայց...

ՁԱՐ. (Ձեռքը բռնելի վեր առած) Այսչափ՝ կ'ըսեմ՝ քեզի։

ՕՆՆԻԿ. (Մեղմ) Բայց թէ որ չի համոզուի, վերջապէս քիչ մը խստութիւն...

ՁԱՐ. Ամենեւի՛ն, ամենեւի՛ն, հասկցա՞ր. կորսուէ՛ սըկէ. գնա՛ անկողինդ մտիբ, ես իմ աղջկանս տէր եմ, ա՛լ քեզի չեմ վստահիր. աղջկանս դրան առջեւ շա՛ն պէս պիտի սպասեմ. տախտակամածին վրա՛յ պիտի պնակիմ և գիշեր ցորեկ պիտի հսկեմ որ ան չիյնայ իմ ճամբաս, գնա պառկէ՛. ես աղջկանս քով կերթամ։ (Չարուհի կը մեկնի)

ՕՆՆԻԿ. (Ինկնելով) Աս կնիկը արգելք պիտի ըլլայ յաջողութեանս. հիմա կը հասկնամ, առաջ ասիկա մաքրելու ճարը նայիմ։ (Կը մեկնի)

Բ. ՏԵՍԱԸՆՆ

ՍԻՐՎԱՐԴ. յետոյ ՕՆՆԻԿ և ՁԱՐՈՒՀԻ

ՍԻՐ. (Ներս մտնելով, նախակ մը կը գրէ, պահարանին մէջ կը դնէ, ու հետեւեալ հասցեն գրելով կը կարգայ բարձրանայն)

Մեծապատիւ

Տիգրան ԷՖ. Պողոսեան

Կ. Պոլիս-Բերս

ՍԻՐ. (Ինֆլիտրեկ) Օ՛խ, ինչ աղուօր նամակ մ'է աս, մե՛ղք որ ձեռքս կը դողայ, գիրս գէշ եղաւ. բայց՝ հոգ չէ: Այս գիրս հայրիկիս հասնելուն պէս, ա՛նպատճառ կուզայ զիս կ'առնէ: (Նամակը գրպանը կը գետեղէ)

ՕՆՆԻԿ. (Ներս մտնելով կամաց կամաց կը շտապանայ դէպի Սիրվարդ)

ՍԻՐ. (Յանկարծ ետին կը դառնայ եւ սարսափահար փախչելով) Ա՛խ մայրի՛կ, կ'սպաննէ կո՛ր...

ՁԱՐ. (Կը նետուի ներս խելակորոյս. կ'իյնայ աղջկանը փայ գորովանօք եւ գրոխը Օննիկին դարցուցած ու կասկած) Մարդոց ամէնէն վա՛տը. անմեղ աղջկանս արիւնը մտնելու համար. պէտք է որ ես մեռած ըլլամ արդէն: Ինչպէ՞ս ձեռքդ վրայ կ'երթայ այս հրեշտակին արիւնը թափելու: Վա՛տ. ստորի՛ն:

ՕՆՆԻԿ. (Այրայրած) Ձարուհի, սիրելիս դու՞ն ալ տղայ եղար, ու՞ր է դանակ, ու՞ր է գէնք. ինչո՞ւ պիտի սպաննեմ, այս իմ նշանածս չէ՞ միթէ. (Գլխու նշան կուսայ որ «այո» ըսէ)

ՁԱՐ. Հապա ի՞նչ գործ ունիս հոս գիշեր ատեն եւ ինչո՞ւ սարսափեցաւ Սիրվարդ:

ՕՆՆԻԿ. Ա՛հ, դու գիտես արդէն միտքս... միայն թէ՛ կեցի՛ր որ օրիորդին հասկցնեմ: (Կակազելով) հոս իրեն գալուս պատճառը (Ձարուհի կը հանդարտի, ետ կուզայ) նամակ մ'ը կը գրէր, ուղեցի կարգալ. (Սիրվարդ գրպանէն նամակը կը հանէ ու ծոցը կը խոքէ առանց նշխարուե-

լու. նամակը հանած միջոցին, ժամանակին Ձարուհիէն ստացած քոյնին քոյրածրարիկն ալ դուրս կ'երթէ ու գետին կ'իյնայ) բայց՝ հազիւ թէ սաքս սենեակէն ներս դրի, սկսաւ գիւ՛հաբի պէս պոռալ:

ՍԻՐ. Սու՛տ է, ու՞ր է նամակ. ես նամակ գրեցի՞:

ՁԱՐ. Հա՛, աղջիկս, գրած նամակդ տեսնելու համար է եկեր. ինչո՞ւ կը վախնաս, ես հոս եմ, ես քու պաշտպանդ եմ, մայրդ եմ, հաւատա՛, վստահէ՛ ինձի, զաւակս:

ՍԻՐ. Ձե՛մ ուղեր, չե՛մ ուղեր, ես հայրիկս կ'ուզեմ, հայրիկիս պիտի երթամ: (Կուրայ):

ՁԱՐ. Հա՛ աղջիկս. հա՛. (Նշան կուսայ) Օննիկին որ մեկնի) գրէ՛, նամակ գրէ հայրիկիդ. ես վաղը կը զրկեմ անոր եւ շո՛ւտ մ'ալ պատասխանը բերել կուտամ: Աս Օննիկը աղէկ է, բարի մարդ մ'ըն է, անկէ մի՛ վախնար. հետը անուշ անուշ խօսէ, սիրուն աղջիկս (Ձեռքով երեսը կը շոյէ, Սիրվարդ ձեռքը անդին կը մղէ) բայց երբ որ քու մէկ մազիդ դպչի՛, ասանկ առիւծի՛ պէս կը հասնիմ, դուն հողդ մ'ըներ. մի՛ վախնար: Գրէ՛ աղջիկս գրէ, ինէ ալ բարեւ գրէ հայրիկիդ հա՞, չի մոռնաս: Նա, թուրթուհի հո՛տ ինկեր է, առ նորէն գրէ որ, վաղն առաւ ինձի տաս որ զրկեմ: (Կը մեկնի)

ՍԻՐ. (Գետնին ինկած քուրքը կ'առնէ. կը շտապանայ ու գանձ գտածի պէս այժերը փայլեցընելով) Է՛հ, ա՛լ նամակ գրել չուղեր, ասիկա

աս կնկանը տուած գինովցնող դեղն է, հիմա ես գիտե՛մ ընելիքս. կեցէք դուք. Չեր երկուքին ալ խերը պիտի անիծեմ, բռնաւորներ, խոնարհեցէ՛ք տկարին առջեւ, Աստուած անոր հետն է: Ալ աղատ եմ հիմա. ախ՛ մէյմը Հայրիկս գտնայի՛... (Սիրվարդ կը մեկնի):

(Զարուհի եւ Օննիկ կը մտնեն)

Գ. ՏԵՍԱՐԳՆ

ՕՆՆԻԿ և ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՐ. (Մտնելով) Աս աղջիկը հասցէ՛, շրէ կըտրեցաւ, գիշերներն ալ քնացած չունի. խելքս գլխէս կը թռցնեմ կոր. թէ որ այսպէս շարունակէ՛ տարակոյս չկայ թէ հիւանդ պիտի ըլլայ:

ՕՆՆԻԿ. Բա՛ն մ'ալ չըլլար, հոգդ մ'ըներ:

ԶԱՐ. Աս ո՛րչափ խօսք, որչափ աղաչա՞նք ու պաղատանք ու դարձեալ օգուտ մը չի քաղեցինք. ալ ճարս հատաւ, ինչ ընելիքս չեմ գիտեր:

ՕՆՆԻԿ. Այսպէս թէ որ քու խելքիդ հետեւինք, ապահով եղիր թէ՛ բնաւ յաջողելիք չունինք. ոչ քե՛զ պիտի ճանչնայ իբր մայր. ոչ ալ զիս պիտի ընդունի իբր ամուսին: Հետեւարար հօրդ այն անագին հարստութիւնը տեւականապէս ձեռքանին տրամադրութեան տակ պիտի մնայ, դուն ալ սողին ին՛չ կ'ըլլաս եղիր:

ԶԱՐ. (Գանգատելով) Բայց թէ որ քու խելքիդ հետեւինք, վախի, սարսափի ու սպառնա-

լիքներու տակ ճնշելով՝ աղջիկս երեք օրէն գերեզման կ'իջեցնես:

ՕՆՆԻԿ. Գու միշտ այդպէս սխալ կը դատես իրերը. չես խորհիր թէ այս աղջկան վրաս հասցնելու ի՞նչ պատճառ ունիմ ես. ընդհակառակն՝ անոր ողջութենէն է որ յաջողութիւն կ'սպասենք մենք:

ԶԱՐ. Սակայն բռնութեան կերպերէ՛դ կը զարհուրիմ:

ՕՆՆԻԿ. Ո՛չ. քիչ մը խստութիւն եւ քիչ մը անուշ խօսքեր գործին լաւ կերպարանք մը կուտան եւ մարդը կը հասցնեն իր նպատակին:

Այս միջոցը չես թողուր որ գործադրեմ: Վստահ եմ թէ այս կերպով պիտի կրնամ աղջիկդ համոզել որ քեզ իբր մայր ընդունի եւ զիս իբր ամուսին: Այն ատեն երկուքնիս ալ մեր նպատակին հասած կ'ըլլանք եւ երեքնիս միասին՝ դուն, ես և Սիրվարդը՝ կ'երթանք կը հաստատուինք Պոլիս՝ նոյնիսկ հօրդ սանը մէջ. ուր հիմա Տիգրանը նստած է առանց երբէք իրաւունք ունենալու:

ԶԱՐ. Ախ՛, արդեօք պիտի ըլլա՞յ այդ օրը...

ՕՆՆԻԿ. Հետեւէ՛ խորհուրդիս, մէկ ամիսէն, միայն մէ՛կ ամիսէն պիտի յաջողինք կատարելապէս:

ԶԱՐ. (Գրոխն օրօրելով) Գու խորհուրդներուդ հետեւելով չէ՞ր որ աս փորձանքներու մէջ ինկայ:

ՕՆՆԻԿ. Չէ՛, այդպէս անցեալը յիշելը ալեկ

բան չէ, անցածը անցած է, ոչինչ պատճառ-
ներով իրար չի ցաւցնենք նորէն. հիմա ներ-
կան ու ապագան նայինք:

ԶԱՐ. (Պաղ վերաբերումով) Ներկան ու ա-
պագան նայինք (Կռնակը դարձնելով կը մեկնի):

ՕՆՆԻԿ. (Ետէն) Ու՞ր կ'երթաս կոր, խոսքը
լմնցա՞ւ հիմա:

ԶԱՐ. (Անտարքեր, առանց ետերը դառնալով)
Լմնցա՛ւ, Լմնցաւ: (Կը մեկնի)

ՕՆՆԻԿ. (Բազկաքոռիկն փրայ ընկողմանած
ծրագիր կը պահուստէ). Այս... օր Չարուհին
դուրս կը զը... կեմ: Սիր... վարդին հետ մի...
նակ կը մը... նամ հոս: Քիչ մը բռ... հուլիսն
եւ քիչ մըն ալ սէր ցոյց կուտամ: Կը ջա... նամ
որ ան իր կամ... քովը յանձնուի ինձի: Հապա
եթէ չընդունի... թէ որ... միջեւ վերջը յա-
մառի՞, (Տեղը կը փոխէ) Հապա եթէ չընդու-
նի... կը խղճեմ զայն, պարտէզը կը թաղեմ
ու փախաւ գնաց կ'ըսեմ: (Ոսֆի ցաւկելով) Աս
աղէկ: Ծրագրիս երկրորդ մասը: Սիրվարդը
թաղեցինք: Վերջէ՞ն, վերջը... (Արագ արագ
ֆայելով ու խօսելով) Գտնենք Հայ աղջիկ մը,
անունը գնենք Սիրվարդ, անոր հետ ամուսնա-
նամ ու երթամ Տիգրանին գէմ զատ բանամ ու
հարստութիւնը ձեռքէն կորցեմ, քանի որ Սիր-
վարդին կտակուած է անոր բոլոր ունեցածը:
(Պոսալով) Զարուհի՛, Զարուհի՛:

Գ. ՏԵՍԱՐՈՆ

ՆՈՅՆՔ ԵՒ ՍԻՐՎԱՐԴ

ԶԱՐ. (Չեոխը ամուսնով սուրճ քննած ներս
մտնելով) Սիրվարդ, ու՞ր ես աղջիկս, եկուր
սուրճ խմենք, կաթ առնեմ՞ քեզի: (Սիրվարդ
դուրս կուգայ սեկեակէն):

ՕՆՆԻԿ. Ա՛հ Զարուհի, սուրճ եփեցեր, շատ
չնորհակալ եմ. Սիրվա՛րդ, գաւաթները բեր-
կեցի՛ր ես կը բերեմ. (Օննիկ զարարները կը
բերէ, Զարուհի սուրճը երեք գաւաթի մէջ կը
շեցունէ, Սիրվարդ կ'ստնէ իր սուրճը եւ կը
ֆայշուի մէկ կողմ:)

ԶԱՐ. (Սուրճն ստնելով կը նստի) Գո՛վս ե-
կուր աղջիկս. ինչո՞ւ այդպէս հեռու կը նստիս:
(Գոռը կը զարնուի) Ո՞վ է արդեօք: (Գոռը
կը վազէ):

ՕՆՆԻԿ. Նայիմ՞ օ՛վ է ասիկա. (Կ'երթայ դուռ
մէջ կը կենայ: Սիրվարդ պահած քոյնը, օտար-
պիկ բայց անաղտոկ կերպով, երկու զարարնե-
րու մէջ կը շեցունէ ու տեղը նստած՝ հսկայա-
րէի խնայ կ'սկսի իր սուրճը:)

ՕՆՆԻԿ. (Կը դառնայ. ոսֆի փրայ սուրճը խը-
մելով ամապարսկով) Տան տէրն է, ամսական
կ'ուզէ անտարակոյս: (Կը մեկնի)

ՍԻՐ. (Ետէն նայելով նստած տեղէն ձեռք
կործիկն փակելով) Օխ... օխ...:

ԶԱՐ. (Կը մտնէ բարկացած) Անպիտան մարդ գիտէ որ ստակ պիտի ուզեմ, կը ձգէ դուրս կ'ելլէյ. բայց ես այսպէս չէի ընեք 1500 ոսկիներս ծախսեց, մսխեց, լմնցուց: Հիմա ազամանդներս, զարդեղէններս ծախելու վիճակին հասայ եւ ո՞վ գիտէ, որ մը... (Սորճն առնելով ու նորէն վար դնելով) Աս սուրճն ալ պաշեցաւ. ալ չի՛ խմուիր:

ՍԻՐ. Նորէն եփե՞մ Տիկ'ին:

ԶԱՐ. (Բոյրնիսի) Ելլեմ սնտուկս նայիմ, բան մը կա՞յ ծախուելու, ստակ պէտք է: (Բոյրնի սենեակը կ'երթայ):

ՍԻՐ. (Ոսթի ելնելով) Հա՛հ. ձիշոք ժամանակն է փախչելու. գեղեցիկ առիթ մըն է ասիկա: Գրուները բաց են. Օննիկ գնաց. աս կինն զրազուած է: Այո՛. ես կրնամ փախչիլ ասկէց: Անգամ մը որ յաջողիմ դուրս ելլել՝ հանդիպող մարդոց սաքերը պիտի պլլուիմ. իմ արցունքներս, ազանքներս պիտի լսուին անաարակոյս: (Բռունցք վեր առած, պատահականաբար վրայ յարձակելով բայց առանց գտնելու) Սա ապակիները վերէն վար շարդ ու փշուր ընեմ. յիմարական միջոցներով հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեմ վրաս. ստիպեմ կառավարութիւնը որ զրկեալին օգնութեան հասնի. ո՞ր են ստիկանները. միթէ անոնք արդարութեան պահապանները չե՞ն պարտաւոր չե՞ն պաշտպանել զիս այս անգութեւ անդգամ գաւաճաններուն գէմ: (Բոյրնիսի նայելով) ձի՛շոք ժամանակն է փախչելու: (Ոսթի

ծայրերուն վրայ կոխելով հագիւ դուրս ելած՝ ես կ'իջնայ սարսափած) Ա՛հ պարոն, դուք հո՞ն էք եղեր:


ՏԱՆ. (Դուռէն) Այո՛ օրիորդ, տիկինին հոս կ'սպասեմ, այսօր անպատճառ ստակ տալու է. եթէ չէք ուզեր որ խաղք ու խայտառակ ըլլաք թաղին մէջ:

ԶԱՐ. (Առանց երեւելու) Սիրվա՛րդ. ո՞ր կ'երթաս կոր, նե՛րս եկուր նայիմ:

ՍԻՐ. (Ներս գալով) Հոս եմ տիկին, հոս եմ, մի՛ վախնար, չեմ փախչիր: (Սիրվարդ խիստ առաջ շարժուելով նստակը ծոցէն կը հանէ. իր քաշկիկնակին ծայրը փակելով, դողդոջուն ձեռքով 40 օնց մը կը հանէ ու նստակը համբարեւով դրան մէջ կ'ելլէ) Կ'աղաչեմ պարոն. կրնա՞ք սա նամակս նամակատուն ձգել: (Կուգայ եւ ժողովուրդին դառնալով) Ա՛խ, օգնեցէք ինձի, փրկեցէ՛ք զիս այս գաղաններուն ճիրաններէն: Օգնութիւն, օգնութիւն...



ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՍԾ



Նախորդ արարուածին գոյքերն ու տեղը անխորտիս:

Ա. ՏԵՍԵՐԱՆ

ՉԱՐՈՒՀԻ, յետոյ ՏԱՆՏԵՐԸ և ՍԻՐՎԱՐԴ

ՉԱՐ. (Արտուի սր վրայ ինկած) Քանի՛ օր եղաւ երեւան չելաւ. չի հասկցուեցաւ թէ ի՛նչ եղաւ Օննիկ... բայց ի՞նչ պիտի ըլլայ. բաւական ուսումնասիրեցի էրիկ մարդիկը, շատ բաներ անցան գլխէս. անոնք ժամանակ մը կինը կը յարգեն, կը պաշտեն և օր մըն ալ այսպէս ոտքի տակ կ'առնեն կ'երթան: Գեղեցկութիւնն ալ տեւական յարգ չունի եղեր, անոնց քով: Հա՛. ստակ. թէ որ ստակ ունենա՛ս, աղէկ. բայց եկար տես որ մէ՛կ ստակ չի մնաց քովս. զարգեղէններս ալ կամաց կամաց կը հատնին կոր. ա՛լ ինքզինքս կը շիտթեմ...: Աղէ՛կ ա, գէշ-աղէկ էրիկ մարդ մ'էր քովս. պէ՞տք էր որ զիս ասանկ երեսի վրայ թողուր: Ա՛նպիտան

սրի՛կայ. ժամանակին ինծի համար հոգի՛ կ'ուտայիր, ամէ՛ն վտանգ աչք կ'առնէիր, հիմա քիչ մը նեղութեան չի կըցար դիմանալ, ու ձգեցիր գացիր: Ես ալ կը կարծէի թէ՛ օրինաւոր ամուսինի պէս, հետս պիտի ըլլայ մինչև վերջը... Երաւ յիմար եմ եղեր. ապուշ ու շա՛տ պարզամիտ: Մե՛ղք. հազար մեղք. խա՛բերայ, ա՛նպիտան, սրի՛կայ: (Գրան զանգակը կը լսուի: Գորս ելլելով) Ո՞վ է արդեօք... Աստուած իմ. ծունկերս կը դողան. Օննիկը չըլլա՞յ:

ՏԱՆ. (Գորսը) Բարե՛ւ տիկին. տեսա՞ր. ես քեզի չըսի՞...

ՉԱՐ. Նե՛րս եկուր. մի՛ պուար. ներս եկուր: (Կը մտնեն):

ՏԱՆ. Ի՛նչ պիտի պուամ. (Գրպանէն ծրար մը հանելով) Չեզի ըսի արդէն թէ աս մանեալը աչքիս աղէկ չերեւիր. դու պնդեցիր թէ մօրմէկ. մնացած է, եւ ապահով ես թէ՛ կեզծ լսերը տես: Մէ՛կ ֆրանք անգամ չ'արժեր. կեզծ է. բո՛լորովին կեզծ...:

ՉԱՐ. Ի՞նչ կ'ըսէք Պարոն, 1000 ֆրանքէն աւելի կ'արժէ, առած ժամանակս սոկերիչներուն գնահատել տուի...

ՏԱՆ. (Ընդմիջելով) Այդպէս մի՛ խօսիք Տիկին. ապա թէ ոչ պիտի ըսեմ թէ զիս ապուշի տեղ կը դնէք. քթիս խնդալով տունս ձրի

կընտարք. և կամ թէ... խաբուած էք. չարաչար խաբուած էք:

ՉԱՐ. Ա՛հ պարոն. մի՛ ըսէք այդ:

ՏԱՆ. Իրականութիւնը՝ Տիկին:

ՉԱՐ. Չոյզ մը ապարանջան ունիմ. բերե՛մ. տեսէ՛ք... թէոր գործերնուդ կուգայ՝ զանոնք ծախենք. ես Ձեր տան վարձքը չի վճարելու կողմը չեմ, միայն թէ այս օրերս քիչ մը ստակի մասին նեղութեան մէջ եմ:

ՏԱՆ. Թէ որ անո՛նք ալ աս ապրանքէն են, պարապ տեղը մի՛ յոգնիք:

ՉԱՐ. Ո՛չ, ո՛չ. բերե՛մ, տեսէք անգամ մը: (Բերել կը վագէ):

ՏԱՆ. (Ինկնիւրեմ) Կատարեալ փորձանքնիս գտանք աս կնոջ երեսէն. բան գործ չունիս, գնա՛, եկուր որ տան վարձք գանձես. այսչափ դժուարութեամբ առնուած ստակին մէջ ի՞նչ խեր կը մնայ: (Կը նստի)

ՉԱՐ. (Արկղիկ մը մտնելով) Պա՛րոն, մանեակիս կեղծ ըլլալուն հաւատա՛լս չի գար:

ՏԱՆ. Թող քու ըսածիդ պէ՛ս ըլլայ:

ՉԱՐ. (Արկղիկէն հանելով) Սա ապարանջանները...

ՏԱՆ. (Չնկելով) Ասիկայ սակի է. բայց յայտնի է թէ քարերը սո՛ւտ են, ապակի՛:

ՉԱՐ. Ի՞նչ կ'ըսէք. հիմա խելքիս կուգայ:

ՏԱՆ. (Խոժոռ դեմքով) Ատանկ բան ընելու տեղը չկայ:

ՉԱՐ. Սա մանիները... սա մանեակը... սա ապարանջանները...

ՏԱՆ. (Մէկիկ մեկիկ մտնելով առնելով ու մեկ կողմ ձգելով) Ատնք բան մը չեն արժեք, Տիկին. զիս պարապ տեղը կ'գրադեցնէք:

ՉԱՐ. (Բեկնոս նազանիով հարախելով զարդեղեմները) Ես այսօր շուկայ կ'երթամ, ասոնք, ամէնն ալ սակերչի մը ցոյց կուտամ... Չիս կասկածի մէջ ձգեցիք:

ՏԱՆ. (Թերեւ խառքեամբ) Տիկին Չարուհի. ասոնք ամէնն ալ սակերչի ձեռքէ անցած են արդէն. ոմանք բոլորովին կեղծ են. մէկ երկուքին ալ քարերը հանուած ու տեղը ապակիի կտորներ դրուած են. Գողցուած են պարզապէս:

ՉԱՐ. Բայց ասանկ գողութիւն անկարելի է...

ՏԱՆ. (Ընդմիջելով եւ ոտի տըրտըրով) Ի՛նչ որ է Տիկին. շատ խօսեցանք. հիմա ինձի ի՞նչ պիտի ըսէք. այսքա՛ն ժամանակ է կը խաբարէք զիս, տան վարձքը այսօր վճարելու էք այլեւս:

ՉԱՐ. Այո՛ բարեկամս. այսօր սա գոյքերէս բան մը ծախեմ և ձեր տան վարձքը վճարեմ որ, դուք ալ հանգիստ ըլլաք, մենք ալ:

ՏԱՆ. (Պոռաչով) Վերջացուցէ՛ք, Տիկին. այդ ծախեմ-փոխեմները. խաղի՞ էք ելեր ինձի հետ: Տան վարձքը պէտք է վճարէք, կամ առանց ժամանակ անցնելու ուրիշ տեղ մը

փոխադրուիք: Ես պէտք չունիմ Ձեզի պէս կասկածելի վարձակալներու:

ՉԱՐ. (Ձանազան կերպ գայարուձկնէր կ'ունենայ) Ո՛չ կ'աղաչե՛մ...

ՏԱՆ. (Շարունակելով անընդհատ) Քու կերպարանքդ արդէն ցոյց կուտայ քու ի՛նչ բարի ծաղիկ ըլլալդ. ո՞ւր է, հոս աղջիկ մը կար, մանկամարդ աղջիկ մը, որ ազնուութեան տիպար մը կ'երեւայ, Բագինին առջեւ քաշուած զո՛հ մը, Տիգրան Պողոսեանի աղջիկը, որուն ի՛նչ կերպով ձեռք անցուելուն և զայն ի՛նչ նպատակի գործածելնուդ մասին բառ մը չես կրնար ըսել:

ՉԱՐ (Գայարուելով) Կ'աղաչե՛մ, մի՛ գրգարատէ՛ր զիս, ան իմ հարազատ աղջիկս է:

ՏԱՆ. (Գրպանէն յրագիր մը հանելով) Եւ յետոյ ի՞նչ է աս խորհրդաւոր հատուածը, որ ստիկանութիւնը կ'զբաղեցնէ քանի՛ որ է ի վեր՝ անմե՛ղ մարդոց գլուխը փորձանքի մէջ խոթելով: Տե՛ս. կարգամ, մտի՛կ ըրէ:

Չերբակալման հրամանագիր հանուեցաւ, Լաբէ փողոցին անկիւնը սրնարանապէս Կավրիէի դէմ, որու խանութին մէջ ասկէ քանի մը օր առաջ օտարական մը յանկարծամահ եղած էր, ինչպէս գրած էինք արդէն:

Գիակին վրայ կասարուած՝ պաշտօնական ֆենուրիամբ հասկցուեցաւ թէ՛ յիշեալը սուրին մէջ խառնուած խիստ ազդու դեղով մը բուժու-

տրուած էր հինգ վայրկեանի մէջ անհնչացած էր, առանց բառ մը իսկ արտասանելու բովիմներուն:

Կը լսեմք նաեւ թէ՛ նոյն խանութին յանախորդներէն շատեր, ինքնաբերաբար դասարան դիմելով՝ իբր վկայ լուսելին պահանջած են, յայտարարելով թէ՛ իրենք հոն կը գտնուէին, երբ օտարականը, մոլորուն ֆայլերով եւ գրեթէ պաղած աչքերով, սրնարան մտաւ ու արձուի մը վրայ ինկաւ եւ մնաց անձաւթ, դեռ որ՛ եւ է ընկելի բերանը չի դրած:

(Լրագիրը կը ձգէ սեղանին վրայ) Կը տեսնե՞ս թէ՛ որքան միջոցներ ունիմ քեզ ստիկանութեան յանձնելու. և սակայն մաքուր արիւն Տը կրելուս համար է որ քեզի հետ այսքան մեղմօրէն վարուեցայ: Հիմա՝ Տիկին, հաւաքէ՛ ինքզինքդ. ամփոփուէ՛ և լա՛ւ խորհէ. քեզի երկու ժամ միջոց կուտամ որ, շուտ, կարասիներդ առնես ու հեռանաս իմ տունէս: Երկու ստիկաններով պիտի սպասեմ սա մօտակայ սրճարանը և ճիշդ 2 ժամ վերջը անոնց հետ միասին պիտի գամ տանս բանալին պահանջելու քեռէ: (Սիրվարդ ներս կը մտնէ)

ՉԱՐ. (Քոյի սենեակը երբայրով) Կեցէք պարոն. կ'աղաչեմ. սպասեցէք վայրկեան մը: Մի՛ երթաք:

ՏԱՆ. Ապահով եզիր օ՛րիորդ, քանի մը օր առաջ ինձի տուած նամակդ տեղը հասած է:

ՍԻՐ. (Խօշ շարժումով մը եւ խանդալատ

բռնի փոքրաշրջով) Իրաւ կ'ըսէք պարտն. ըսել է հայրիկս պիտի գայ:

ՉԱՐ. (Ներս և Տեղալ) Պա՛րտն, առէք սա 20 ֆրանքը, մնացածն ալ կը վճարեմ մէկ-երկու օրէն:

ՏԱՆ. (Դուրս ելլելով) Ես ստակի պէտք չունիմ Տիկին. երկու ժամէն կուգամ տանս բանալին առնելու կամ քեզ ձերբակալել տալու:

ՍԻՐ. (Նստեղանալով կ'երթայ պատուհանին առջին կը նստի)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՉԱՐՈՒՂԻ և ՍԻՐՎԱՐԳ

ՉԱՐ. Սիրվարդ. ա՛ղջիկս. չիմացա՞ր ի՞նչ ըսաւ տանտէրը: Երկու ժամուան մէջ պէտք է փոխադրուինք այս տեղէն: Գոնէ դո՛ւն մեզքըցիր զիս, զաւակս. գթա՛ վրաս, մխիթարական խօսք մը ըրէ, ի՞նչ կ'ըլլայ:

ՍԻՐ. (Խղձալի) Ե՛ս ալ մէկը կ'ուզեմ որ զիս մխիթարէ, տիկին: Բոլոր գիշերը ան կորսուած սրիկա՛յ Օննիկիդ արհաւիրքը քունս կը խռովէ, զիս խղզելու սպառնալիքով. ցորեկը այս բանտիս մէջ ըրած սրտազին աղօթքներս բնաւ լըսելի չեղան. աղաչանք ու պաղատանքներս օգուտ չըրին. եւ ալ ուժաթա՛փ եղայ. կ'երեւի թէ՛ մահս մօտ է:

ՉԱՐ. Ի՞նչ կ'ըսես հոգիս, խնթեցա՞ր:

ՍԻՐ. Օննիկին ըրած գողութիւններուն ես

տեղեակ եմ. որովհետեւ ես գիշերները չէ՛ի քնանար. չէի կրնար քնանալ. Ան կ'ելլար գիշերը, բանալին գրպանէդ առնելով՝ զարդեղէններդ կը խառնչակէր: Ես մէկ կողմէն վախէս չէի կրնար ձայն հանել, միւս կողմէն ատով կը յուսադրուէի թէ՛ քիչ ժամանակէն ունեցած գոյքերէդ պիտի զրկուիս, սնանկանաս ու ստիպուիս ազատ թողուլ զիս. որ հօրս գիրկը վերադառնամ: (Տկար շեշտով) Բռնաւորները, քեզի պէս արիւնկալի դաւաճանները թշուառութեան առջեւ միայն գլուխ ծռելու կը պարտաւորուին: Հիմա դուն սնանկացած ես, ա՛լ ուտելու հաց չունիս. զիս քեզի հետ ապրեցնելու միջոց չունիս: (Խրատական շեշտով) Ուստի քեզի կ'առաջարկեմ որ, թող՛ւս աս կեանքը, — հօրս սեղանին աւելցուկները քեզի պէս քանինե՛ր կը կշտացնեն — երթանք Պօլիս, բարեխօսեմ հօրս մօտ, որ քեզի գէմ վրէժխնդիր չըլլայ այս արարքիդ համար: Անիկա բարի է, հայրս անսահման կերպով բարեսիրտ մարդ մ'է. խօսք կուտամ քեզի որ քեզ վարձատրել տամ հայրիկիս, երբ զիս անվաս կերպով իրեն վերադարձնես:

ՉԱՐ. (Հեկեկալով) Ա՛տ քու լեզուներդ կ'ուտեմ զաւակս. ա՛լ բաւական է, ալ բաւական է. Դո՛ւն ալ օր մը մայր պիտի ըլլաս. կնոջ մը հոգին, մօր մը սիրտը այդպէս չեն ճմլեր քարի տակ: Դեմքն ձեռքերուն մէջ առած՝ կ'իջնայ սրտին վրայ եւ կուրայ դաւնապէս:

ՍԻՐ. (Անհոգ կերպով պատահանէն դիտելով ու հեգնելով) Կնա՛յ մը սիրտը չե՛ն ճմլեր քարի տակ. հօք մը սիրտը կարելի՛ է ստնակօխ ընել. ինծի պէս մայրազուրկ աղջիկ մը ներելի՛ է հօբմէն ալ զրկել, բայց կնա՛յ մը սիրտը՝ չե՛ն ճմլեր եղեր քարի տակ...

ԶԱՐ. (Հեկեկանեմանովը կ'ընդմիջէ Սիրվարդին խօսքը)

ՍԻՐ. (Պահ մը լուրջ վերջ ինքնիրեն) Որ՛չափ հետաքրքրական պիտի ըլլար, որ ինծի պէս աղջիկ մը ունենայիր ու դային զայն ո՛ր եւ է միջոցով ձեռքէդ յափշտակէին եւ քեզ բա՛ցը թողէին... անգո՛ւլթ, անխի՛ղճ կին. պիտի կըրնայի՞ր արդեօք ապրիլ այն ատեն: Ինչպէ՛ս կը դիմանայ հայրս այս վշտին... Ա՛խ. հայրի՛կ: (Այլերը արեւով պահ մը լուռ կը մնայ անբարբ կը դիտէ պատահանէն: Հեռուն կը նստած մէկը ձանկնայու ջակեր կ'ընէ, Զարուհիին վրայ յաճախ գաղտնաբանի ազնարակներ ձգելով եւ յանկարծ ոտները գետնը ու ձեռքերը պատահանը զարկելով կը պոսայ ուժգին)

Հայրի՛կ. հայրի՛կ...

ԶԱՐ. (Ար յարձակի վրան. անոր քերէն ու մագերէն քաշելով՝ ետ կ'աննէ պատահանէն) Ասդի՛ն եկուր, մի՛ պօռար, խենթեցա՞ր աղջիկ. ի՞նչ կ'ընես կոր:

ՍԻՐ. Բա՛ց դուռը. հայրի՛կս, հայրի՛կս եկաւ. բա՛ց դուռը. (Կնոջ քերտուն մեջէն ձո-

ղապրելով՝ մէյ մը դուռը, մէյ մը պատահանը կը վազէ, գոչելով անդադար եւ աղէկսուր)

Հայրի՛կ. հայրի՛կ:

ԶԱՐ. (Կ'արգիլէ զայն եւ կը ջանայ լռեցնել. իսկ Սիրվարդ. զգիսած ու ձարահաս՝ պատէն կը քաշէ ասճանակը. Զարուհի կը բռնէ անոր քերը. ասճանակը կը պարպոյն օդին մէջ ու ձեռքէն կ'իջնայ գետնին: Այս միջոցին դուրսի դրան ուժգին հարուածներ կը տեսնուին. ձարահասիներ կը լսուին անկէ. դուռը կոտորելով կը բացուի եւ Տիգրան կը մտնէ ներս. միևնրէն մայր եւ աղջիկ կը մարտնչին զիրկրկնիստն:

ԶԱՐ. (Անուսինը տեսելովն՝ կը փոռի գետնին շանքահար)

ՀԱՅՐ ԵՒ ԳՈՒՄՅՐ (Զիրար կ'ողջագորտեն «ՀԱՅՐԻ՛Կ. ԶԱՐԻ՛Կ» բառերը կ'արձագանգեն անդադար:) (Ներս կը խուժէն երկու ոտքիսններ եւ ծանկերը):

Գ. ՏԵՍԵՐՈՆ

ՆՈՅՆԻ, ՏԻԳՐԱՆ, ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ և ՏՍԵՏԻՐ

ՈՍՏԻԿ. (Ներս մտնելով) Կեցէ՛ք, կեցէ՛ք, կառաջա՛ծ սիրահարներ. նա՛խ ստուգենք թէ այս զէնքը որու՞նն է հոս, եւ թէ այս ինկած դիակին հերոսն ո՞վ է: Ո՞վ պատճառ եղաւ այս կընոջ իյնալուն:

ՏԻԳ. Ե՛ս. պա՛րտն, ես:
ՍԻՐ. Ե՛ս, Ե՛ս...

ՈՍՏԻԿ. (Պաշտօնակցին ողորդում) Գրէ՛ ուրեմն պարո՛նն ոստիկան: (Միւս ոստիկանը գրեջ կ'սկսի)

Փարի՛ց, Մեռալրի փողո՛ց, թիւ 15 սան մէջ: օսարական մը եւ գեղեցիկ ու մասշաւտ աղջիկ մը, մէջ սեղն անճունչ ինկած (Զարուհիին դէմքը նկատելով) իբր 35 տարեկան կին մը: Պաշտօնեաները գէնֆի ձայն առնելով ներս մտան նոր կոստում դռնէն: Նախնական փնտրութեան մէջ սոյն երկու անձերն ալ առանց դժուարութեան խոստովանեցան թէ՛ ինկած կնոջ մահուան պատճառն իրենք են»: (Դատնարով Տիգրանին) Յանտն օրինաց կը ձերբակալեմ զՁեզ Պարո՛ն:

ՍԻՐ. Ո՛չ պարոն. հայրս անմե՛ղ է:

ՈՍՏԻԿ. Ինչպէ՛ս... Ձեր հա՞յրը:

ՏԻԳ. (Մտնելով արեւմտ) Ինձի՛ նայեցէք պարոն. պահականոց երթանք, հոն արդարուրու թիւնը երեւան կուգա՛յ:

ՈՍՏԻԿ. Ուրեմն պէտք է ստոյգ կերպով խոստովանել թէ՛ այս գէնքը սրու՛նն է եւ ո՛վ դորժածեց գայն այս խեղճ կնոջ վրայ:

ՍԻՐ. Պա՛րոններ. այդ գէնքը այս տունին կը պատկանի, և թէ ես՛ պարպեցի զգայն: Հայրըս անմեղ է:


ՈՍՏԻԿ. Ուրեմն օրիորդ. ձե՛ր խկ խոստովանութեամբ, դո՛ւք ալ կը ձերբակալուիք: (Ոստիկանները կը հասնին ու քետեռէն կը բռնեն)

ՍԻՐ. Բայց ո՛չ, ոչ, ես յանցանք չունի՛մ: (Կ'սկսի շալ):

ՉԱՐ. (Յանկարծ ոսֆի ելլելով) Մի՛ տանիք աղջիկս, հոս ո՛չ յանցանք կայ, ոչ ալ յանցաւոր՝ **ՏԻԳ.** (Խրոխսաբար) Պարոններ. յանո՛ւն օրինաց կը պահանջեմ որ այս կինը ձերբակալուի:

ՈՍՏԻԿ. (Մեղով) Օ՛ն ուրեմն. հրամեցէք երեք-նիդ ալ պահականոց:

ՏԱՆ. (Զարուհիին դէմը կ'անցնի ու յարգական, շուրջ խոնարհուրիսն մը ընելով) Տանս բանալին աս՛ւր Տիկին:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Կ. Պոլիս, Բերա, փողոցին մէջ. ձիւն կը տեղայ. երկու կողմը տուներ և դռներ կ'երևին:



Ա. ՏԵՍՈՒՐՈՆ

ՁԱՐՈՒՀԻ, յետոյ ԱՆՅՈՐԳՆԵՐ

ՁԱՐ. (Յևցոյնէր հագած, դանդաղ քայլերով, յաճախ հագարով և ծանր ու վշտագին արտասանութեամբ) Ա՛խ. ամենագէտ Աստուած. գիտես անշուշտ թէ ինչո՞ւ համար ապրիլ կ'ուզեմ տակաւին. ը՛հը, ը՛հը... այս թշուառ վիճակիս մէջ, ուր կեանքը ծանր բեռ մը եղած է ինծի: Ծա՛տ անգամ մտքէս անցուցի անձնասպան բլլալ. բայց զաւկիս սէրը, երբեմն զայն, փողոցը՝ կառքին մէջ կամ զբոսատեղի մը, տեսնելու երջանկութիւնը ոյժ կուտայ ինծի և՛... ապրիլ կ'ուզեմ. ը՛հը, ը՛հը: Ամուսնէս լքուած, մարդոցմէ՛ ատուած, այս անարգալից վիճակիս մէջ ապրի՛լ... բայց աղջկանս երջանկութիւնը տեսնել ինծի մեծ մխիթարու-

թիւն մ'է: Հոգ չէ՛ թէ ես՝ անօթի՛ ալ մնամ օրերով... պիտի դիմանա՛մ, պիտի հանդուրժե՛մ, պիտի տոկա՛մ: Օ՛ր մը, հարկաւ բղձալի օ՛ր մը, Աստուած գո՛ւթ պիտի տայ ամուսնիս, որ թոյլատրէ աղջկանս՝ ինծի «Մայրիկ» բսել: Մայր եղայ. բայց մայր կոչուելու ամենամեծ փառքէն դրկուեցայ: Ահա իմ ամենէ՛ն մեծ ցաւըս: (Թաշկիկնակով այլերը արբերով) Աստուած իմ. պիտի բսեմ թէ էրիկ մարդոց սիրտը քա՛ր է, քա՛ր...: Գիտէ՛ թէ յանցանքիս վրայ կը զլլամ. գիտէ՛ թէ միջոց չունիմ ապրելու. ա՛լ ոյժ չունիմ ճակատագրիս դէմ մաքառելու: Յաղթուա՛ծ եւ ընկճուած, մութացկանի ցընցոտիներովս, կ'երթամ դուռը ալ կ'առնեմ, հոգիս հատորը վայրկեան մը գէթ տեսնելու յուսով, կոշտ ու կոպիտ ծառան զիս ապտակել կ'սպառնայ, մինչ ամուսինս իր աղջկան երկնատուր շնորհներուն վրայ կ'զմայլի. աղջիկս՝ հօրը վրայ կը գուրգուրայ ու զիս կ'ուրանայ: Յաւը սիրտս կը խոցէ, ցուրտը մարմինս կը բզըբտէ ու ամէն կողմէն ականջիս կը հնչէ «Աստուած տայ. Աստուած ողորմի»: (Ձիւն կը տեսնուի. հոյսակոյտ ու զարագակն ձեռներէն բռնած՝ ւարդիկ կ'անցնի իմ կնիքէն, անցնի կիներ անսարքեր)

ՄԷԿԸ. Օ՛, այս ցուրտի՛ն շիտակը... պարահանդէ՞ս կ'երթաս, աղուոր աղջիկ: (Կը մեկնի)
ՄԻԻՍԸ. Սիրո՞ւն աղջիկ. առա՛ջ քալէ, շուտ քալէ, սիրունս: (Կ'անցնի):

ՈՒՐԻՇ ՄԸ. Ինձի՛ նայէ. ետեւէ՛ս եկուր տի-
կին: (Կը հեռանայ)

ՈՒՐԻՇ ՄԸ. Աս գիշեր տե՛ղ մը երթանք-չը-
ւարճանանք սիրունս. աս ցուրտին ի՞նչպէս կը
գեգեբրիս փողոցները: Երթա՛նք ազուորս. եկուր
նայիմ՝ (Թեւը մտնելը կը փորձէ)

ՁԱՐ. Հե՛ռացէք ինէ, վա՛տ էրիկ մարդեր.
(Մարդը կը փախի) Այ բաւական է՛ որքան խա-
զալիկ եղայ ձեզի պէսներուն: Տասնը հի՛նգ տա-
րի է որ կը քաշկուտուիմ կոր. ձե՛ր զգացում-
ները՝ գութի՛, ողորմութեա՛ն, կարեկցութեան
ըլլալէ հեռու՝ ուրիշ բանե՛ր մըն են: Ամբո՛ղջ
օրուան գեգեբումիս մէջ եթէ պեսերով մար-
դու բնա՛ւ չի հանդիպիմ՝ աւելի՛ գո՛հ կ'ըլլամ...

Բ. ՏԵՍՍԵՐՍ

ՁԱՐՈՒՀԻ և ԿԻՆ ՄԸ, յետոյ ՄԱՔՐՈՒՀԻ

ԿԻՆ ՄԸ. (Դուռն իջած) Եկո՛ւր. խեղճ կին.
աս հագուստներն առ՛. աս ցուրտին չի մնիս.
հիւանդ չըլլաս:

ՁԱՐ. (Հագուստներն առնելով) Աստուած, իմ
արկածներէս պահէ Ձեզ, Տի՛կին:

ՄԱՔ. (Ուրիշ դրան մէջ) Դուն բարի կի՛ն մը
կ'երևիս: Պատուաւոր կին մը, այդ երիտասարդ
հասակի մէջ, մանաւանդ երբ գէմքի այդ բը-
նական գեղեցկութիւնն ալ ունի, այդպէս չի՛
կրնար թափառել ասդին-անդին՝ առանց վը-
տանդի կամ անուանարկութեան: Տեսա՛յ պա-

տուհանէն քեզ մէկ-երկու անգամ, երբ քեզի
մօտենալ ու քծնիլ փորձող էրիկ մարդիկը կը
նախատէիր և անոնցմէ հեռու կը փախչէիր,
իրբև թէ անոնք անձնական թշնամիներդ ըլ-
լային: Արդարեւ այդպիսիները սխտրիմներ են
կնոջական պատուին, և ազտ ու արատ բերող՝
իդական սեռին: Բայց և այնպէս խե՛ղճ կին.
այդ թափառական կեանքի մէջ, չքաւորութեան
և կարօտութեան դէմ, կրնայ ըլլալ որ փոր-
ձութեան ենթարկուիս ու վրայ տաս պատիւդ,
որուն յարգը պէտք է գիտնաս. առանց անոր
չարժեր ապրիլ: Կնոջ մը ամենէն մեծ օժիտն
ու հարստութիւնը այն է: Իսկական դրամագը-
լուիսը մեր սեռին, պատուաւոր կենցաղն է.
անձեռնմխելի՛, եթէ կը հաճիք:

ՁԱՐ. (Կնոջ երեսին նայելով, դողդոջուն ու
ապշահար՝ կը հսկայ) Ը՛ն՛ը, ը՛ն՛ը,

ՄԱՔ. (Շարունակելով) Ըստ իս, աւելի աղէկ
կ'ընես թէ որ ինքզինքդ աշխատութեան տաս,
աշխատութիւն, որ մէկ կողմէ քեզի ապրուստ
ու հագստ հայթայթէ, միւս կողմէ պատիւդ
պահպանէ, եթէ փափաքող ես. եւ յետոյ աշ-
խատութիւնն է որ կրնայ մոռցնել կամ ամոքել
ցաւերդ, զորս կ'ենթադրեմ թէ ունեցած ես
կամ ունիս գոթազգաբար:

ՁԱՐ. (Ընկճուած մայնով) Օրիս՛րդ... Տի-
կին. դու հրեշտակ մ'ես թէ առաքելուհի...

ՄԱՔ. (Ընդմիջելով) Ինչպէ՛ս. քեզի պէս վըշ-
տակիր կի՛ն մըն եմ: Պատուոյս համար առաւօ-

տէն մինչև իրիկուն և գիշերուան մեծ մասն ալ կար կարելով կ'ըբազիմ, ամոքելու համար անըզգամ ամուսնոյս պատճառած վիշտերը: Եթէ չաշխատիմ, դժբաղդ ճակատագրիս հետեւանքով կրած վիշտերս կը կրծեն զիս ու կը հատցընեն: Եթէ չաշխատիմ, տանս ու ընտանիքիս պատիւն ի՞նչպէս պաշտպանեմ, որուն դադարիս անգամ չունի ամուսինս, և ասեղիս ծայրովը ձեռք բերած քիչ մը դրամս գինեատուն կը տանի ու ցեխերու մէջ տապալակելով տուն կը դառնայ: Թէոր ես չաշխատիմ, ո՞վ պիտի հոգայ տղուս պէտքերը, որ, դպրոց երթալու համար, սակաւին մէջ անպատճառ պտուղ ալ կ'ուզէ ամէն օր:

ՁԱՐ. Միթէ բաւական գործ ունի՞ք Տիկին. զիս ալ Ձեզի հետ շահելով ապրեցնելու համար. երկուքնի՞ս ալ դժբաղդ ենք. երկուքնի՞ս ալ ճակատագրի առջև դոհուած արարածներ ենք: Միայն թէ՛ քու դժբաղդութեանդ պատճառը դուն չե՛ս եւ հետեւաբար հաւանական է որ կարենաս դարմանել ու սրբագրել ճակատագիրդ. մինչդեռ ե՞ս... ես ի՞նչս եմ պատճառ կործանմանս եւ ամէն յոյս կորսնցուցած եմ աշխարհիս վրայ: Ապահով եղիք Տիկին. ես վատ չե՛մ, այլ միայն անխոհեմ մը, որ իր ապառաժի վրայ հաստատուած տունը, աւազի վրայ փոխագրեց, օտարներուն խարբբայ խորհուրդներուն անսալով: Յանցանքը իմս է. չեմ կրնար

մեղադրել ուրիշները. (Գլուխը կախելով) հասկըցայ սխալս... կը զղջամ... թշուա՞ն եմ:

ՄԱՔ. (Ձեռքէն բռնելով) կը ցաւիմ վրագ. կը մեղքնամ քեզ. կը տեսնեմ թէ՛ դուն ինէ՛ աւելի դժբաղդ ես Տիկին. պէտք է օգնեմ քեզի:

ՁԱՐ. (Ձեռքը հարկուրելով) Շա՛տ ազնիւ էք, Տիկին: Աստուած՞ զրկեց Ձեզ:

ՄԱՔ. Խօսք կուտամ ո՞ր քեզ քովս առնեմ, քրոջ պէս միասին աշխատինք, ու, ձեռք ձեռքի տուած՝ մեր անողոք ճակատագրին դէմ մաքառինք. կ'ընդունին՞:

ՁԱՐ. Այո՛, կատարե՛լապէս: ՄԱՔ. Շա՛տ աղէկ, ուրեմն վե՛ր ելէք. դուք իմ մանկիկիս քով, որ վերը կը քնանայ. ես երթամ հիւանդապահութեան գործ մը կայ, վրաս առնեմ: Դուն գիշերը կը հսկես հիւանդին, ես ալ ցորե՛կը, չը՛լար:

ՁԱՐ. Ինչո՞ւ չէ: Ի՞նչպէս որ կ'ուզէք: ՄԱՔ. վե՛ր ելէք ուրեմն: (կը մտնեն ներս. վայրկեան մը յետոյ Մաքրուհի գլխուն շաղ մը առած դուրս կ'ելլի:)

ՁԱՐ. (Դրան մէջ երեւնալով) Բայց մոռցաք ըսելու թէ՛ ու՞ր կ'երթաք հիմա. վասնզի թէ որ ձեր ամուսինը գայ. կամ ուրիշ պատճառով մը ձեզ տեսնելու պէտք ունենամ...:

ՄԱՔ. Տիգրան Պօղոսեանի տունն եմ: Աղջիկը ծա՛նք հիւանդ է. կը մեռնի կ'ըսեն...

ՁԱՐ. (Ընդմիջելով դուրս կը նետուի խեղալեղ) հիւանդ է, Սերվա՞րդը:

ՄԱՔ. Այ՛, կը ճանչնա՞ս միթէ:

ԶԱՐ. (Ինքնիրմէն ելած յարաշարժ երեւոյթով)

Աղջիկս... Սիրվարդը... հիւանդ... կը մեռնի...
ո՛չ չպիտի մեռնի... (կը վազէ կ'երբայ)

ՄԱՔ. (Ինքնիրմէն) Խեղճ կին. իր այս ինկած
վիճակին մէջ երախտագիտութեան ասպացո՛յցը
կուտայ: Ո՞վ գիտէ, կ'երեւի թէ ազնուասիրտ
օրիորդը աս կնոջ ալ բարիքներ բրած է:

(Ետ կը դառնայ, ներս կը մտնէ և դուռը կը
զոցէ:)

Գ. ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՆԻԿ և ՄԱՔՐՈՒՂԻ, յետոյ կին ՄԸ և ԶԱՐՈՒՂԻ

ԱՆՆԻԿ. (Գրոխը շարձելու ծածկած կը հասնի
Մաքրունիկն դուռը կը զարնէ. նա կուգայ հոն)
Աստուծո՛յ սիրուն, ու՞ր մնացիր. երե՛ր, անգամ
ետեւէդ մարդ զրկեցի, տակաւին տեղէ՛դ չես
շարժիր: Հիւանդը շատ ծանր է. բժիշկներն
եկան գօնասիւլթօ կ'ընեն. ձեռքերս, ստրքերս գո-
ղերու մէջ են. գիտե՞մ որ խեղճ աղջիկը աս
հիւանդութենէն չպիտի կրնայ ազատիլ, բայց
մենք ալ մեր ձեռքէն եկածը չի խնայե՛նք:

ՄԱՔ. Նե՛րս հրամէ Տիկին. նե՛րս եկուր որ
ըսեմ:

ԱՆՆԻԿ. Ի՞նչ կ'ըսես հոգիս, ներս գալու ժա-
մանա՞կ ունիմ: Ե՛նչու ըրէ, երթանք՝ սա հի-
ւանդին քով գտնուինք:

ՄԱՔ. Աննիկ հանրմ. շիտակը ես մինակս ատ

գործը չ'պիտի կրնամ վրաս առնել. ես հոս
մարդ չունիմ. տղաս որո՞ւ թողում:

ԱՆՆԻԿ. Էրի՞կդ ուր է որ:

ՄԱՔ. Էրկանս հոգի՛ն առնէ Աստուած. անոր
վտանահովի՞ւն կ'ըլլուի. չե՞ս գիտեր անոր ին՛չ
անշնորհք ըլլալը: Հիմա ո՞վ գիտէ որ գինե-
տունն է և ին՛չ վիճակի մէջ:

ԱՆՆԻԿ. Հոգի՛դ սիրես, չտանին վրայ ալիւր
մի՛ փռեր: Եկուր երթանք՝ սա հիւանդին քով
կեցիր, գիտե՛ս որ Տիգրան էֆէնտին մէկի տեղ
երկո՛ւ վճարող մարդ է. քու աս աղէկութեանդ
տակը չի՛ մնար ան: Մարդ ըսածդ ասանկ նեղ
օրի՛ն պէտք է:

ՄԱՔ. Այ՛, Աննիկ հանրմ. Տիգրան էֆէն-
տին ես նոր չ'պիտի ճանչնամ. թէ՛ անոր և թէ՛
Սիրվարդին ինձի ըրած բարիքները չեմ՝ կըր-
նար ուրանալ. սա՛ կայ որ՝ գիշերը չեմ՝ կրնար
կենալ. տղայ ունիմ. չ'ըլլալիք էրիկս ալ չե՛ք
կրնար երեւակայել թէ ի՛նչ տեսակ փորձանք
է իմ գլխուս: Աստուած հեռու ընէ...

ԱՆՆԻԿ. Է շատ աղէկ, գա՛ն մի՛նակ ցորեկը
կեցիր. գիշերուան համար ալ հարկաւ ուրիշ
մէկը կը գտնե՛նք: Քու գիտցածներուդ մէջ
ատանկ կին մը չի կա՞յ: Ո՞վ ըլլայ՝ ըլլայ. մէկը
յարմարցուր:

ՄԱՔ. Քիչ մը առաջ կին մը զրկեցի ձեր
կողմը. հասի՛ր ետեւէն, անիկա վա՛ր գիր. ես
այ հիմա կուգամ պէտք եղածը կը կարգադ-
րենք: Ան թող գիշերները հսկէ, ես ալ ցո-
րեկները: Զը՞լար:

ԱՆՆԻԿ. Կ'ըլլա՛յ, Կ'ըլլա՛յ աղջիկս. շատ
աղէ՛կ Կ'ըլլայ: Եկու՛ր մէկտե՛ղ երթանք:

ՄԱՔ. Կ'նա՛ մայրիկս, ես հիմա կուգամ,
(Աննիկ կը սեկնի փռքով) Քանի որ խօսք տուի
կուգամ:

Կին ՄԸ. (Դիմացի դուռը իջած) Ինձի նայէ՛,
ատ հիւանդը ո՞վ է արդեօք:

ՄԱՔ. Տիգրան Պօղոսեանի աղջիկը. կը ճանչ-
նաս. Սիրվարդն է:

ՆՈՅՆ Կին. Մեր տղթորը գիշերը հոն էր,
Կ'ըսէ թէ՛ խեղճ աղջիկը թիֆօ եղած է, տա-
քութիւնը չափազանց շատ է. յոյս չկայ փրկու-
թեան. կը մեռնի:

ՄԱՔ. Վա՛խ Սիրվարդ վախ. շատ կը ցաւիմ:
Ի՞նչ բարեօրրտ, Ի՞նչ աղնիւ աղջիկ մ'է:


ՆՈՅՆ Կին. Այո՛, կը ճանչնամ. մե՛ղք. ան ինչ
ազուո՛ր աղջիկ է:

(Ներս կը մտնեն և դռները կը գոցեն):


ԶԱՐ. (Կը վերադառնայ և դուռը կը զարնէ
հապճեպով) Տիկին, ատիկի՛ն դերձակուհի:

ՄԱՔ. (Դուռը բանարով) Ի՞նչ ըրիք, հո՞ն
գացիր:

ԶԱՐ. (Հապճեպով) Ես գիշե՛րը պիտի հըս-
կեմ, դուն ալ ցորե՛կը: (Թախսանձեղով) Ա՛հ.
աղնիւ Տիկին. մայրազուրկ աղջկանս օգնու-
թեան հասէք. կը մեռնի՛ կոր, հասէ՛ք, կ'ա-
զաչե՛մ. աճապարեցէ՛ք. առէ՛ք իմ շունչս ու
հոգիս, տուէք զակիս որ ապրի՛...:



ՎԵՅԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Կ. Պոլիո, Բերա, Տիգրանին տան մէկ սենեակին մէջ
մահճակալ մը, բեմին կողմնակի պատերէն մէկուն քով
ի վեր դրուած: Մէջը պառկած կը քնանայ Սիրվարդ.
մարմին մօտ կեցած է Զարուհի, դեղն ու դգալը ձեռքը:



Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՆԻԿ, ԶԱՐՈՒՀԻ և ՍԻՐՎԱՐԴ

ԱՆՆԻԿ. (Ներս մտնելով) Բարի լո՛յս աղջիկս:
Ինչպէ՞ս է Սիրվարդ:

ԶԱՐ. (Գոհունակ շեշտով) Աստուծոյ բարին
Տիկին. շա՛տ աղէկ է, աս գիշեր բոլորովին
հանգիստ էր: Մէ՛կ անգամ միայն արթնցուցի,
դեզ տալու համար. շա՛տ ուրախ է, շատ. (Տը-
խար շեշտով) Հօրը աչքը լոյս. ալ աղէկցաւ:

ԱՆՆԻԿ. Ամենո՛ւս ալ աչքը լոյս. մենք ա-
մենքնիս ալ զաւկի պէս կը սիրենք աս աղջիկը:
Ինչու որ մայր չունի, որը կը սեպուի:

ԶԱՐ. (Վշտահար շեշտով) Կարծեմ թէ՛ ե՛ս ալ
զաւկիս պէս կը սիրեմ Սիրվարդը. զաւկի՛ս պէս
խնամեցի զայն. խանդակաթ մօր մը շունչո՛վը

տաքցուցի մինչեւ այսօր. հոգի՛ս քաղեցի,
մարմի՛նս քակեցի անոր առողջութիւնը վերա-
կանգնելու համար... (Թաշկիմակով ալիստը կը
արքէ) Աս իմ փառքս է:

ԱՆՆԻԿ. Այո՛, բոլո՛ր գիշերները ցոյց տուած
խնամքներդ, նոյնպէս միւս հիւանդապահին
ցորեկուան ունեցած ջանքերը, չենք կրնար
ուրանալ: Բժիշկները գեղ տունն, լայց դո՛ւք
գարմանեցիք հիւանդը. այնպէս որ այսօրուան
առողջութիւնը ձեզի կը պարտինք: Բնա՛ւ չի
թերացաք ձեր գործին մէջ. գիշերուան ո՛ր
ժամուն ալ ներս մտայ, քեզ այսպէս պատրաստ
գտայ պահակ դիմուորի մը պէս, մի՛շտ արթուն
կերպով ու անձնուէր ջանքերով հսկեցիր Սիր-
վարդին: Երախտապարտ բրիք մեզ...:

ՁԱՐ. Ձինքը ծնող մօրը պարտքը կատարե-
ցի Տիկին. այնպէս չէ՞:

ԱՆՆԻԿ. Աստուած վարձատրէ՛ քեզ իր առատ
գանձերով: Պէտք եղածը խօսած եմ՝ արդէն
հօրը՝ Տիգրան էֆէնտիին: Ձէք գիտեր, ի՛նչ
բարի մարդ է. ի՛նչ ազնիւ սիրտ մ՛ունի. իր
հոգիէն աւելի կը սիրէ իր զաւակը. Անոր սի-
րոյն համար, կը յուսամ թէ ան ձեր բարիքը
պիտի փոխարինէ էվէ՛լ էվէլօք: Դուն բնաւ
առիթ չունեցար կարծեմ՝ գինքը տեսնելու...:

ՁԱՐ. (Թաշկիմակը բերանը խօրտրով և ար-
ցունիք խղիւղով) Ո՛չ, ոչ:

ԱՆՆԻԿ. (Շարունակելով ակնկոյտ) Որով-
հետեւ գիշերները չէինք թողուր որ ան հի-

ւանդին քով գայ, առտուներն ալ դո՛ւ կանուխ
կը մեկնէիր ասկէց, երթալ քնանալու համար
անշուշտ: Եթէ կ'ուզես, շուտով մի՛ մեկնիր,
քեզ այսօր իրեն ներկայացնեմ որ...:

ՁԱՐ. (Փղձկելով) Ո՛չ, ոչ, չեմ ուզեր, ես
հիմա կ'երթամ. (Բոլորսիքը նայելով) Արդէն
լուսցաւ:

ԱՆՆԻԿ. (Դուրսէն զարթոցիլ ժամացոյցին
շոխիղը կը շառի) Տիգրան էֆէնտիին արթն-
նալու ժամանակն է. (Մեկնիլ փութալով) Դուն
հոգ մի՛ ըներ աղջիկս. ցոյց տուած անձնուի-
թիւնդ չպիտի մոռնամ. բոլոր կրած նեղու-
թիւններդ պիտի պատմեմ Տիգրան էֆէնտիին.
անիկա բարի է, աղնի՛ւ է և շա՛տ վեհանձն
հոգի մը ունի. քեզ պիտի վարձատրէ ուղածիդ
պէս... ապահով եղիր. միայն թէ մի՛ աճա-
պարեր, սպասէ՛ քիչ մը... մի՛ մեկնիր... (Կան-
չելու զանգակ մը կը զարնուի դուրսէն)

ՁԱՐ. Ո՛չ, տիկին ոչ, շնորհակալ եմ քեռէ.
ես կը մեկնիմ. չեմ կենար:

ԱՆՆԻԿ. (Դուսն մեջ կեկուտով) Է շա՛տ աղէկ.
ան ատեն ես քեզ կուզամ կը գտնեմ. ի՛նչ
նուէր որ առնեմ քու անունովդ, կը բերեմ
քեզի կը հասցնեմ. (Կը մեկնի)

ՁԱՐ. (Մակն, յուրջ) Քա՛ն և հինգ գիշեր է
որ անընդհատ կը հսկեմ զաւակս վրայ՝ միշտ
անձանթ մնալով ամէնուն և հեռօ՛ւ կենալով
ամուսնոյ թափանցող աչքերէն: Փա՛ռք Աստու-
ծոյ. գիշերուան մայրական հոգածութեա՛նս և

ցորեկուան աղօթքներո՛ւս շնորհիւ փրկուեցաւ
 զաւակս մահուան ճիրաններէն: Բժիշկներ յայ-
 տարարեցին թէ՛ այլես ո՛չ հսկողութեան պէտք
 ունի, ոչ ալ դեղի-դարմանի: (Իեղև ու դգաղը
 մէկ կողմ կը նետէ) Օգտիօխութեան պիտի եր-
 թայ Սիրվարդս: Ալ պիտի զրկուիմ զաւակս տե-
 սութենէն. ա՛լ չպիտի կրնամ համբուրել աղ-
 ջիկս, սրտիս հատո՛րը: Ա՛խ, ես աս ցաւին չեմ
 կրնար գիմանալ, ա՛լ պէտք է մեռնիմ. և թող
 մեռնիմ, զաւակս երկրորդ անգամ կեանք տա-
 լու պատեհութիւնն ունենալէս յետոյ: Քանի՛
 քանի անգամներ համբուրեցի զաւակս, երբ
 զգայազուրկ էր, երբօր դիմացինը ճանչնալու
 կարողութիւնը կորուսած էր. բայց, հիմա ա՛լ
 չեմ կրնար շրթունքս մօտեցնել անոր անբիծ
 ճակտին և ո՛չ քնքոյշ այտերուն. կը վախնամ
 թէ անցեալէն վերյուշում մը կ'ունենայ իր
 մտքին մէջ ինծի գէմ... Ա՛հ, այս քնքուշ ձեռ-
 քը... (Զգուշանո՛ր եղանակով կը հաւքորե Սիր-
 վարդին դասակը որ դուրս նետուած է՝ վեր-
 մակին վրայ ակնոզապէս) Զաւակս... (Կ'ուրայ
 ինկիսինքն սխալելով, որ ձայնը չի լսուի, քաշկի-
 նակը այտերուն դրած) Ա՛խ զաւակս, հոգի՛ս...

ՍԻՐ. (Գլուխը վեր կ'ստնէ. այտերը կը բա-
 նայ խոշոր խոշոր փայրկեան մը Զարուհիին դի-
 տելէն յետոյ. նորէն կը գոցէ այտը եւ գլուխը
 կը դնէ բարձիկ՝ դարձեալ նոյն ձեւով):

ԶԱՐ. (Թաշկիկնակը այժիկ դրած կուրայ եւ չի
 տեսներ այս շարժումը):

ԱՆՆԻԿ. (Կ'երեւի բաց մնացած դրան մէջ.
 փայրկեան մը դիտելէ յետոյ, փոքրով կը հեռա-
 նայ ակնի, հաւանակաւնաբար տեսածը Տրգրա-
 նիկ հաղորդելու համար):

ԶԱՐ. (Այս գործողութեանց անգիտակ) Անու-
 շի՛կ զաւակս. մահը աչքիս բա՛ն մը չերեւիր.
 միայն թէ՛ այդ գեղանո՛յշ աչքերդ բանայիր
 և ինծի մէ՛կ անգամ «մայրիկ» ըսէիր: Ինչպէ՛ս
 պիտի թողում լսյսերու պէս զաւակս. ինչպէ՛ս
 կրնամ հեռանալ ասկէ... ա՛խ զաւակս: (Զգոյշ
 ֆայրերով սենեակին դուռը կը գոցէ և կը մօ-
 տենայ մահիճիկ և այտերը դարձած՝ շէշով,
 ֆակ թէ խօսելով) Արթնցնեմ քեզ զաւակս.
 (Խօսիլի թելը շփոթելու պէս) Արթնցնեմ քեզ,
 զա՛րկ. սպաննէ՛ դիս. մահացո՛ւր մայրդ. քենէ
 բաժնուելու անտանելի. չարչարանքէս փրկէ՛
 դիս Սիրվարդ...: (Զգաստ մայնով) Բայց ո՛չ.
 վատութիւն է աս... ազջիկս անոր չ'պիտի դի-
 ջանայ (Խրտակաւ շէշով) Պէտք է ճակատագրիս
 առջեւ խոնարհիմ, վայելեմ զաւակս, որքան
 որ կարելի է. և յետոյ՝ իր հօ՛րը՝ քարասիրտ
 ամուսնոյս թողում զաւակս. (Նորէն հաւքորելով
 դասակը) Ա՛խ զաւակս...:

ՍԻՐ. (Իբր թէ անգիտակցաբար շարժակերպ
 միւս քեւն ալ դուրս կը նետէ):

ԶԱՐ. (Ետ կը ֆաշուի փսխելու ձեւով)
 Արթնցա՛ւ... կ'արթննայ կոր... (Կրկին կը մօ-
 տենայ կը դիտէ) Այո՛, գա՛րձեալ քնացաւ. մեկ-
 նելու ժամս ալ հասաւ, (Ինկնիտէն գակզատելով)

Բայց չե՛մ կրնար բաժնուիլ, Ի՞նչ բնե՛մ, Աստուած ի՛մ: (Աղջկան դեմքին ծոկոյով հաւքորեցաւ պէս) Այ՛ մնաս բարով, Սիրվարդ. զաւակս ... հոգի՛ս ... կեա՛նքս ... (Ասիճանն արար կը շրտկուի եւ վերջին քափին հետ գոռիք դէպի ետեւ կիցնայ՝ վշտէն ընկճեալ: Գոռը կը բացուի, կը մտնէ Տիգրան ու դրան ետեւ կը մնայ արշած)

Բ. ՏԵՍՏՐՈՆ

ՏԻԳՐԱՆ, ՉԱՐՈՒՀԻ և ՍԻՐՎԱՐԴ

ՏԻԳ. (Պահ մը կը դիտէ Չարուհին, ու անդնայաւ անտերով ետ ետ կ'երթայ. մեղով ու ծակով) Դո՞ւն ... հոս Չարուհի: (Չարուհի անմայն դողդոջուն ու հեծկոյտն՝ անտերն երեսին՝ պսակաւ կ'անտեր կ'ընէ) Ի՞նչ գործ ունիս հոս (Բռնի զայրած բարկութեամբ) Ի՞նչ երեսով և Ի՞նչ իրաւունքով կը մտնես տունս ... դուն քու տունդ կործանեցիր,

ՉԱՐ. (Գոռուհար եւ անմայն կուրայ. գոռիք շարժելով վերէն վար)

ՏԻԳ. (Շարունակելով) Դուն քու աղջիկդ երեսի վրայ թողի՛ր. (Չարուհի՛ անցնալէս) Դուն քու ամուսինդ ստնակոխ ըրի՛ր: հի՛մա, ի՛մ տունէս, ի՛մ աղջիկէս, ի՛մ անձէս Ի՞նչ կ'ուզես կոր:

ՉԱՐ. Ա՛խ, բա՛ն չեմ ուզեր, (Թաշկիկնակը աչքին՝ կուրայ) Բա՛ն չեմ ուզեր:

ՏԻԳ. Աղէկ ուրեմն. ստա՞կ չունիս, ուզա-

ձի՛դ չափ, ուղածի՛դ չափ ստակ տամ քեզի, գնա՛, հեռացի՛ր աս տեղէն, ուրիշ քաղա՛ք մը գնա՛ և ուղա՛ժ կեանքդ վարէ՛. քեզի ո՞վ ինչ կ'ընէ:

ՉԱՐ. Չե՛մ ուզեր. ես բա՛ն չեմ ուզեր:

ՏԻԳ. (Թեքել ցատումով) Հապա ի՞նչ կ'ուզես:

ՉԱՐ. (Գոռիքը քեքել մը մէկ կողմ ծոկոյով ու անունը արտասուելով հաւքորակելով անկիտ հայեացքով) Այ՛ չի՛կս ...

ՏԻԳ. (Թեքել ցատում եւ բողբոջով) Մի՛թէ կարելի՞ քան է ատ:

ՉԱՐ. (Կերկերուն մայնով) Միայն թէ՛ թողու ուր, ե՛րբեմն երբեմն դամ զաւակս տեսնե՛մ:

ՏԻԳ. (Տիրաբար, շտակաւ արտասանութեամբ աստեղով) Ո՛չ. պէտք է մեկնի՛ս, հեռանա՛ս աս տեղէն. Ա՛մենեւին աղջկանդ էրեօր տեսնելիք չունիս: Հեռացի՛ր սրկէ, վատ. (Բարկութեան ակունկերը կը սեղմէ) հեռացի՛ր կ'ընեմ:

ՉԱՐ. (Ծնրադիր ու անունամբ պաղատելով) Տիգրա՛ն. գո՛ւթ ունեցի՛ր. ներէ՛ ինձի, կ'աղաչե՛մ ... ալ հերի՛ք է քաջածս, ալ բաւակա՛ն է:

ՏԻԳ. (Վրէժիւնորութեամբ գոռիք շարժելով) Ն երե՛մ ...

ՉԱՐ. (Եիս քեքել ու արդար բողբոջով մը) Գո՛նէ զակիտ տեսութեանէ՛ն մի զրկե՛ր բոլորովին:

ՏԻԳ. (Անկարեկիր եւ հպարտ) Ա՛մենեւի՛ն:

ՉԱՐ. (Չոր ու կտրուկ եւ սպառնական շեշտով) Ուրեմն իսպառ պէտք է բաժնուի՛մ զակէս:

ՏԻԳ. (Վճռական եւ հրամայական շեշտով) Տարակո՛յս չկայ. եւ հի՛մայ, ա՛նմիջապէս պէտք է որ դուրս ելլես:

ՉԱՐ. (Յուսահասութեանը խորիսացած՝ ոսփե եղելով) Բայց եթէ չելլե՞մ:

ՏԻԳ. (Սպառնական շեշտով, ծանր, յորջ եւ հասիկ հասիկ արտասանելով բառերը) Բռնի եւ խալտառակութեամբ կը վռնտեմ քեզ, ամէն մարդ կ'իմանայ վատութիւններդ եւ թէ աղջիկդ անգամ կ'սկսի քեզ անիծել. քանի որ անոր կենդանի նախատինք մը եղած ես դուն՝ այս հրեշտակին ծնած օրէն մինչեւ այսօր եւ տակաւին...

ՉԱՐ. (Բնդմիջելով, եւ անկապտեղի իրարումի մը պահանջելու համարձակութեամբ) Քանի որ ես աղջկանս նախատինք մըն եմ, թող որ վերջին անգամ համբուրեմ զաւակս, վերջին՝ Վճռաբարձր ըսեմ հոգիիս եւ երթամ ինքզինքս ծովը նետեմ ու իմ զաւկիս, իմ աղջկանս նախատինք բերող կեանքս դադարեցնեմ: (Կը մօտենայ աղջկան երեսը համբուրելու):

ՏԻԳ. (Գրկելով Չարուհիին՝ ասդին կը խշէ) Մի՛ մի՛ արթնցնեք զաւակս. (Սեղմուկ եւ յզգուշոս ձայնով) Ասդի՛ն եկուր կ'ըսե՛մ:

ՉԱՐ. (Առանց դիմադրելու ոյժ ունենալու, գոխը ետին ձգած, պաղատագիւն շեշտով) Չե՛մ արթնցնեք. շրթունքս դոնէ ձեռքին դպցնեմ:

ՏԻԳ. (Քաշելով Մի՛ յուզեր, կ'ըսեմ, զաւակս. մի՛ վրդովեք անոր հանգիստը. քաշուէ՛ սրկէ՛. կորսուէ՛ գնա. դժուրս:

ՉԱՐ. (Որովհետեւ Տիգրանի աղջկան դէմքը քաճակելու դիմում պատահար մ'եղած է, Չարուհի ձարահաս կը փարսի Սիրվարդի ոսփումն, գոչե-

լով աղէկսուր ու շարագիւն) Ա՛խ. զաւակս. հոգի՛ս... աղջիկս...

ՏԻԳ. (Ետ փառելու համար, զգուշութեամբ կը մտախփ մտնելով) Ասդի՛ն եկուր. ասդի՛ն եկուր, կ'ըսեմ յեղի՛:

ՍԻՐ. (Յակնարժ կը լուսի անկողնին մէջ, ձեռքը կը դնէ մօրը գլխուն, աչերը պաղատագիւն հօրը շտաւ՝ գրիկը մէկ կողմ ծռած՝ ամէնէն իղձալի երեսըրով ու շեշտով) Հա՛յ ըի՛կ. մի՛ վը ուրն տեր մա մաս:

ՉԱՐ. (Սիրվարդին փարելով խելայելոյ) Ախ զաւակս. հոգի՛ս...

ՍԻՐ. (Մօրը փարելով) Մայրի՛կ. մամա՛...
ՄԱՅՐ ԵՒ ԴՈՒՍՏՐ. (Իրար փաքսուած, մերք կը համբուրեն զիրար կարողին) Չաւակս... Մայրի՛կս... Հոգի՛ս... Մամա՛ս...

ՏԻԳ. (Աղջկան զարման միջոցէն միկելու աստիճանը սալած եւ անշարժ կը մնայ. աչերը ակնարկ կերպով շտաւ՝ մօր եւ աղջկան ողջագուրման: Տիգրանի դէմքին փայլ ամենախոր գաւի արտայայտութիւն մը միայն կը կարդացուի. ո՛յ մերժելու փառքիւնը կ'զգայ այդտեւ. եւ ոչ հաւանութեան լիշոյր կուտայ: Քարացած, կասարեալ արձան մը կ'ըլլայ. քեւերը կախ եւ գոխը բնական վիճակին մէջ՝ անշարժ:)



ՏԻԳՐԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ

ՏՌԱՍ

ՓՈՒՍԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՎԵՑ ԱՐԱՐՈՒԱԾ



Հետաքրքիր ընթերցողին կը յանձնարարուի կարգալ՝

Տիգրան և Զարուհի

Վեց արարուածով, տոամաթիք թատրերգութիւնը, որ ներկայիս նախընթացն է:

Հոն կը պատկերանան Սիրվարդի ճնողաց ծայրագոյն երջանկութեան տեսարանները, որոնց կը յաջորդեն ծայրայեղ թշուառութեան դառնագոյն բաժակները: Օտար թեւազրութիւնք, դաւեր ու թակարդներ, այնպիսի՛ բնական եզրանակով կուզան կը կնճռոտեն սիրակցորդ ամուսին կեանքը որ, անսիրձ երիտասարդութիւնը դժուար թէ կարենար զիմագրաւել կամ գէթ տոկա. դառնութեանց համբերատար ճակատագրով:

Ներկայիս մէջ Զարուհի կը պատկուի յաջողութեամբ: Նախորդին մէջ Տիգրանն է որ կը փառաւորուի. բայց յաղթութիւնը կը տանի Սիրվարդ՝ իր սիրոյն գերի ընելով իր հայրը և մայրը միանգամայն:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ



ՏԻՒՈՒՆ ԵՒ ԶԱՐԴՈՒՂԻ (Թասերգութիւն)

5 դր.



Մ Ո Մ Լ Ո Յ Տ Ո Ն



Հոգեւորութիւն (Մանկավարժական)

Կեղեցասմար (Տախտակալութիւն)

Կողբասմար

Գ Ի Ն 5 Ղ Ր Շ.



Պրոպագանդի

Ա Շ Ձ Ե Ա Ն Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Կ. 901, ԲՍ

Զամբակներ, 29

500

«Ազգային գրադարան



NL0354991

22887

80